878

338.98(47)
U-86

1934

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆ., ՄԻԱՑԵՔ։

338.98(47)
Մ-86



Վ. ՄՈԼՈՏՈՎ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՋԵԿՈՒՑՈՒՄ ՀԱՄ Կ (Բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVII ՀԱՍԱԳՈՒՄԱՐԻՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

338.98
Մ-86

2802-10

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք։

338.98(47)
Մ-86

Վ. ՄՈԼՈՏՈՎ

193

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1006
29044

ՀԱՄԿ(Բ)Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
1934 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԱՐՎԱԾ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

388

ԿՈՒՍԱԿԱՑ
ԳԵՐԵՎԱՆ

1934

38 - 57/1137

04.07.2013

32.294

Թարգմանիչը Գ. Աբելյան (5-51), Ց. Խաչատրյան (51-103), և Հ. Թուրշյան (103-143), Խմբագրիչը Ն. Մակինց (1-110), և Մ. Ամիրխանյան (111-143), տեխ. խմբ. Մ. Եփրիկյան
Սրբագրեց՝ Հ. Թուրշյան, գլավլիտ 7835 (բ)
Պ.Դ. հրատ 200, պատվեր 538, տիրաժ 30.000
Պետհրատի Տպարան

Հանձնված է արտադրության 3 ապրիլի
Ստորագրված է տպելու 13 ապրիլի

4866-91

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ցերկրորդ հնգամյակի խնդիրները» դեկուցման ներկա հրատարակության մեջ թվական տվյալները բերված են ուղղված ձևով, ըստ որում այդ ուղղումներն արված են ճշտությամբ համապատասխան յերկրորդ հնգամյա պլանի թեզիսների վերաբերյալ կուսակցության XVII համագումարի ընդունած ուղղումների:

Ինչպես հայտնի է, յերկրորդ հնգամյա պլանի թեզիսների վերաբերյալ XVII համագումարի հիմնական ուղղումը հնգամյակի համար վողջ արդյունաբերական արտադրանքի տարեկան 16,5% աճի սահմանումն եր՝ 18,9 տոկոսի փոխարեն, վորը նախատեսված եր թեզիսներում: Դրա համաձայն մի շարք ուղղումներ մտցվեցին արդյունաբերության առանձին ճյուղերում, վորոնք անդրադարձել են համագումարի բանաձևում՝ յերկրորդ հնգամյակի մասին: Բացի դրանից համագումարն առանձին ուղղումներ և մտցրել գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի հնգամյակներում: Թե վորոնք են այդ ուղղումներից գլխավորները, դա չարադրված է XVII համագումարին արված լրիվ հաղորդման մեջ՝ յերկրորդ հնգամյակի թեզիսների վերաբերյալ համագումարի հանձնաժողովի աշխատանքի մասին, վորը տեղավորված է առանձին բրոշյուրում:

Այստեղ կարիք չկա կանգ առնելու առանձին ուղղումների վրա, վորոնք այդ առնչությամբ արված են դեկուցման մեջ բերված աղյուսակներում և թվական տվյալներում: Դրա հետ միասին անհրաժեշտ եմ համարում նշել, վոր թվական տվյալների ուղղումները վոչ մի փոփոխություն չեն առաջացրել դեկուցման բուն տեքստում և նրանց մտցնելն արված է բացառապես հնչացնելու համար յերկրորդ հնգամյակի մասին կուսակցական համագումարի բանաձևերի ստույգությունը:

Վ. ՄՈԼՈՏՈՎ.

Ընկերնե՛ր, ընկ. Ստալինի հաշվետու զեկուցումը ամբողջ մի հաշվետվության չափ կուսակցության կենտրոնական Կոմիտեի անցյալ գործունեության մասին: Դա մի զեկուցում էր նաև մեր անելիքների մասին, սոցիալիզմի կառուցման հեռանկարների մասին, մեր հետագա աշխատանքի գծի մասին: Այս զեկուցման մեջ տրված է բոլանդակ հիմնականը՝ յերկրորդ հնգամյակում կուսակցության դիրքավորումը վորոշելու համար:

Յերկրորդ հնգամյակում մենք մեր առջև յերեք հիմնական խնդիրներ ենք դնում:

Ահա այդ խնդիրները:

Յերկրորդ հնգամյակի առաջին և միանգամանակ հիմնական Քաղաքական խնդիրն է՝

«Վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերին ու առհասարակ դասակարգերը, ամբողջովին վոչնչացնել դասակարգային տարբերություններ ու չհաղթահարած առաջացնող պատճառները, և հաղթահարել կապիտալիզմի մնացուկներն եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, դարձնել յերկրի աշխատավոր ամբողջ բնակչությունը սոցիալիստական անդատակարգ հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներ»(XVII կուսկոնֆերանս):

Յերկրորդ խնդիրն է՝ չարունակել բանվորական և կոլտնտեսական զանգվածների բարեկեցության վերելքը և բարձրացնել աշխատավորության սպառման մակարդակը 2 —3 անգամով:

Յերրորդ խնդիրն է՝ ավարտել ժողովրդական ամբողջ տնտեսության,—արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության,—տեխնիկական վերակառուցումը:

Այս երեք խնդիրներն անխզելիորեն կապված են միմյանց հետ և վորոշում են սոցիալիստական շինարարության եությունը յերկրորդ հնգամյակի ժամանակաշրջանում:

Ինչպես ասված է XVII կուսակոնֆերանսի վորոշումների մեջ՝ յերկրորդ հնգամյակի քաղաքական հիմնական խնդիրը հանդիսանում է դասակարգերի լիակատար վերացումը և միաժամանակ այն պատճառների վոչնչացումը, վոր դասակարգեր են առաջացնում: Այս խնդրագրումը բղխում է մարքս-լենինյան հիմնական այն դրույթից, թե սոցիալիզմը դասակարգերի վոչնչացումն է» (Լենին): Միևնույն ժամանակ՝ միայն այս կողմից, դասակարգային մակարածական տարրերի վոչնչացման և ժողովրդական անդր յեկամուտի ամբողջովին ալիսատավորության ու խորհրդային իշխանության տրամադրության տակ անցնելու կապակցությամբ և միայն, վոր հնարավոր և դնել բանվորների ու գյուղացիների նյութական և կուլտուրական մակարդակին արմատապես բարձրացնելու խնդիրը: Այս խնդիրների լուծումը պետք է հենվի ժողովրդական անտեսության հսկայական վերելքի և նրա տեխնիկական վերակառուցման վրա: Հենց այս պատճառով էլ ժողովրդական անտեսության տեխնիկական վերակառուցման ամբողջ վարժանքը դրված է վորպես յերկրորդ հնգամյակի տնտեսական հիմնական խնդիր:

Յերկրորդ հնգամյակի հիմնական այդ յերեք խնդիրը մենք այժմ կարողանում ենք դնել՝ հենվելով առաջին հնգամյակի հաջողությունների վրա, հենվելով նրա հաղթանակի վրա: Այս խնդիրների լուծումը նախապատրաստել են առաջին հնգամյակը և նախորդ սոցիալիստական ամբողջ շինարարությունը:

Առաջին հնգամյակի սկզբներում կապիտալիստական տարրերը մեր յերկրում դեռևս աննշան մեծություն չեին կազմում:

Ճիշտ է, կապիտալիստական տարրերի բաժինն արդյունաբերության մեջ դեռևս առաջին հնգամյակից էլ առաջ տարեցտարի իջնում էր և արդեն սրանից հինգ տարի առաջ աննշան էր: Իսկ խոշոր արդյունաբերության մեջ կապիտալիստական տարրերի բաժին արդեն այն ժամանակ ուղղակի չկար էր՝ կազմելով ամբողջ

խոշոր արդյունաբերության արտադրանքի վերաբերմամբ ընդամենը մոտ 1%: Հասկանալի է, վոր առաջին հնգամյակի վերջում կապիտալիստական տարրերի մասին արդյունաբերության մեջ արդեն խոսք անգամ չի կարող լինել:

Առևտրի մեջ առաջին հնգամյակի սկզբներին մասնավորը նույնպես արդեն ջլատված էր, և ապրանքաշրջանառության մեջ կապիտալիստական տարրերի բաժինը նկատելիորեն ընկած էր: 1928 թ. մասնավոր առևտուրը մանրածախ ապրանքաշրջանառության մեջ կազմում էր ընդամենը մոտ 23%: Կոոպերացիան ու պետական առևտուրն այնքան էլին իշխող դիրք գրավել, վոր արդեն առաջին հնգամյակի ընթացքում մասնավոր առևտուրը դրեթե ամբողջովին դուրս էր մղված ապրանքաշրջանառությունից: Սրանով չեմ ուզում ասել, թե մենք հնարավոր կհպատակ գլուխ ենք հանել առևտուրը կազմակերպելու խնդրից, բայց կապիտալիստական տարրերն առևտրից դուրս մղելու գործն արդեն այն ժամանակ մենք շատ հաջողությամբ կատարեցինք:

Ինչպես հայտնի է՝ ավելի դժվար խնդիր էր գյուղի կապիտալիստական տարրերի դեմ պայքարելը: Ընդհուպ մինչև առաջին հնգամյակի սկզբները մենք գյուղում ունեյինք ուժեղների և չունևորների չերտավորվելու յերևույթի մեծացում, և չարունակվում էր կուլակության աճումը: Միմիայն գյուղացիական հիմնական զանգվածի դեպի կոլեկտիվացման ուղին կատարած շրջադարձի կապակցությամբ էր,—իսկ սա տեղի ունեցավ առաջին հնգամյակի սկզբին միայն,—վոր հնարավոր եղավ դնել կուլակության, վորպես դասակարգի՝ վերացման խնդիրը: Ջնայած կուլակության հուսահատ դիմադրությանը՝ գյուղի կապիտալիստական տարրերի վերացման համար մղված պայքարը ծավալվեց ամբողջ ֆրոնտով, և յերկրորդ հնգամյակի սկզբներին գյուղատնտեսական վճռորոշ շրջաններում գյուղացիական զբաղվորա-միլիակ անտեսությունների կոլեկտիվացումը հիմնականում իրագործված էր, և սրանով էլ կուլակության դիրքերը խարխլվեցին: Գյուղում մենաշնորհատության դերն էլ արմատապես փոխվեց: Ներկա ժամս, յերբ կոլեկտիվացված են գյուղացիական տնտեսությունների յերկու յերրոր-

ղը, և կոլտնտեսությունները խորհտնտեսությունների հետ միասին ընդդրկում են հատիկային մշակույթների ցանքի ամբողջ տարածության 84,7%-ը՝ մենք իրավունք ունենք ասելու, որ մեր յերկրում կոլեկտիվացման գործը լիապես հաղթանակել է, որ կուլակության մնացորդները դատապարտված են մոտալուտ և վերջնական կործանման, իսկ դյուղացիական մնացած անհատական տնտեսությունների առջև բացված է միայն մի ուղի—աստիճանաբար կոլեկտիվացման ռելսերի վրա անցնելու ուղին:

Միայն նրանից հետո, յերբ մենք ձեռք բերինք այս ամենը յերկրորդ հնգամյակի սկզբներին, միայն նրանից հետո, յերբ սոցիալիստական տարրերը խորտակվեցին և լրիվոր գլխավոր զանգվածով հատակն անցան վոչ միայն արդյունաբերության ու առևտրի, այլև գյուղատնտեսության մեջ՝ միայն այս ամենից հետո մենք ի վիճակի յեղանք վորպես յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիր դնելու կապիտալիստական տարրերի և, առհասարակ, դասակարգերի լիակատար վերացման խնդիրը:

Այստեղ ձեռք բերված արդյունքները և մեր առջև դրված խնդիրները յերևում են հետևյալ աղյուսակից.

Սոցիալիստական ձևերի տեսակարար կշիռը ԽՍՀՄ տնտեսության մեջ (տոկոսներով)

	1928 թ.	1932 թ.	1937 թ.
Խոշոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ	99,0	99,93	100,0
Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ (նեղառյալ կոլտնտեսականների անհատական տնտեսությունները) . . .	3,0	74,7	100,0
Ցանքի բոլոր տարածությունների մեջ (նեղառյալ կոլտնտեսականների անհատական տնտեսությունները)	2,8	79,7	100,0
Գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման % -ը	1,7	61,5	100,0
Մանրածախ ապրանքաշրջանառության մեջ .	75,2	99,0	100,0
ԽՍՀՄ ժողովրդական յեկամտի մեջ . . .	44,0	93,0	100,0

Ձերկրորդ հնգամյակի վերջերին սոցիալիստական ձևերը տնտեսության բոլոր ճյուղերում մենաշնորհային դիրք կզբաղեն: Մեր յերկրի հասարակական-տնտեսական այն հինգ ձևից, վորոնց մասին խոսել է Լենինը նեպի սկզբներին, և հասարակական-տնտեսական այն յերկու ձևից, վոր դեռևս գոյություն ունեն ներկա մոմենտում՝ յերկրորդ հնգամյակի վերջերին մեզանում մի հասարակական-տնտեսական ձև կմնա՝—սոցիալիստական ձևը, և ժողովրդական յեկամուտն ամբողջովին ու լրիվին կլինի աշխատավորության տրամադրության տակ: Մեր յերկիրը, իրագործելով յերկրորդ հնգամյակի խնդիրները՝ դառնում է սոցիալիստական միաձույլ հանրապետություն: (Ծափեր):

Մենք մեր առջև խնդիր ենք դնում յերկրորդ հնգամյակի ընթացքում վոչնչացնելու այն պատճառները, վորոնք առաջացնում են դասակարգային տարբերություններ ու մարդը մարդուն շահագործելու յերևույթը:

Բայց վորո՞նք են այդ պատճառները: Այդ պատճառները մինչև այն ժամանակ են պահպանվում, քանի դեռ գոյություն ունի արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, քանի դեռ մեկն ունի արտադրության այդ միջոցները, իսկ մյուսը՝ չունի: Մենք գիտենք, վոր արդյունաբերության մեջ արտադրության միջոցները գրեթե ամբողջովին արդեն գտնվում են պետության ձեռքում: Գրեթե նույնն այժմ կարելի յե ասել նաև առևտրի մասին: Կասկած չի կարող լինել և այն մասին, վոր կոլտնտեսություններից դեռևս դուրս գտնվող և գյուղացիական տնտեսությունների մոտ մի յերրորդ մասը կազմող տնտեսությունները էլ յերկրորդ հնգամյակի տարիներին կանցնեն կոլեկտիվացման ուղին: Սրանով էլ հենց գյուղատնտեսության մեջ արտադրության միջոցները—մեքենաները և կենդանի ինվենտարը—կպատկանեն պետությանն ու կոլտնտեսություններին, և վոչ թե մասնավոր անձանց: Իսկ հաղը, ինչպես հայտնի յե, դեռևս 1917 թ. և ազդայնացված յեղել: Գյուղատնտեսության մեջ էլ վերջ տալով արտադրության միջոցների մասնավոր սեփականությանը և ամրապնդելով սոցիալիստական ձևերի դիրքերը (կոլտնտեսությունների, ՄՏԿ, խորհտնտե-

ությունների)՝ մենք վոչնչացնում ենք դասակարգեր ու չհամապատասխանող սեռահասնելը:

Ընդսմին՝ մենք խոսում ենք կապիտալիզմի մնացուկների հաղթահարման մասին տնտեսական և մասնավոր կյանքում, թե մենք անհրաժեշտորեն դեռ ինչպես հաշվի պետք է հաշվենք մարդկանց գիտակցության մեջ եղած այս մնացուկների հետ նույնիսկ կուսակցության մեջ: Անշուշտ կուսակցության մեջ այս մնացուկները ստիպված կլինեն ժամանակ առ ժամանակ ներքին հակասությունների առարկա դառնալու համար: Կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ հաղթահարելու խնդիրն առավել ևս անհրաժեշտ և ընդգծել աշխատավորության ամբողջ դանդվածի վերաբերմամբ: Այս տեսակի մնացուկների մեջ մենք չենք կարող չտեսնել դասակարգային թշնամու հենարանը, որը կենսունակ է և որը ներկայումս ամեն ինչ անում է, որ սոցիալիզմի գործը պայթեցնի, որ աշխատավորությանը դրկեցնի և վնասի: Անհրաժեշտ են պրոլետարական դիկտատուրայի ամբողջ ուժը, կուլտուրայի հսկայական աճումը և մասսաների մեջ կուսակցության ունեցած վոզջ ազդեցությունը, վորպեսզի ամեն կերպ արագացնենք այս մնացուկների վերացումն աշխատավորության միջից: Պայքարել այս մնացուկների աշխատավորության գիտակցության մեջ հաղթահարելու համար՝ նշանակում է պայքարել սոցիալիստական սեփականության ամրացման համար, վորպես մի սեփականության, վորը արդարան և անձեռնմխելի է մեր երկրում: Պայքարել այս մնացուկները հաղթահարելու համար՝ նշանակում է պայքարել ստեղծագործական վերաբերմունքի համար դեպի աշխատանքը, պայքարել դիտակից և աշխատանքային երկաթեակուռ կարգապահության համար, մրցակցության և հավակնոտության ծավալման

համար, պայքարել բոլոր և ամեն տեսակի դասակարգապորանների (լոդրների) և մեր աշխատանքը կազմալուծողների դեմ:

Այս խնդիրների և ամենից առաջ կապիտալիստական տարրերի ու ընդհանրապես դասակարգերի վերացման խնդրի իրագործումը պահանջում է ամեն կերպ ամրացնել պրոլետարական դիկտատուրան, նրա հզորությունը, նրա մարտունակությունը: Այս խնդիրների իրագործումը միաժամանակ պահանջում է ամրապնդել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը, վորի ամրացման հիմունքով և միայն հնարավոր մինչև վերջը հասցնել կապիտալիստական տարրերի և տնտեսական դասակարգերի վերացման գործը:

Այս և մեր երկրի բոլոր աշխատավորներին սոցիալիստական անդասակարգ հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներ դարձնելու ճանապարհը:

Առաջին հնգամյակում մենք խոշորագույն հաջողություններ ենք ձեռք բերել աշխատավորության նյութական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում: Բավական է մատնանշել այն, վոր վոչնչացել և գործազրկությունը, վոր բանվորների մեջ լիակատար վստահություն և ստեղծվել վաղվա որվա վերաբերմամբ, վոր վոչնչացել և գյուղացիության շերտավորվելը կուլակների ու չքավորների, և սրա կապակցությամբ դադարել և գյուղի աղքատացումը:

Բանվորական դանդվածների նյութական մակարդակի անշեղ վերելքը և գյուղացիական դանդվածների բարեկեցության արագ վերելքի համար այժմ ստեղծված նախադրյալները իրենց արտահայտությունը գտնում են աշխատավորության կենցաղային ու կուլտուրական պահանջարկների աճման մեջ: Հենց այս կապակցությամբ է, վոր կուսակցությունն ու կառավարությունը իրենց առաջ խնդիր են դնում՝ ծավալելու թեթև ու սննդի արդյունաբերության, այլև արդյունաբերության մյուս ճյուղերի ու գյուղատնտեսության աշխատանքը, ինչպես նաև ապահովելու աշխատավորության սպառման մակարդակը 2 —3 անգամով բարձրացնելը:

Ինչ է անհրաժեշտ այդ համար,

Նախ և առաջ՝ սրա համար անհրաժեշտ է ապահովել հումքով թեթև արդյունաբերությունն ու սննդարդյունաբերությունը և, նշանակում է՝ առնվազն յերկու անգամով բարձրացնել յերկրի գյուղատնտեսության ապրանքային արտադրանքը:

Յերկրորդ՝ սրա համար անհրաժեշտ է նշանակելիորեն ուժեղացնել մեր թեթև և սննդի արդյունաբերության արտադրական կարողությունները 2½ անգամով ավելացնել արդյունաբերության այս ճյուղերի արտադրանքը: Հենց այս է յերկրորդ հնգամյակի ծրագրի կարևորագույն մասը:

Ինչպես գյուղատնտեսության արագ վերելքի և թեթև ու սննդի արդյունաբերության ծավալման խնդիրը, այնպես էլ տրանսպորտի ամբողջ աշխատանքի արմատական բարելավման խնդիրը մեզ բերում կանդնեցնում են ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման հարցի առջև յերկրորդ հնգամյակում:

Ահա թե ինչու համագումարի վերաբերյալ թեզիսները խոսում են այն մասին, թե յերկրորդ հնգամյակի տնտեսական հիմնական և վճռորոշ հարցը ժողովրդական ամբողջ տնտեսության վերակառուցման ավարտումն է:

Մենք իրավունք ունենք դիտելու առաջին հնգամյակի արդյունքները վորպես մեր կուսակցության լենինյան քաղաքականության, յերկրի սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության մեծագույն հաղթանակ: Մենք իրավունք ունենք նույնպես ասելու, թե այն խնդիրները, վոր առաջադրվում են յերկրորդ հնգամյակում՝ ամբողջապես բղխում են նախորդ ժամանակաշրջանի հաջողություններից ու նվաճումներից և վկայում են այն մասին, վոր Սովետական Միության մեջ հսկայորեն աճել են սոցիալիզմի ուժերը և վոր կուսակցությունն ու բանվոր դասակարգն անհողդողդորեն համոզված են իրենց գործի հաղթանակին:

Նախքան յերկրորդ հնգամյակի խնդիրների ավելի կոնկրետորեն չարադրելուն անցնելը յես կանգ կառնեմ 17-րդ կուսկոնֆերանսի հարցերի դիրեկտիվների վրա: Այս դիրեկտիվների համեմատությամբ 17-րդ համագումարի վերաբերյալ թեզիսները տնտեսության առանձին ճյուղերի վերաբերմամբ մի չարք փոփոխություններ են ծրագրում: Դա ամենից առաջ վերաբերում է արդյունաբերական արտադրանքի համար յենթադրվող առաջադրանքներին: Կանգ չառնելով մանրամասնությունների վրա՝ միայն այսքանն ասեմ, վոր այս փոփոխությունները մաշաչափ անգամ չեն փոխում 17-րդ կուսկոնֆերանսի հիմնական դիրեկտիվորումը: Համագումարի վերաբերյալ թեզիսներում յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները ձևակերպված են լիովին համապատասխան 17-րդ կուսկոնֆերանսի վորոշումներին:

Համագումարին և վերապահված քննարկել ծրագրված փոփոխությունները և ասել իր վերջնական խոսքը յերկրորդ հնգամյակի վճռորոշ բոլոր առաջադրանքների վերաբերմամբ:

I

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՅԵՎ ՎԵՐԵԼՔԸ

Յերկրորդ հնգամյակի տնտեսական դիմավոր խնդիրը ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումն է և այս հիմունքով՝ յերկրի արտադրողական ուժերի հզոր ծաղկումն է:

Առաջին հնգամյակում արդեն արդյունաբերության ու գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման գործը նշանակելիորեն առաջ է գնացած յեղել: Մանր արդյունաբերությունը, մանավանդ մեքենաշինությունը հատատատակես վոտքի կանգնեց: Տեխնիկական վերազինումը գյուղատնտեսության մեջ կատարյալ հեղաշրջում առաջացրեց: Տեխնիկական վերազինումը ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում էլ չարժվեց: Ցավ, այնուամենայնիվ, ՄՍՀՄ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման միայն սկիզբն է դրված սրանով:

Միայն յերկրորդ հնգամյակում է, վոր իր ամբողջ ծավալով դրված է տեխնիկական վերակառուցման խնդիրը՝ արդյունաբերության բոլոր ճյուղերի, ամբողջ գյուղատնտեսության և տրանսպորտի բոլոր տեսակների վերաբերմամբ:

Ի՞նչ է նշանակում ավարտել ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը ՄՍՀՄ մեջ: Սա նշանակում է հասնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերաբերմամբ, —արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի վերաբերմամբ, —տեխնիկական այնպիսի վերազինման, որը նրանց դներ տեխնիկապես առաջավոր կապիտալիստական պետությունների մակարդակի վրա: Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը ՄՍՀՄ–ին զարգացման տեխնիկական մակարդակի կոմից դուրս է ցևերոպական առաջին երկրներից: Մղում է առաջին տեղը: Մղում է առաջին տեղը վոչ միայն տեխնիկայի մակարդակով, այլև արդյունաբերական արտադրանքի չափերով, նույնպես և ժողովրդական տնտեսության մի քանի այլ հիմնական ճյուղերի արտադրանքի չափերով: Խորհրդային Միությունը ցևերոպայի բոլոր երկրներից առաջ է քայլելու, բայց ժողտնտեսության մի չարք ճյուղերով դեռ հետ մնացած կլինի Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Այս ամենն իսկական փոփոխություններ է մտցնում ՄՍՀՄ և կապիտալիստական աշխարհի փոխհարաբերությունների մեջ ու հատարակական կերկու սիստեմի, —սոցիալիստականի և կապիտալիստականի, —պայքարը տանում է վեր դեպի նոր, դեպի ավելի բարձր աստիճան:

Առաջին հնգամյակում մեր երկրի վերելքը հիմնադրատրման բաղաքականությունն է եղել: Ինդուստրացման քաղաքականության հիմունքով, մի քաղաքականության, որով ապահովվեց հզոր ծանր ինդուստրիայի ստեղծումը՝ մենք հասանք ժողովրդական տնտեսության հանկարծական վերելքի:

Ցևերկրորդ հնգամյակում ինդուստրացման քաղաքականությունն իր արտահայտությունը գտնում է արդյունաբերության տեսակարար կշռի հետագա մեծացման մեջ ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքում: Այս կերևում է հետևյալ աղյուսակից:

Արդյունաբերության ևվ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ (տոկոսներով).

	1932 թ.	1937 թ.
1. Արդյունաբերությունը (ամբողջ)	76,8	78,0
2. Գյուղատնտեսությունը . .	23,2	22,0
Ընդամենը . .	100	100

Այսպիսով կերկրորդ հնգամյակի վերջին ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ արդյունաբերության արտադրանքը կազմելու է դրեթե 78%: Սա նշանակում է այն, որ ՄՍՀՄ կանգնած է լինելու աշխարհի ամենաինդուստրիալ երկրների—Գերմանիայի ու ՀՍՄՆ–ի մակարդակի վրա:

Ցևերկրորդ հնգամյա պլանով կոլտնտեսությունը նպատակ է դնում հնգամյակի վերջին 43 միլիարդ ռուբլուց հասնել մինչև 92,7 միլիարդ ռուբլու: Այս նշանակում է, որ կերկրորդ հնգամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքը պետք է ավելանա 2,1 անգամով, իսկ մինչպատերազմյան շրջանի համեմատությամբ՝ 8 անգամով: Այսպիսով մեր արդյունաբերությունը չարունակում է ամել իսկական բոլշևիկյան տեմպերով:

Այժմ արդյունաբերության ամման տեմպերի մասին: Ի տարբերություն առաջին հնգամյակից, երբ արտադրանքի պլանավոր դանդաղածը (մասսան) արտադրվում էր հին կամ նորացված ձեռնարկություններում, որոնց տեխնիկան արդեն յուրացված էր, կերկրորդ հնգամյակում արտադրանքի պլանավոր դանդաղածը նոր ձեռնարկություններն են տալու, որոնց յուրացումն առաջին շրջանում կապված է մի չարք նշանակելի դժվարությունների հետ: Սրանից հետևում է այն, որ նոր շինարարության խնդրի հետ միասին՝ բացառիկ նշանակություն է ստանում նոր տեխնիկան ու նոր արտադրությունները յուրացնելու խնդիրը: Այդ, սրանից հետևում է այն, որ արդյունաբերական արտադրանքի առաջին հնգամյակում ունեցած ամման տեմպերի հետ համեմատած (21—

22%)՝ արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը յերկրորդ հնգամյակում մի քիչ պակաս կլինեն (մինչև թվով՝ տարեկան 16,5%)։

Մյուս կողմից՝ չպետք է մոռանալ, վոր արդյունաբերական արտադրանքի աճի յուրաքանչյուր տոկոսը յերկրորդ հնգամյակում անհամեմատ բարձր կլինի առաջին հնգամյակի աճի համապատասխան տոկոսից։ Ցեվ լրոք արդյունաբերության արտադրանքի աճման մի տոկոսն առաջին հնգամյակի վերջին դնահատվում եր 386 մլն. ռուբլի, այն ինչ՝ արտադրանքի աճի մի տոկոսը յերկրորդ հնգամյակի վերջին հավասար կլինի 770 մլն. ռուբլու։ Ա՛հա թե ի՛նչն է պատճառը, վոր, յեթե առաջին հնգամյակի վերջին տարիներում արդյունաբերության արտադրանքի տարեկան աճը դնահատվում եր 4—5 մլրդ. ռուբլի, ապա յերկրորդ հնգամյակի վերջին տարում նա արտահայտվում է ավելի քան 15 մլրդ. ռուբլի դումարով։ Արդյունաբերական արտադրանքի միայն այս մեծացումը դրեթե մեկուկես անգամով գերազանցում է ցարական Ռուսաստանի 1913 թվականի խոշոր (ավելի ճիշտը՝ ցենզային) արդյունաբերության ամբողջ արտադրանքից։ Ա՛հա թե ի՛նչ են նշանակում արդյունաբերության աճման բոլշևիկյան տեմպերը։

Առաջին հնգամյակի հաջողությունները մեզ հիմք տալիս մեր առջև դնելու այս հսկայական նոր խնդիրները։

Ինչպես հայտնի յե՝ կենտկոմի և ԿվՀ հունվարյան մի[illegible] պլենումն արձանագրեց, վոր առաջին հնգամյակի վերջին տարվա պլանն արդյունաբերության ընդհանուր արտադրանքի վերաբերմամբ 1932 թ. կատարվել է 93,7 տոկոսով։ Այսպես են յեղել առաջին հնգամյակի կատարման նախնական տվյալները։ 1933 թ. ընթացքում ստացվել են արդյունաբերության հաշվետվական տվյալները, և նրանց հիման վրա կատարվեցին ճշգրտված հաշվումներ առաջին հնգամյակի կատարման մասին։ Այս հաշվումների արդյունքը յեղավ այն, վոր վոչ միայն չինվավ արդյունաբերական պլանի մի տարի առաջ ժամկետից կատարումը, այլև, ընդհակառակը, այդ կատարման վերաբերմամբ ստացվեցին ել ավելի նպաստավոր հետևանքներ։ Ահա այդ հաշվումների հետևանքները՝ նախնական հաշվարկումների համեմատությամբ։

Ծանոթագրություն

	Ամբողջ արդյունաբերությունը	«Ա» խմբի արդյունաբերությունը	«Բ» խմբի արդյունաբերությունը
1. 1932—33 թ. պլանը (առաջին հնգամյակի պլանով) միլիարդ ռուբլիներով	36,6	17,4	19,2
2. 1932 թ. արտադրանքը նախնական հաշվարկումներով՝ ա) միլիարդ ռուբլիներով	34,3	18,0	16,3
բ) % %-ով 1932-33 թ. պլանի վերաբերմամբ	93,7	103,4	84,9
3. 1932 թ. արտադրանքը հաշվետվական տվյալներով (դուրս գրելը չի հնդհայտ պլ-նի հետ)՝ ա) միլիարդ ռուբլիներով	35,3	19,1	16,2
բ) % %-ով 1932-33 թ. վերաբերմամբ	96,4	109,8	84,4

Այսպիսով, ինչպես այժմ հաստատված է, առաջին հնգամյակի վերջին տարվա պլանն արդյունաբերական արտադրանքի վերաբերմամբ կատարված է վոչ թե 93,7%-ով, այլ 96,4%-ով, իսկ արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության վերաբերմամբ («Ա» խումբը)՝ վոչ թե 103,4%-ով, այլ՝ 109,8%-ով։

Առաջին հնգամյակի կատարման այն ցուցանիշները, վոր մենք բերինք արդյունաբերական արտադրանքի վերաբերմամբ—96,4% —բավականաչափ հաստատում են առաջին հնգամյակի կատարման հաջողությունները (թեև այս ցուցանիշներն էլ վոչ բոլորովին են լրիվ)։ Ցեվ սա այսպես է՝ չնայած այն բանին, վոր մենք ունեցել ենք միջազգային կարգի հատուկ պատճառներ, վոր առաջին հնգամյակի վերջին ստեղծեցին դժվարություններ հնգամյա պլանը կատարելու գործում։

Յերկրորդ հնգամյակի կարևորագույն առանձնահատկությունն արտադրության միջոցների արտադրության («Ա» խմբի արդյու-

1006
Ա 2004
1866 - 91

ՀՍՆԼ — ССРА
им. А. Масюкиной

նաբերութ յունը) և սպառման միջոցների արտադրության («Բ» խմբի արդյունաբերությունը) զարգացման տեմպերի փոփոխությունն է։ Ցերեկ առաջին հնգամյակում արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերությունն ևր հարաբերարար ավելի արագ ծավալումով, ապա յերկրորդ հնգամյակում նրանից ավելի արագ զարգանում է լայն սպառման առարկաներ արտադրող արդյունաբերությունը։ Առաջին հնգամյակի խնդիրն ևր ստեղծել ծանր ինդուստրիա, վորպես ամբողջ տնտեսության տեխնիկական վերակազմման բազա։ Մենք այժմ հնարավորություն ունենք արագորեն առաջ չարժելու թե ծանր և թե թեթև արդյունաբերությունը՝ հաջողեցնելով առանձնապես լայնսպառ առարկաների արտադրության արագացումը։ Յերկրորդ հնգամյակում ծրագրված են հետևյալ փոփոխությունները արդյունաբերության մեջ հիմնական խմբերի («Ա» և «Բ») արտադրանքի տեսակարար կշռի մեջ։

Փոփոխություններ ամբողջ արդյունաբերության հիմնական խմբերի հարաբերակցության մեջ յերկրորդ հնգամյակում (տոկոսներով)

	1932 թ։	1937 թ։
«Ա» խումբը արտադրության գործիքներ և մթերքներ . .	53,3	49,1
«Բ» խումբը. սպառման առարկաներ	46,7	50,9
Ընդամենը .	100,0	100,0

Այսպիսով՝ «Ա» խումբը և «Բ» խումբը փոխում են իրենց տեղերը։ Սա առաջվում է նրա հետևանքով, վոր յերկրորդ հնգամյակում սպառման առարկաների արտադրության աճման տեմպերը—18,5%—նշանակելիորեն բարձր են արտադրության միջոցների արտադրության աճման տեմպերից—14,5%։ Այս տեմպերը բարձր են նույնպես լայն սպառման առարկաների արտադրության աճման տեմպերից առաջին հնգամյակում (17%)։ Զարգացման ընդհանուր տեմպերից հետ մնացած՝ «Բ» խմբի արդյունաբերությունը առանում է արտադրության զարգացում՝ արդյունաբերության աճման միջին տեմպերից բարձր։ Այսպիսով՝ թեթև և սննդի արդյունաբերությունը,

մյուս լայնսպառի ապրանքների արտադրության այլ ճյուղերը կանգնած են իրենց զարգացման վիթխարադույն նոր խնդիրների առջև։

Մեր անելիքը միայն այն չե, վոր ապահովենք պետական խոշոր արդյունաբերության հետագա արագընթաց աճումը։ Յերկրորդ հնգամյակում մենք պետք ե խթանենք նույնպես տեղական արդյունաբերության ուժերի զարգացումը՝ ցույց տալով նրան պետական աջակցություն։ Խնդիրն այն ե, վոր առավելագույն չափով ծավալվեն հումքի տեղական աղբյուրները և վառելիքի տեղական տեսակները՝ մանավանդ լայնասպառի արտադրանքը մեծացնելու համար։ Անհրաժեշտ ե տեղական արդյունաբերության շահույթների նշանակելի մասը հանձնել տեղական գործկոմների տրամադրության տակ։ Սա մեծ նշանակություն կունենա հետագա տեղական արդյունաբերության համար։ Նկատի ունենալով, վոր մեր տեղական մարմինները, ամենից առաջ՝ մարզային կազմակերպությունները վերջին տարիներս նշանակելիորեն ամրացել են՝ մենք այդ մարմինների իրավասությունը պետք ե հանձնենք միութենական և հանրապետական նշանակություն ունեցող արդյունաբերության մի շարք ձեռնարկությունների։ Առաջին հերթին սա վերաբերում ե այն ձեռնարկություններին, վորոնք աշխատում են գլխավորապես տեղական հումքով ու տեղական վառելիքով։

Սխալ կլինի նաև անտեսել անձնակազմական արդյունաբերության հետագա աճման հսկայական հնարավորությունները։ Ընդունված ե պետական արդյունաբերության արագ վերելքին՝ անձնակազմական արդյունաբերությունը լրացուցիչ արտադրանքի աննշան մասը չի, վոր կարող ե տալ նա և պետք ե տա տեղական չուքանների համար, այլև արդյունաբերության գործվածքների ոժանդակ տեսակներով և չինություններով սպասարկելու համար։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԻՔԸ ՅԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Անցնում եմ արդյունաբերության առանձին ճյուղերի զարգացման հարցին յերկրորդ հնգամյակում։

Ահա արդյունաբերության կարևորագույն այն ճյուղերի վերաբերյալ հիմնական առաջադրանքները, վորոնք արտադրում են արտադրության միջոցներ։

Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը («Ա» խմբի)

	1932 թ.	1937 թ.	1937 թ. % % ը-ով առ 1932թ.
Արտադրության միջոցների արտադրությունը (միլիարդ ռուբ. 1921-27 թ. գներով)	23,1	45,5	197
Այդ թվում՝			
1. Մեքենաշինարարություն (միլիարդ ռուբլիներով	9,4	19,5	207,1
Այդ թվում՝			
ա) մետաղամշակման (հազար հատերով) .	15,0	40,0	267
բ) ծանր մեքենաշինություն (մլն. ռուբ.) .	148,3	390	263
գ) արտադրանք (պայմանական 15 ուժանի հազար հատերով)	51,7	167	323
դ) կամքայիններ (հազար հատերով) . .	10,6	20	200
ե) ջոկեքարշիչ (ապրանքատար ու մարդատար, պայմանական «Э» և «СУ»-ի վերածուսով, հատերով) . . .	828,6	2800	338
զ) վագոններ ապրանքատար (2-առանցի հաշվարկմամբ, հազար հատերով) . .	22,2	118	531
է) ավտոմոբիլներ (հազ. հատ.) . . .	23,9	200	837
ը) տեքստիլ մեքենաշինություն (մլն ռ.) .	60,1	350,0	582
թ) պարենեղենի մեքենաշինություն (մլն. ռուբ.)	47,7	130,0	273
2) Էլեքտրաէներգիա (մլրդ. կիլովատ ժամերով)	13,4	38	283
Այդ թվում՝			
Գյուղէներգոյի ապրանքային կայաններ .	3,3	24,5	296
3) Քարածուխ (մլն. տոններով)	64,3	152,5	237
4) Նավթ գազի հետ միասին (մլն. տոններով) .	22,1	46,8	210
5) Թուջ (չուգուն) (մլն. տոններով) . . .	6,2	16	260
6) Պողպատ (մլն. տոն.)	5,9	17	289
7) Գլանվածք (պրոկատ) (մլն. տոն.) . .	4,2	13	303
8) Բիմիա (մլրդ. ռուբ.)	1,9	5,5	280
9) Ճանապարհային (մլն. խորանարդ մետր) .	24,4	43	176

Այս աղյուսակից յերևում է, որ ծանր արդյունաբերության բոլոր կարևորագույն ճյուղերը հսկայական զարգացում են ստացում, ըստ վորում մեքենաշինությունը, վորին պատկանում է առաջատար դեր ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման մեջ՝ ծանր արդյունաբերության մյուս ճյուղերից ամենից ավելի արագ է ծավալվում։ Սրա հետևանքով յերկրորդ հնգամյակի վերջին տարում արդյունաբերական արտադրանքի 80 %-ը կարտադրվի այն նոր ձեռնարկություններում, վորոնք կառուցված կամ ամբողջովին վերակառուցված են առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում, այնինչ՝ առաջին հնգամյակի վերջին արդյունաբերության արտադրանքի միայն 35 % է ստացվում նոր ձեռնարկություններից։ Վոչ միայն արդյունաբերությունը, այլև տնտեսության մյուս ճյուղերն էլ լրենց տեխնիկական վերազինման համար հսկայական քանակությամբ նոր սարքավորում են ստանալու։ Յերկրորդ հնգամյակի վերջում արտադրության բանող գործիքների կիսից վոչ պակասն էլ (50—60 %) ժողովրդական տնտեսության մեջ կդրվի այն արտադրության այն ոլորտներում, վորոնք ժողովրդական տնտեսության մեջ են մտած լինում յերկրորդ հնգամյակի տարիներին։

Մենք մեր առջև նպատակ ենք դնում ապահովել ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման կենսադրծումը խորհրդային մեքենաշինության սեփական ուժերով։ Յերկրորդ հնգամյակն այս կողմից արմատապես տարբերվելու է առաջին հնգամյակից։ Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում դանագան սեռակի սարքավորում մենք արտասահմանից ներմուծել ենք 1,5 միլիարդ վոսկե ռուբլուց։ Այս անհրաժեշտ եր նրա համար, վոր արդյունաբերության մի շարք ճյուղերի, այդև դյուղատնտեսության տեխնիկական հիմքը դնեինք և, մանավանդ, նրա համար, վոր ապահովեինք խորհրդային մեքենաշինության ամման արագությունը։ Յերկրորդ հնգամյակի սկզբին մեքենաշինական արդյունաբերությունն արդեն հսկայական հաջողություններ է ձեռք բերել։ 1913 թվականի համեմատությամբ՝ մեքենաշինության արտադրանքը 1932 թ. աճել է 10 անգամ։ Մենք հասանք այն բանին,

մոր մեքենաշինության համաշխարհային արտադրանքի մեջ ԽՍՀՄ-ի տեսակարար կշիռը 1928 թվականին 4 %-ից բարձրացավ 1933 թ. 21,4 %-ի:

Ցերկրորդ հնգամյակում մեր մեքենաշինությունը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ապատարկման գործում պետք է կատարի ավելի ևս խոշոր խնդիրներ: Ըստ վերում՝ նշանակելի չափով փոխվում և սարքավորման տիպը, գործածության մեջ են մտնում արտադրության միջոցների բազմաթիվ նոր տեսակներ: Ցերկրորդ հնգամյակի պլանում դպզդյահաշինության վերաբերմամբ՝ մեծանում և ավելի բարդ սարքավորման տեսակարար կշիռը—ավելանում են կիսաավտոմատները, ավտոմատները, հղկիչ, ֆրեզերային (բազմահատիչ), ատամնահատիչ և բարդ այլ դպզդյահների յուրացումը, մինչև 200 տեսար-չափերի նոր դպզդյահների յուրացումը. կազմակերպվում է զգալիորեն ավելի քանակությամբ հատուկ տիպի դպզդյահների արտադրությունը՝ ավիացիոն ու ավտոմոբիլային արդյունաբերության համար, տրանսպորտային մեքենաշինության համար: Ցերկրորդ հնգամյակի տարիներում դպզդյահների արտադրությունը կկազմի 129 հազ. հատ, մինչդեռ՝ առաջին հնգամյակի վերջին ԽՍՀՄ մեջ կային ընդամենը 169 հազ. մետաղահատիչ դպզդյահներ: Մետաղածությունը լիովին պետք է ապահովված լինի կոմպլեկտային սարքավորմամբ: Արագ են զարգանում նաև նոր են ստեղծվում մեքենաշինությունը (տուրբինները, դիզելատորները, ներքին այրեցման շարժիչները, շոգեկաթսաները), ուժեղ և հատուկ հոսանքների էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, քիմիական բարդ մեքենաշինությունը: Հակայական չափերով աճում և տրանսպորտային մեքենաշինությունը: 1937 թ. ավտոմոբիլների արտադրությունը պետք է հասնի մոտ պակաս 200 հազար հատի: Մեքենաշինությունը սննդի արդյունաբերության համար ավելանում և յերեք անգամ, տեքստիլ արդյունաբերության համար՝ վեց անգամ. ԽՍՀՄ դյուղատնտեսական մեքենաշինությունն արդեն առաջին հնգամյակում զարգել եր աշխարհում ամենից հզորը: Ցերկրորդ հնգամյակում նա մեծանալու է դրեթե

յերեք անգամ: Ցերկրորդ հնգամյակի վերջին ԽՍՀՄ արտադրվելու է 167 հազ. տրակտոր, (պայմանական 15-ուժանի) և 20 հազար կոմբայն:

Տեխնիկական վերակառուցման գործի ավարտումն անխզելիորեն չաղկապված է արդյունաբերության աշխատանքային և ծանր պրոցեսների մեքենացման իրականացման հետ: Այս վերաբերում է արդյունաբերության մանավանդ այնպիսի կարևոր ճյուղերին, ինչպիսիք քարածխի արդյունաբերությունը, անտառային, տորֆի արդյունաբերությունը, մետաղագործությունը, շինարարությունն են: Մեքենացման աճման որինակ կարող է ծառայել քարածխի արդյունաբերությունը, որտեղ դրեթե ամբողջովին կմեքենացվեն աշխատանքի բոլոր հիմնական պրոցեսները կտրումը (зарубка)—93 %, տրակտորը (откатка) 80 %, փոխադրումը— 90 %:

Խորհրդային Միության մեջ մեքենան բառիս իսկական իմաստով վերցրած՝ աշխատավորության ազատարարն ու բնակեր է՝ թեթևացնելով ծանր աշխատանքը, ավելացնելով աշխատանքի արտադրողականությունը և բարձրացնելով աշխատավորության բարեկեցությունը:

Ժողովրդական անտնտեսության վերակառուցման գործի համար առանձնապես նշանակություն ունի էլեկտրիֆիկացիան: Ցերկրորդ հնգամյակում հսկայական չափով աճում և էլեկտրաէներգիայի պահանջմունքը: Մանավանդ արագորեն ծավալվում և էլեկտրաէներգիայի սպառողները՝ քիմիական և տեխնիկական (կենցաղական) նպատակների համար՝ ամենից առաջ՝ մետաղագործության, քիմիայի և մեքենաշինության մեջ: Էլեկտրիֆիկացիան խոշորագույն նշանակություն է ունենալու տրանսպորտի համար՝ մանավանդ Դոնբասի (Դոնավազանի), Մերձմոսկվան, Անդրկովկասի, Ուրալի և այլ վայրերի յերկաթուղիների ամենաբեռնավորված ուղևմասերում: Չենց այս ժամանակաշրջանում էլ սկսում և զգալիորեն աճել էլեկտրաէներգիայի սպառումը գյուղատնտեսական արտադրության մեջ—էլեկտրակայում և այլն:

Ցերկրորդ հնգամյակում էլեկտրաէներգիայի արտադրու-

թյունը պետք է բարձրանա 13,4 միլիարդ կիլովատ-ժամից մինչև 38 միլիարդ կիլովատ-ժամի, այսինքն՝ գրեթե չեռապատկվելու չի: ԽՍՀՄ-ն էլեկտրաէներգիայի արտադրության քանակով կանգնի չեվրոպական բոլոր չերկրներից և աշխարհում կգրավե չերկրորդ տեղը: ԽՍՀՄ մեջ մի բանվորի էլեկտրաթինամը պետք է հասնի ՀՄՄՆ-ի մի բանվորի էլեկտրաթինման 71 %-ին, և ավելի քան 150 %-ի՝ Գերմանիայի մի բանվորի էլեկտրաթինման վերաբերմամբ: ԽՍՀՄ բանվորների էլեկտրաթինամը վոչ մի համեմատության մեջ չի կարող դրվել մինչհեղափոխական շրջանի հետ: Էլեկտրաթինման այս ճաման մեջ պետք է տեսնել մեր չերկրի վերաթինման ամենակարևոր ցուցանիշներից մեկը:

Վառելիքի արդյունաբերությունը չերկրորդ հնգամյակում նույնպես հսկայական աճում է ստանում: Քարածխի արտադրությունը բարձրանում է 64,3 միլիոն տոննից մինչև 152,5 մ. տոննի: Նավթարդյունաբերությունն աճում է 22,3-ից մինչև 46,8 միլիոն տոննի:

Տորֆի, ինչպես և հերձաքարի (թերթաքար) արդյունաբերությունը, վորպես տեղական վառելիքի՝ հետագայում ևս զարգացնալու չե և բնդ ամին՝ դարգանալու չե ավելի մեծ չափով:

Սև մետաղագործությունը պետք է վերացնի ժողովրդական տնտեսության ճաման բնդհանուր տեմպերից իր հետ մնալը և լիովին պետք է բավարարի չերկրի աճող պահանջարկները մետաղի վերաբերմամբ: Թուջի (չուգունի) արտադրությունը պետք է բարձրանա 6,2-ից մինչև 16 միլիոն տոննի, պողպատինը՝ 5,9-ից մինչև 17 միլիոն տոննի, գլանվածքի (պրոկատի) արտադրությունը՝ 4,3-ից մինչև 13 միլ. տոննի: Մեր մետաղագործությունն ինչպես իր արտադրական ապարատի կարողությամբ, այնպես և արտադրանքի քանակով պետք է գրավե Եվրոպայում առաջին տեղը, բայց նշանակելիորեն տակավին հետ է մնալու ՀՄՄՆ-ի մետաղագործությունից:

Մանավանդ մեծ նշանակություն ունի վորակավոր գլանվածքի և էլեկտրապողպատի արտադրության, ինչպես և ֆերահալածոների (ферросплавы) արտադրության զարգացումը: Անհրաժեշտ է

նույնպես կատարել չերկաթահանքային արդյունաբերության լայն վերակառուցումը և լրոք ապահովել հանքերի հարստացման և ագլոմերացիայի (կուտակման) մեթոդների արմատավորումը: Սև մետաղագործության համար պայքարելը չերկրորդ հնգամյակում էլ կանգնած է լինելու մեր տնտեսական խնդիրների կենտրոնում:

Ընդհանուր զարգացման տեմպերից հետ է մնացել նաև մեքենաշինությունը: Այնինչ՝ չի կարելի ապահովել մեքենաշինության և էլեկտրիֆիկացիայի պատշաճ զարգացումը, այլևս չխոսելով պաշտպանության կարիքների մասին՝ առանց վճռական վերելք ունենալու արդյունաբերության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք պղինձը, ալյումինը և ուրիշներն են: Գոնավոր մետաղագործության հետ մնալը վերացնելը և նրա տեխնիկական վերակառուցումն ավարտելը չերկրորդ հնգամյակի կարևորագույն խնդիրներից մեկն է:

Չերկրորդ հնգամյակում քիմիական արդյունաբերությունը խոշորագույն դեր է խաղալու տեխնիկական վերակառուցման մեջ: Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում բոլորովին նոր են ստեղծված քիմիական արդյունաբերության մի շարք ճյուղեր, ինչպիսիք ազոտի արդյունաբերությունն է, կոքս-քիմիականը, անիլինաներկականը (анилокрасочная), կալիումի, ապատիտների արդյունաբերությունը և այլն: Չերկրորդ հնգամյակում ստեղծվում են մի ամբողջ շարք քիմիական նոր արտադրություններ, ինչպիսիքն են՝ ածխի, տորֆի և հերձաքարերի քիմիական վերամշակումը, նաֆթեղենների նոր տեսակները, ծավալվում և պլաստիկական զանգվածների, սինթետիկ կաուչուկի արտադրությունը և այլն: Հանքային պարարտանյութերի արտադրությունը հնգամյակի ընթացքում պետք է բարձրանա 10 անգամ: Այս արդյունաբերության զարգացումը թե ժողովրդական տնտեսության և թե չերկրի պաշտպանության համար բացառիկ նշանակություն ունի:

Անցնենք սպառման առարկաների արտադրող արդյունաբերությանը: Ահա արտադրության այս ճյուղերի մասին մի շարք կարևորագույն ցուցանիշներ պարունակող աղյուսակը.

Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը («Ռ» խմբի)

	1932 թ.	1937 թ.	1937 թ. %%-ով առ 1932 թ.
Սպառման միջոցների արտադրությունը (մլրդ. առ. թ. 1926-27 թ. գներով)	20,2	47,2	233,6
Այդ թվում.			
1) Թեթև արդյունաբերության ժողկոմատը	7,8	19,5	249
2) Մսատժողկոմատը	4,6	11,9	256,1
3) Տեղական արդյունաբերության ժողկոմատը (լայնատարած)	1,0	2,5	244
4) Արդյունագործական կոոպերացիան (ջուլհական ֆոնդերը 1932 թ. գներով)	3,5	9,4	269
Թեթև արդյունաբերության առանձին ճյուղերի վերաբերմամբ			
ա) բամբակի գործվածքները (ապրանքային կիսաոչոկ կատեգորիայով), միլիոն մետր. ընդհանուր	2,719,7	5,100	187,5
բ) բրդե գործվածքները, միլիոն մետր, ընդամենը	91,3	220	242,0
գ) վոնամանեղեն կոշիկ, միլիոն զույգ, ընդամենը	81,9	180	219,8
դ) ապակի, հազար առն. ընդամենը	396,4	989	249,5
ե) ոճառ (40 տոկոսանոց վերածումով) հազար առն. ընդհանուր	357,2	1,000	280,0
Սննդարդյունաբերության առանձին ճյուղերի վերաբերմամբ			
ա) միս, հազար առն	435,0	1,200,0	275,9
բ) ձուկ-վորպ (քանակին ըստ վորպի), հազար առն	1,333,0	1,800,0	135,9
գ) յուղ կենդանական, հազար առն	65,1	180,0	276,5
դ) պահածոները (կոնսերվները), միլիոն պայմանական բանկա	716,0	2,000,0	279,3

Սպյուտակից յերևում է, վոր հնգամյակում լայն սպառման առարկաների արտադրությունը թեթև արդյունաբերության մեջ 7,8 միլիարդ ռուբլուց բարձրանում է մինչև 19,5 միլիարդ ռուբլու, այսինքն, աճում է յերկու ու կես անգամ: Մսաժողկոմատի սննդի արդյունաբերության արտադրանքն աճում է 4,6 միլիարդ ռուբլուց մինչև 11,6 միլիարդ ռուբլու, այսինքն առաջին հնգամյակի վերջի վերաբերմամբ աճում է 2,6 անգամ: Նշանակելիորեն բարձրանում և լայն սպառման ապրանքների արտադրությունը Եվ նույնպես Մանր արդյունաբերության կոմինտերնատի գծով, այն է՝ մետաղի ապրանքների արտադրությունը 3,6 անգամ է բարձրանում, հեծանիվների արտադրությունն ավելանում է 4,5 անգամ, ժամացույցներինը՝ 4,8 անգամ, լուսանկարչական ապարատներինը՝ 11,7 անգամ, լամպային ռադիոընդունիչներինը՝ 17 անգամ, մետաղե-սամանեղենինը՝ 4 անգամով և այլն:

Տեխնիկական վերնման մասին խոսելով Մխության թեթև արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակի վերջերին դրավելու է աշխարհում առաջին տեղերից մեկը: Արագորեն զարգանում և հրաշալական չափերի են հասնում ավտոմատական դազդյահների կիրառումը վոստոչնանկուրության մեջ (ջուլհակություն), բամբակեղենի արդյունաբերության մեջ, բրդեղենի արդյունաբերության մեջ: Մանածագործության մեջ մենք անցնում ենք խորհրդային ինժեներ Մուշչենկոյի հնարած շատ կատարյալ վատերի լայն կիրառմանը, իսկ վոստոչնանկուրության մեջ՝ Շենդերի արդի լավագույն գործվածքային դազդյահին: Վուշեղենի արդյունաբերության մեջ գործածություն է մտնում խորհրդային ինժեներ Զմարիկինի հնարած նոր վատերը, վորն այժմյան վատերների արտադրողականությունը բարձրացնում է 40 %-ով և նշանակելիորեն լավացնում է մանածը: Տեխնիկական նշանակելի վերակառուցում է անցկացվում վոռնամանեղենի արդյունաբերության մեջ, սպակու և ֆարֆորի արտադրության մեջ, նույնպես և կաննիմեղեն-ջուտեղենի արդյունաբերության մեջ, վորտեղ խորհրդային ինժեներ Ռոմանովի հնարած ցանցահյուս մեքենան մի քանի անգամով բարձրացնում է գործող մեքենաների արտադրողականությունը:

Սննդի արդյունաբերության մեջ առաջին հնգամյակի ընթացքում առեղծված են մի շարք նոր ճյուղեր—մսեղենի լինդուստրիան հզոր և առաջնակարգ-տեխնիկորեն զինված այնպիսի ձեռնարկություններով, ինչպիսիք Մոսկվայի և Լենինգրադի մսամոմբինատներն են. պահածոների հզոր արդյունաբերությունը, միքենացված հացաթխումն այնպիսի քաղաքներում, ինչպիսիք Մոսկվան և Լենինգրադը և ուրիշները. մարգարինի, հիդրոլենիտցիոն, պրոդանջարեղենի և մի շարք այլ ճյուղեր: Ձկնարդյունաբերության տեխնիկական վերազինման գործում էլ շատ բան է արված: Մատուցանային խոշոր ձեռնարկություն և կազմակերպված արդյունաբերական ամենակարևոր կենտրոններում: Հատարակական սննդի մեքենացված ձեռնարկությունները, խոշոր ճաշարաններն ու գործարան-խոհանոցները մեծ մեխանիկական սարքավորումով աչքի ընկնող տեղ են գրավել քաղաքների մատուկարարման գործում: Ներկրորդ հնգամյակում առման առենամեծ տեմպ է ծրագրված չաքարի, պահածոների և մսեղենի արդյունաբերության վերաբերմամբ, ցորենի ալյուրի, մակարոնի, հրուշակեղենի, թեյի, նուշպես և ոճառի վերաբերմամբ: Սննդաճարպեղենն արտադրող արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակում ընթանում է առաջավոր ճյուղերի մակարդակով և աճում է ավելի, քան յերեք անգամ: ՀՍՀՄ-ը տեխնիկական վերակառուցման հետևանքով հընդամյակի վերջերին սննդի արդյունաբերության արտադրանքի ծավալով առաջին տեղն է բռնում Եվրոպայում:

Հարկավոր է առանձնապես մատնանշել այն, որ թեթև և սննդի արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակում պետք է տարեցտարի նշանակելիորեն բարձրացնեն իրենց դարգացման տեմպերը: Սրան համապատասխան պետք է ծավալվին նրանց տեխնիկական վերակառուցման գործը և դյուղատնտեսական հումքով ապահովելը:

Եվրե արդյունաբերության բոլոր ճյուղերին և վերաբերում կուսակցության այն պահանջը, որ ինճապես պետք է լավացնել արտադրանքի վորակը, ապա, կարելի չի ասել, այդ պահանջը վերաբերում է մանավանդ սպառման առարկաների արտադրմանը:

Թեթև արդյունաբերության առջև դրված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բամբակի գործվածքների վորակը նշանակելիորեն լավացնելու, ներկումը և նկարը լավացնելու, բրդեղենի արդյունաբերության մեջ նուրբ մահուդեղենի և կամվոլ խմբերի մասնխավելացնելու, վոտնամանեղենն ավելի դիմացկուն դարձնելու, կտորեղենի, սամանեղենի և այլ ապրանքների ավելի լավ տեսակներին անցնելու խնդիրները: Սննդի արդյունաբերության առջև առանձնապես սուր կերպով դրված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մսեղենի արդյունաբերության արտադրանքի վորակը և հաշիվ այդ արդյունաբերության լավագույն տեսակների մասի՝ խոզի մսի և աննդաճարպի ավելացման լավացնելը, ձկնարդյունաբերության արտադրանքի վորակը ձկան լավագույն տեսակների մասի ավելացման հաշվին լավացնելը և այլն: Անհրաժեշտ է թեթև և սննդի ամբողջ արդյունաբերության վերաբերմամբ վերանայել ասորտիմենտը, արգելել արտադրանքի վատթարացված առանդարտները և ապահովել ամբողջ արտադրանքի վորակը լավացնելու վերաբերմամբ կուսակցության ու կառավարության կողմից տրված առաջադրանքների հաստատուն կատարումը:

Արտադրանքի վորակը լավացնելու պայքարը պիտի կանցնած լինի ամբողջ արդյունաբերության ուշադրության կենտրոնում:

2.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԸ ՑԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Գյուղատնտեսության մեջ առաջին հնգամյակում այնպիսի արագ վերելք չի յեղել, ինչպես արդյունաբերության մեջ: Վերելքն այստեղ արդեն դրավել են հացահատիկային տնտեսությունն ու տեխնիկական մշակույթները, բայց միաժամանակ մենք ունեցել ենք աճասնարուծության անկում և անասունների թվի կրճատում:

Գյուղատնտեսության մեջ հնգաչրջում տեղի ունեցավ միայն տեխնիկական վերազինման գործում, այլև, վոր առանձնա-

այս կարևոր է՝ նրա բունկիկ հասարակական կազմակերպման մեջ: Ընկ. Ստալինը կենտկոմի հաշվետվության մեջ ծավալեց վերջին տարիներս գյուղատնտեսության արմատական վերակազմության պատկերը: 200 հազար կոլտնտեսության, 5 հազար խորհտնտեսության և 2,5 հազար ՄՏԿ ստեղծումը վերջին 4—5 տարիներին վերաբերող դործ է: Ամբողջ գյուղատնտեսության և, համենայն դեպս՝ նրա ճնշող մասի այսպիսի վերակառուցում զուր չեր կարող անցնել: Այս վերակառուցումը կապված եր հսկայական գործարարության հետ, և վերակազմության շրջանում գյուղատնտեսության վերելքի տեմպերի ավելի մեծ արագացման չեր էլ կարելի հասնել:

Այս ժամանակաշրջանի խոշորագույն նվաճումն է արդեն այն փաստը, որ, չնայած անասունների մեծ կրճատմանը՝ մենք հասանք ոչ միայն ցանքերի տարածության սահմանը, այլև արտադրանքի ավելացմանը՝ մի շարք կարևորագույն մշակույթների վերաբերմամբ: Սրան կարելի չեր հասնել միայն չնորհիվ գյուղատնտեսության կազմակերպման գործում չեղած այն առավելությունների, որ ունեն կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները գյուղացիական մանր մենատնտեսության հանդեպ: Սրան կարելի չեր հասնել չնորհիվ այն բանի, որ գյուղի սոցիալական վերակառուցման զուգընթաց տեղի չեր ունենում գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը, որն արտահայտվել է դյուղատնտեսությանը հսկայական քանակությամբ տրակտորներ, ավտոմոբիլներ, կոմբայններ և գյուղատնտեսական այլ մեքենաներ տալով: Սրան կարելի չեր հասնել միմիայն չնորհիվ այն բանի, որ կուսակցությունն ու պրոլետարական դիկտատուրայի բոլոր որգանները ապահովեցին կուլակության չարիքների ճակատեցին կազմակերպական—քաղաքական հսկայական աշխատանք՝ ամրապնդելով կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, բարձրացնելով կոլտնտեսական կարգապահությունը, դատարկելով կոլտնտեսական նոր ակտիվ:

Ներկայումս, երբ գյուղատնտեսության վերակառուցումը մենատնտեսականից կոլտնտեսականի հիմնականում ավարտված է՝

գյուղատնտեսության վերելքի համար ստեղծվել են ուրիշ, անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններ: Ընկ. ՍՏԱԼԻՆԸ համագումարին արված իր զեկուցման մեջ ասաց.

«Ըստ բանի եության՝ հաշվետու շրջանը գյուղատնտեսության համար յեղել է ոչ այնքան արագ վերելքի և հզորաթափ վազքի շրջան, որքան մի շրջան, երբ նախադրյալներ են ստեղծվել ամենամոտիկ ապագայում այդպիսի վերելք և այդպիսի վազք ունենալու համար»:

Ահա մեղնից է կախված այս ցուցումները իրագործելը և գյուղատնտեսության արագ վերելքը մոտակա տարիներում խնդրեսա ապահովելը:

Ի՞նչպես է դրված գյուղատնտեսության վերելքի խնդիրը յերկրորդ հնգամյակում:

Խնդիրների մասշտաբն ամենից առաջ յերևում է յերկրորդ հնգամյակում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ամման հետևյալ ցուցանիշներից.

Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը յերկրորդ հնգամյակում
(Միլիոն ցեներներով)

Մ ջ ա կ ո ւ յ թ ն ե ր	1932 թ.	1937 թ.	1937 թ. % %-ով առ 1932 թ.
1. Հացահատիկային, ընդամենը . .	698,7	1,048	150,0
2. Տեխնիկական՝			
ա) հում-բամբակ (հասիկավոր բամբակ)	12,7	21,25	167,3
բ) վուշ (թել)	5,0	8,0	169,0
գ) շաքարի ճակնդեղ	65,6	276,0	420,7
դ) արևածաղիկ	22,6	34,0	150,4

Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի վերաբերյալ այս առաջադրանքների կատարումը լիովին կապահովի հատիկային մշակույթների մեր պահանջարկները, ինչպես նաև հիմնականում կբավարարի տեխնիկական մշակույթների մեր պահանջարկները: Առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ առանձնապես ա-

բուդ աճում և ծրագրված չաքարի ճակնդեղի վերաբերմամբ, որի համար 1932 թ. յեղել և ամենամեծ անկման տարի:

Հնգամյակը ցանքերի տարածության մեծ ավելացում չի ծրագրում:

Ցանքերի տարածություններն առաջին յեվ յերկրորդ հնգամյակներում
(հազար հեկտարներով

	1932 թ.	1937 թ.	1937 թ. % % առ 1932 թ.
Ցանքերի ամբողջ տարածությունը .	134,435	139,740	103,9
Այս թվում՝			
ա) Հացահատիկային մշակույթները	99,711	104,800	105,1
բ) տեխնիկական	14.877	13,180	88,6
գ) բանջարաբոստանային . .	9,215	9,650	104,7
դ) կերաբույսեր	10,632	12,110	113,9

Ըստ պլանի՝ ցանքերի ամբողջ տարածությունը 1932 թ. 134·435 հազարից (հեկտարից) 1937 թ. հասնում է 139,740 հազ. հեկտ. այսինքն՝ ավելանում է հնգամյակում միայն 3,9 %-ով: Տեխնիկական մշակույթների նկատմամբ, որոնց վաղքը ցանքատարածության աճման մեջ վերջին տարիներում յերբեմն չափազանց մեծ է յեղել՝ նկատի յե առնվում ցանքատարածության նույնիսկ փոքր կրճատում՝ 11,4 %-ի չափով: Միայն կենտրոնական սպառողական շրջանում (Մոսկվա), նույնպես և Սիբիրում ու Հեռավոր Արևելքում մեր առջև դրված է ցանքերի տարածության հետագա նշանակելի ավելացման խնդիրը:

Յերկրորդ հնգամյակում գյուղատնտեսության գլխավոր խնդիրը բերքատվությունը բարձրացնելու խնդիրն է: Ահա այն օրյեռակը, որը ցույց է տալիս բերքատվությունը բարձրացնելու գործում մեր առջև դրված խնդիրները:

Բերքատվություն առաջին յեվ յերկրորդ հնգամյակներում
(ցենտներներով մի հեկտարից)

	Միջինը 1928–1932 թ. թ.	1937 թ.	1937 թ. % առ 1928–32 թ. թ. միջինը
Հացահատիկային մշակույթները բոլորը .	7,5	10,0	133,3
Այս թվում՝			
ցորեն աշնանացան	8,6	11.6	134,9
ցորեն գարնանացան . . .	6,1	8,0	131,1
հաճար (տարեկան)	8,0	10,8	135,0
վարսակ	8,3	10,5	126,8
գարի	8,2	10,4	126.8
յեգիպտացորեն	8,9	13,5	151,7
Տեխնիկական մշակույթներ			
հում-բամբակ	7,5	12,0	160,0
յերկարաթել-վուշ (лен-долгунец) .	2,2	3,7	163,7
չաքարի ճակնդեղ	120,1	200,0	166,6
արևածաղիկ	5,5	8,5	154,6

Այս աղյուսակից յերևում է, թե մեր առջև ինչ հսկայական խնդիրներ են դրված բերքատվությունը բարձրացնելու գործում: Հատիկային մշակույթների բերքատվության բարձրացումը մենք պետք է ապահովենք 33 տոկոսով, բամբակինը, վուշինը և չաքարի ճակնդեղինը՝ 60 և ավելի տոկոսով, արևածաղկինը՝ ավելի քան 50 տոկոսով:

Այսպիսի խնդիրներ մենք միայն այժմ կարող ենք դնել՝ վերակառուցման շրջանը վերջացնելուց հետո, այն բանից հետո մեր այն, յերբ գյուղացիական մանր տնտեսությունների վերակառուցումը կոլտնտեսական խոշոր տնտեսությունների հիմնականում ավարտված է, և կոլտնտեսությունները հասել են վորոշ ամրացման: Վոր այդ խնդիրներին մեր ուժը կհաղթի՝ այս մասին խոսում է անցած տարին յերբ մեկնեն, վերակազմության շրջանն ավարտելուց հետո՝ մենք կարողացանք ձեռք բերել հացահատիկային ու տեխնիկական մշակույթների արտադրանքի զգալի աճում:

Ցերկրորդ հնգամյակում կենդանաբուծության բնագավառում էլ մենք դնում ենք խոշորագույն խնդիրներ: Թե ո՞րոնք են այդ խնդիրները՝ կերևում է հետևյալ աղյուսակից.

Անասունների քանակը ԽՍՀՄ մեջ (միլիոն գլուխներով)

	1916 թ.	1928 թ.	1932 թ.	1937 թ.	1937 թ. % 1932 թ.-ով
1. Ձիեր	35,1	33,5	19,6	21,8	111,2
2. Խոշոր եղջյուրավոր անասուններ . . .	58,9	70,5	40,7	65,5	160,9
3. Վոչխարներ ու այծեր .	115,2	146,7	52,1	96,0	184,3
4. Խոզեր	20,3	25,9	11,6	43,4	374,1

Այս աղյուսակից կերևում է, որ ձիերի կողմից կերկրորդ հնգամյակի վերջերին էլ մենք դեռ բնավ հասած չենք լինի ամենաբարձր այն կետին, որը ունեցել ենք անցյալում: Խոշոր եղջյուրավոր անասունների կողմից մենք մոռիկացած կլինենք անցյալի ամենաբարձր մակարդակին (1928 թ.): Վոչխարների ու այծերի վերաբերմամբ մենք նպատակ ենք դնում գրեթե կրկնապատկելու նրանց քանակը և, այնուամենայնիվ, տակավին չենք կարող ապահովել 1928 թ. մակարդակին հասնելը: Խոզերի վերաբերմամբ հնգամյակը գրեթե քառապատիկ աճում է ծրագրում: Խոզերի քանակի կողմից 1937 թ. մենք ավելի քան կերկու անգամ կերապահելու ենք անցյալ ամբողջ չորսնի ամենաբարձր մակարդակից:

Անասունների քանակի ահռելի հարյուրամյա այս ամենին մենք կարող ենք հասնել միայն համառորեն աշխատելով լավացնել գործը կենդանաբուծական խորհրդանտեսություններում ու կոլտնտեսական-սպրանքային ֆերմաներում և ամեն կերպ ալիկելով առանձին կոլտնտեսականների կենդանաբուծության զարդացմանը:

Բացի սրանից՝ մենք պետք է հասնենք վորակական ցուցանիշների նշանակելի բարձրացման կենդանաբուծության վերաբերմամբ (կաթնատվությունը, կենդանի քաշը, մսատուների ոչխարը և այլն):

Կենդանաբուծությունը բարձրացնելու աշխատանքի ամբողջ կազմակերպմամբ մենք պետք է ապացուցենք, վոր ընդունակ ենք արագորեն չկենալու աշխատանքի հետամնաց բնագավառները և բոլշևիկյան տեմպերով կարող ենք ապահովել տնտեսական կարևորագույն խնդիրների լուծումը:

Գլխավորը վոր անհրաժեշտ է գյուղատնտեսության արագ վերելքն ապահովելու համար՝ կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումն է այդ: Կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, վորպեսզի իրականացնեն կերկրորդ հնգամյակի խնդիրները՝ արմատապես պետք է բարելավեն իրենց աշխատանքը և այնպիսի կարգեր հաստատեն, վոր արժանի լինի կազմակերպված մեքենայացված խոշոր տնտեսությանը: Կուսակցությունն արել և ամեն ինչ նրա համար, վոր քաղաքական աշխատանքը կոլտնտեսություններում և նրանց կազմակերպական-տնտեսական ամրացման գործը նշանակելիորեն բարձրանան: ՄՏԿ և խորհտնտեսությունների քաղբաժինները մի տարում ապացուցեցին, թե բոլշևիկյան ամրակուռ կադրերը վճռական ինչ նշանակություն ունեն մասսաներին ղեկավարելու գործում, նրանց մղած պայքարում կուլակների ու յենթակուլակների դեմ և կոլտնտեսությունները բոլշևիկյան կոլտնտեսություններ դարձնելու մեջ: Անդադ կոլտնտեսական ակտիվը և կոլտնտեսական մասսաների ակտիվությունը, վորոնք իրենց արտահայտությունն են գտնում ծավալվող կոլտնտեսական մրցակցության մեջ, կոլտնտեսական կարգապահության ամրացման մեջ, կոլտնտեսական աշխատանքի (հատկապես բերքահավաքի) կազմակերպման բարելավման մեջ, նոր վերաբերմունքի մեջ դեպի կոլտնտեսական սեփականությունը և դեպի պատասխանատվությունների կատարումը Խորհրդային պետության հանդեպ, կոլտնտեսական գործի և գյուղատնտեսության վերելքի հուսատու հենարանն են հանդիսանում:

Գյուղատնտեսության առջև կերկրորդ հնգամյակում դրված խնդիրների կատարումը հսկայական չափով կախված է լինելու խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների տեխնիկական

վերապահումից: Գյուղատնտեսության մեքենավորման հարցն իր ամբողջ հասակով և դրվում յերկրորդ հնգամյակում:

Թե ինչպես և աճում գյուղատնտեսության մեջ տրակտորային պարկը, յերևում և հետևյալից:—

Տրակտորային պարկի կարողությունը գյուղատնտեսության մեջ (ամորտիզացման հաշվառումով)

Թվական	հազ. ձիաուժով
1932	2,225
1933	3,100
1934	4,400
1935	5,575
1936	6,675
1937	8,200
1937 թ: տոկոսներով առ 1932 թ.	368,5

Այս աղյուսակից տեսնում ենք, վոր տրակտորային պարկը գյուղատնտեսության մեջ տարեցտարի արագ աճում և (բայց նկատի ունենալով, վոր Ստալինգրադի գործարանը վերակառուցվում և թրթռուրավոր տրակտորներ արտադրող գործարանի՝ տրակտորային պարկի կարողության աճը 1935–36 թ.թ. մի փոքր դանդաղում և): Տրակտորների ճնշող մաս ստանում են ՄՏԿ-ները, վորտով և կոլտնտեսությունների տրակտորային բազան հսկայական չափով ամրապնդվում և: Բացառիկ նշանակություն և ունենալու այն փաստը, վոր առաջին հնգամյակում գյուղատնտեսության ստացած 5 հազար թրթռուրավոր տրակտորների փոխարեն յերկրորդ հնգամյակում գյուղատնտեսությունը ստանալու և հարյուր հազարից անց թրթռուրավոր տրակտորներ: Այս տրակտորները, չնորհիվ նրանց ունեցած մի շարք առավելությունների (ավելի խորը վար, վազ դարնանը բանելը), նշանակելիորեն հեշտացնում են բերքատվության բարձրացման համար պայքարելը: Բացի որանից՝ գյուղատնտեսությունը կստանա 35 չարքահերկ (пропашное) տրակտորներ, վոր հսկայական չափով հեշտացնում են տեխնիկական մշակույթների վերելքի համար պայքարելու գործը:

ՄՏԿ ընդհանուր թիվը մեծանում և մինչև 6 հազարի, և յերկրորդ հնգամյակի վերջերին նրանք կընդգրկեն բոլոր կոլտնտեսությունները: Մտրհանոցների թիվը նույնպես մեծանալու և դրիստավորության հացահատիկային չափից դուրս մեծ խոշոր տնտեսությունների ապախոշորացման հաշվին:

Թե ընդամենն ինչպես և ընդարձակվում գյուղատնտեսության մեքենացման բազան՝ յերեվում և հետևյալ աղյուսակից

Գյուղատնտեսական մեքենաների պարկն ամբողջ գյուղատնտեսության մեջ (խորհտնտեսությունները, ՄՏԿ, կոլտնտեսությունները)

	1932 թ.	1937 թ.
Կոմբայնները (հազար հատերով, փոխադրած 15 ֆուտանոցի)	15,5	100
Բարդ և կիսաբարդ կալսիչներ (հազ. հատ) . . .	47,7	60
Էլեկտրադրվածքներ (հազ. կվտ.) (Электроустановки) .	65,9	450
Վերանորոգման արհեստանոցներ	2320	6920
Բեռնատար ավտոմոբիլներ (հազ. հատ.)	14,5	128
Մարդատար ավտոմոբիլներ (հազ. հատ.)	1	42

Այս ամենն ապահովում և գյուղատնտեսության մեքենացման ավարտումը: Սա իր արտահայտությունը նրանում և գտնելու, վոր 1937 թ. վարն ու աշնանացանը մեքենացված կլինեն տրակտորների միջոցով 80 %-ով, մշակաբուծումը (կուլտիվացումը)— 70 %-ով, հացահատիկավորների բերքահավաքը— 60 %-ով, կալսումը մեքենացվում և 85 %-ով:

Այժմ տեսնում ենք վոր մեր գյուղատնտեսությունը յերկրորդ հնգամյակի վերջերին բնավ նման չի լինի այն բանին, ինչ վոր նա ընդամենը մի քանի տարի առաջ: Մենք ամենայն իրավամբ կարող ենք ասել, վոր գյուղատնտեսական աշխատանքը վերափոխվում և ինդուստրիալ աշխատանքի:

Մեքենացման հետ սերտորեն անհրաժեշտ և ծավալել ագրոտեխնիկական ձեռնարկումները կենսագործելու և հանքային պարարտանյութերը արմատացնելու աշխատանքները: Մեր քիմիական արդյունաբերությունը հնգամյակի վերջերին մոտ 10 անգամով պետք և ավելացնի պարարտանյութերի արտադրությունը:

Սրա հետևանքով պարարտացվող տարածությունն ուժգնորեն մեծանում է. ըոլոր բամբակի ցանքերի տարածության մինչև 80 %-ը պարարտացվելու էր ազոտով ու ֆոսֆորով և մինչև 20 տոկոսը՝ կալիումով, չաքարի ճակնդեղի ցանքերի տարածության 40 տոկոսը պարարտացվելու էր ազոտով ու կալիումով, իսկ ֆոսֆորով պարարտացվելու էր այդ տարածության 100 տոկոսը: Եվ ավելի մեծ համառությամբ պետք է շարունակել հողը պարարտացնել նաև գոմաղբով:

Սպրոտեխնիկական ճեռնարկումների կենսագործման մեջ մենք դեռ ծայր աստիճան հետ ենք մնում: Մինչդեռ հայտահատիկային ու տեխնիկական մշակույթների բերքատվության բարձրացումը մեծ չափով կախված է այնպիսի ճեռնարկումների կենսագործումից, ինչպիսիքն են՝ աշնանահողը, մաքուր ցելը, տեսակավոր սերմերի անցնելը և պարարտանյութերի լայն ոգտագործումը: Փորձը ցույց է տվել, որ այն դեպքերում, երբ տեղական կազմակերպությունները այս ճեռնարկումների կենսագործման ժամանակ կարողանում են հենվել կոլտնտեսությունների վրա՝ մենք լուրջ հետևանքներ ենք ստանում: Ցերկրորդ հնգամյակում կոլտնտեսությունները այս գործում ցույց կտան իրենց յեզակի ուժը: Կոլտնտեսական խոշոր տնտեսությունը, որը ապրոտեխնիկական ճեռնարկումների կենսագործման մեջ հենվում է խոշոր հակատանկական մեքենական տեխ իկայի և մեքենատրակտորային կոլտնտեսային ամրակուռ կազմակերպման վրա՝ դա մի ուժ է, որը բառացի կարող է սարերը տեղից շարժել:

Այսպիսով՝ մենք տակավին կանգնած ենք գյուղատնտեսության զարգացման շատ ցածր մակարդակի վրա, բայց մեր ճեռքում են գյուղատնտեսական արտադրությունը արագորեն բարձրացնելու մեծագույն նախադրյալները: Սրանց ինչ կախված է մեզնից, արագաշարժ ճեռք տեխնիկական բազան ոգտագործելու մեր շնորհքից, կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները վորպես այնպիսի մեքենայացված խոշոր տնտեսություն կազմակերպելու մեր շնորհքից, վորտեղ աշխատանքի արտադրողականությունը կարող է լինել և իրոք կլինի անհամեմատ ավելի բարձր,

քան գյուղացիական մանր տնտեսության մեջ է: Սհա թե ինչու մենք մեր առջև նպատակ ենք դնում յերկրորդ հնգամյակում ապահովել գյուղատնտեսության բարձրացման մոտավորապես հինգ այնպիսի տեմպեր, ինչպես և մեր արդյունաբերության ճաման տեմպերն են:

3

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԵԼՔԸ ՑԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքի հսկայական աճումը, ապրանքաշրջանառության ծավալումը քաղաքի ու գյուղի միջև և աշխատավորության բարեկեցության ու կուլտուրայի արագ վերելքը տրանսպորտի առջև կարևորագույն խնդիրներ են դնում: Ժողովրդական տնտեսության վերելքի ու կուլտուրայի զարգացման մեջ ակտիվ դեր է պատկանում տրանսպորտին: Տրանսպորտի աշխատանքի աճումից և կախված ժողովրդական տնտեսության զարգացումը՝ չխոսելով այլևս այն մասին, վոր տնտեսական ու կուլտուրական վերելքի խնդիրները կենտրոնից հետու գտնվող նոր շրջաններում առանց տրանսպորտի նշանակելի զարգացման՝ անիրագործելի են:

Ցերկրորդ հնգամյակում բեռնաշրջանառությունը արագաթափ է աճում: Սա յերևում է հետևյալ տվյալներից.

Բեռնաշրջանառությունը յերկրորդ հնգամյակում (միլիարդ տոննա-կիլոմետրերով)

	1932 թ.	1937 թ.	1937 թ. %-ով 1932 թ.
1. Ցերկաթուղիները	169,3	300	177,2
2 Գետային տրանսպորտը (փոխադրումներ ջրաքարշով)	26,1	63	241,4
3 Ծովային տրանսպորտ (փոխադրումներ խորհրդային նավերով)	18,2	51	280,2

Սրանից տեսնում ենք, վոր ընդհանուր բեռնաշրջանառության մեջ վճռական դերը պատկանում է յերկաթուղային տրանսպորտին:

Մենք այժմ էլ սահեն որ արդեն զգում ենք, թե ինչպես ժողովըրդական տնտեսության աճումը դեմ է առնում մեր տրանսպորտին: Կասկած անգամ չի կարող լինել այն մասին, թե այստեղ շատ բան կախված է երկաթուղային տրանսպորտի բուն իսկ դևկավարման լավացնելուց: Ապահովել կուսակցության տված դիրեկտիվների իրական կենսագործումը և իրականում պայքար ծավալել դրասեն յակային-բյուրոկրատական մեթոդների դեմ երկաթուղային տրանսպորտի դեկավարման գործում՝ սա մեր հիմնական խնդիրներից մեկն է: Առանց այս խնդրի լուծմանը մենք չենք ապահովի ժողովրդական տնտեսության զարգացման ամենահիմնական կարիքների բավարարումը:

Երկաթուղային տրանսպորտի անբավարար աշխատանքի մեջ արտահայտվում է նաև նրա տեխնիկական ապատեղինման հետամնացությունը: Այս հետամնացությունն էլ վորքան կարևոր չե շատ նույնպես պիտի վերացվի: Բեռնաշրջանառության արագ ծավալման խնդրի կապակցությամբ՝ տրանսպորտի և, ամենից առաջ, երկաթուղային տրանսպորտի տեխնիկական վերակառուցման գործը պետք է լինի մեր տնտեսական խնդիրների կենտրոնում:

Վորո՞նք են երկաթուղային տրանսպորտի վերակառուցման հիմնական ուղղները:

Երկրորդ հնգամյակում պետք իրականանա 5 հազար կիլոմետրը երկաթուղային գծերի էլեկտրիֆիկացիան: Սկսում և ծավալվել ջերմաքարշերին անցնելու գործը: Ամենադժվարացած մագիստրալներում (գլխավոր գծերում) և, ամենից առաջ, Ուրալի, Կուզբասի, Դոնբասի, Անդրբայկալյան և Ուսսուրիյան մագիստրալներում, ընդամենը 9.500 կիլոմետր տարածությամբ՝ գլխում են երկրորդ ուղեգծերը: Ավտոբլոկումը (автоблокировка) ընդգրկելու յե 8.300 կմ. հանդես առաջին հնգամյակի վերջում յեղած 582 կմ.:

Մեծ նշանակություն ունեն շարժական կազմի վերաբերմամբ ծրագրված ձեռնարկումները: Այդ ձեռնարկումների մասին կարելի յե դատել հետևյալ աղյուսակից.

Ներկաթուղային տրանսպորտի շարժական կազմի կառուցման աճումը յերկրորդ հնգամյակում.

	1932 թ.	1937 թ.	1937 թ. % ից 1932 թ.
1. Ընդամենը լոկոմոտիվներ հատիկով .	19,475	24,540	126.2
ա) ապրանքատար լոկոմոտիվներ, հատ. .	16,350	19,720	120,6
բ) ապրանքատար լոկոմոտիվների ընդհանուր քաշող ուժը, հազար. տոններով . .	193,2	297	151,3
գ) մարդատար լոկոմոտիվներ հատ . .	3,125	4,820	154,2
դ) մարդատար լոկոմոտիվների ընդհանուր քաշող ուժը, հազար տոններով . .	26,4	45,6	172,7
2 Ելեքտրաքարշեր, հատ	10	410	—
3. Ջերմաքարշեր, հատ	6	276	—
4 Ընդամենը վագոններ, հազ հատ . . .	536,9	686	127,8
ա) ապրանք. տար վագոններ, հազ. հատ .	507,9	645	127
բ) ապրանքատար վագոնների ընդհանուր բեռնատարողությունը, սկզ. տոններով . .	9,5	15,8	166,3
գ) մարդատար վագոններ, հազ. հատ . .	29	41	141,3

Այս աղյուսակից յերևում է, վոր ընդհանուր քաշող ուժը բարձրանում և նշանակելիորեն ավելի արագ, քան բուն իսկ շոգեքարշերի քանակը: Սա բացատրվում է նրանով, վոր յերկաթուղային տրանսպորտը նշանակելի չափով անցնում է «ՁԻ» տիպի ապրանքատար հզոր շոգեքարշերի և «ԻՍ» տիպի մարդատար հզոր շոգեքարշերի: Այս աղյուսակից յերևում է և այն, վոր ապրանքատար վագոնների բեռնատարողությունը նշանակելիորեն ավելի արագ է աճում, քան ապրանքատար շոգեքարշերի բուն իսկ քանակը: Սա բացատրվում է նրանով, վոր յերկրորդ հնգամյակում արտադրվում են գլխավորապես բեռնատար վագոններ: Վագոնների հիմնական տիպը դառնում է քառառանցք բեռնատար վագոնը: Ամբողջ վագոնապարկը ստերջավորվում է ինքնաթափակով և վագոնապարկի մի կիսից վոչ պակասը՝ ինքնակցումով, վոր մեծ նշանակություն ունի յերկաթուղիների վոսլատրատեղակությունը բարձացրացնելու համար:

Երկաթուղային բոլոր նոր կառուցումներից իր կառուցման

վիճակագրությամբ աչքի է ընկնում Բայկալա–Ամուրյան մագիստրալը՝ 1·400 կիլոմետր երկարությամբ: Նա միացնելու է Անդրբայկալը Ամուրի ցածրավայրերի հետ և ապահովելու է հսկայական այն տարածությունը տնտեսական կյանքի մեջ ներգրավելուն, որն իր նշանակելի մասով մինչև այժմ անմատչելի է եղել մարդուն:

Այս բոլոր ձեռնարկումները մի նպատակ ունեն՝ վերացնել երկաթուղային տրանսպորտի հետ մնալը ժողովրդական տնտեսության ընդհանուր աճումից: Երկաթուղային տրանսպորտի տեխնիկական վերազինման վերաբերյալ մատնանշված և մի շարք այլ ձեռնարկումների կենսագործումը, երկաթուղային ցանցում շարժական կազմի ռացիոնալ օգտագործումը ճիշտ կազմակերպելիս և վերանորոգման բազան համապատասխանորեն զարգացնելիս. ամբողջովին ապահովում է երկաթուղային տրանսպորտի առջև դրված խնդիրների կատարումը:

Ջրային տրանսպորտի նշանակությունը երկրորդ հնգամյակում նշանակելիորեն աճում է: Ջրուղիների ցանցն էլ է աճում: Երկրորդ հնգամյակի առաջին տարում ավարտված է Ստալինի անվան Սպիտակ–Բալթիկածովյան ջրանցքի կառուցումը 227 կիլոմետր երկարությամբ: Արդեն սկսված է և հսկայական տեմպերով առաջ է տարվում 127 կիլոմետրանոց Վոլգա–Մոսկվա—ջրանցքի կառուցման աշխատանքը,—մի ջրանցք, որը խորհրդային Միության մայրաքաղաքը դարձնում է նավահանգստային քաղաք, ուր կարող են մտնել գետային խոշորագույն նավեր: Վերջապես, երկրորդ հնգամյակում կառուցվում է Վոլգա—Դոն ջրանցքը 100 կիլոմետր երկարությամբ: Այս նոր ջրանցքների կառուցման կապակցությամբ, ջրանցքների, որոնք միացնում են Սպիտակ ծովը Բալթիկ ծովի հետ, Բալթիկ ծովը Սև ծովի հետ, Մոսկվան Վոլգայի հետ, և ներկա ջրային սիստեմների ուժեղացման կապակցությամբ (Մարիյանը և Մոսկվագետյանը)՝ ՍՍՀՄ եվրոպական մասում ստեղծվում է միասնական հզոր ջրային մի սիստեմ:

Գետային, նույնպես և ծովային տրանսպորտի նորացման և վերակառուցման գործը նշանակելիորեն պետք է ծավալվի: Սա

պահաս չափով չի հետացնի երկաթուղային տրանսպորտի գործը, որը նա կատարի իր խնդիրները:

Արդյունն ամում է ավտոուղային տրանսպորտի ժողովրդատնտեսական նշանակությունը, և ծավալվում է նոր խճուղիների կառուցումը: Մեր երկրում այս գործը մեծ ապագա ունի:

Ողային տրանսպորտը հսկայական դեր է խաղալու հեռավոր չրջանների և արդյունաբերական խոշոր կենտրոնների հետ կապ ապահովելու գործում:

Երկրորդ հնգամյակի խնդիրների կենսագործման մեջ մեծ դեր է կատարելու կապի կազմակերպումը, առանձնապես ռադիոկապի, որի նշանակությունն օրեցօր է աճում՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ռացիոնալ արագ ղեկավարումն ապահովելու գործում և կուլտուրական չինարարության մեջ:

Ի լրացումն՝ տրանսպորտի վերելքի և վերակառուցման հարցի վերաբերմամբ չես պետք է ընդգծեմ հետևյալ միտքը: Մենք հսկայական աշխատանք պետք է կատարենք մեր տրանսպորտի և, ամենից առաջ, երկաթուղային տրանսպորտի տեխնիկական վերազինման համար: Բայց հսկայական այն ներդրումները նոր տեխնիկայի մեջ, որ մենք պետք է տանք տրանսպորտին երկրորդ հնգամյակում՝ պետք է ռացիոնալ օգտագործել, ինչպես որ հարկն է: Սրա համար երկաթուղային տրանսպորտի ամբողջ կազմակերպումը պետք է հասցնել անհամեմատ ավելի մեծ բարձրության, քան այժմ է: Պետք է ընդունել, որ տրանսպորտի մեր ընկերները լրջագույն այժմյան տեխնիկական սպասողինումից էլ բավականին վատ են դրված հանում:

Մեր տրանսպորտի, և, ամենից առաջ, երկաթուղային տրանսպորտի տեխնիկական վերազինման վճիռների ամման հետ միասին հսկայական չափով աճում և նույնպես տրանսպորտի կազմակերպության պատասխանատվությունը՝ այդ նոր տեխնիկայի ճիշտ ռացիոնալ օգտագործման համար, տրանսպորտի ամբողջ աշխատանքի իրական բարելավման համար: Ինչ էլ որ լինի՝ լուծել այս խնդիրը և լուծել բոլշևիկորեն՝ ահա մեր ամենակարևոր և ամենահետաձգելի խնդիրներից մեկը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՑԵՎ ՑՈՒՐԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Տեխնիկական վերակառուցման գործի իրականացումը պահանջում է համաուրեն սրացքարիլ նոր տեխնիկայի յուրացման համար: Մենք բոլորս էլ հիանալի յենք հիշում ընկ. Ստալինի ասածն այն մասին, թե «վերակառուցման շրջանում տեխնիկան է ամեն ինչ լուծում»: Այս դուցումները առանձին նշանակություն ունեն յերկրորդ հնգամյակում, յերբ ավարտվում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը: Ուստի և կուսակցությունն ընդունել է այն, որ յերկրորդ հնգամյակում նոր չինարարության լոգունգը պետք է լրացվի նոր տեխնիկան և նոր արտադրությունները յուրացնելու լոգունգով:

Մեր հաջողությունները նոր տեխնիկան յուրացնելու և ամբողջ արտադրության կոմպակտացումը բարելավելու գործում պետք է չափվեն աշխատանքի գործնական հետևանքներով: Այս հետևանքներն իրենց արտահայտությունը պետք է գտնեն ամենից առաջ աշխատանքի արտադրողականության մեծ աճման ն. արտադրանքի ինքնարժեքի նշանակելի իջեցման մեջ: Մենք առջև ենք դրել ու ծառացած յերկրորդ հնգամյակում բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունն արդյունաբերության մեջ 63 %-ով և իջեցնելու արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը 26 %-ով: Արտադրանքի ինքնարժեքի բուն իսկ իջեցումն առաջին հերթին կախված է լինելու աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուց:

Վերջին հերթին՝ բանվորների աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուցն է, որից և կախված է արդյունաբերական արտադրանքը յերկրորդ հնգամյակում ավելացնելու ամբողջ պլանի կատարումը: Մյուս կողմից՝ յերկրորդ հնգամյակում բանվորների նյութական ու կուլտուրական մակարդակի հսկայական բարձրացումը պայմաններ է ստեղծում՝ մեր արդյունաբերության մեջ և տնտեսության այլ ճյուղերում աշխատանքի արտադրողականությունն արագորեն բարձրացնելու համար:

Ինչի՞ վրա է հիմնված աշխատանքի արտադրողականության այն բարձրացումն արդյունաբերության մեջ ու ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում, որը նախատեսել է հնգամյակը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը նախ և առաջ, հիմնվում է նոր, կատարյալ տեխնիկայի հսկայական ածման վրա ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ: Համապատասխան սրա աշխատանքի արտադրողականության և ինքնարժեքի իջեցման ամենամեծ աճումը վերաբերում է այնպիսի ճյուղերին, ինչպիսին են սև մետաղագործությունը, մեքենաշինությունը, քարածխի արդյունաբերությունը և ամբողջական առումով ծանր արդյունաբերությունը, վորտեղ էլ ունենում տեխնիկական բարյալի ամենից ավելի նշանակելի վերակառուցում: Աշխատանքի արտադրողականության աճման ամենաբարձր տեմպերը նախատեսված են նոր ձեռնարկություններում և նոր աղբյուրներում ձեռնարկություններում:

*Յերկրորդ՝ աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հիմնվում է մեր արդյունաբերական ձեռնարկություններում կիրառած աշխատանքային ժամանակի չորոգագործված հսկայական ռեզերվների ստեղծության վրա: Անվիճելի փաստերով ապացուցված է, թե վորքան այլանդակորեն և ոգտագործվում խորհրդային իշխանության կողմից մինչև յոթժամը կրճատված աշխատանքային որը ԽՍՀՄ արդյունաբերության մեջ: Ապացուցված է, վոր շատ ձեռնարկություններում բանվորների վերատված և, վոր շատ ձեռնարկություններում բանվորների վերատված և, վոր շատ ձեռնարկություններում բանվորների վերատված և

ջումը, հիմնվում է բանվորական մասսաների ակտիվության սոցիալիստական ամբողջ շինարարության մեջ։ Այս ակտիվությունն իր սքանչելի արտահայտությունը գտնում է սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության և նրա ավելի ու ավելի նոր ձևերի մեջ (որինակ, հասարակական–տեխնիկական քննությունների մեջ ձեռնարկություններում)։ Հետևելու արժանի հրանալի որինակ է հանդիսանում Լենինգրադի մի շարք ձեռնարկություններում տեխարդինկլանները մշակելու և իրականացնելու փորձը։ Տեխարդինկլանը, որը մշակվելիս մասնակցում են ոչ միայն տնտեսական ու տեխնիկական դեկավարները, այլև գործարանային բոլոր բանվորները, որոնք ստուգում են ընթի, ագրեգատների ու առանձին մեքենաների արտադրական–տեխնիկական հնարավորությունները և սրանով իսկ ակտիվորեն մասնակցում են ձեռնարկության արտադրական բոլոր ռեսուրսները հայտաբերելու գործին,— տեխարդինկլանը,— մեր տեմպերի համար պայքարելու սոցիալիստական լավագույն միջոցներից մեկն է։ Տեխարդինկլանի գաղափարի իրագործումը չի հաշվում տնտեսական «ընդհանրապես» դեկավարման հին սովորույթների հետ և ուժգնորեն բարձրացնում է բանվորական ամբողջ կոլեկտիվի պատասխանատվությունն իր ձեռնարկության համար, հենց սրանումն է մեր մեծագույն ուժը։ Իսկ բանվոր դասակարգի աճող ակտիվության տակավին քա՜նի–քա՜նի այլ ձևեր են ծավալվում մեր յերկրում։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը, վերջապես, հիմնվում է այն բանի վրա, որ տնտեսավարների, ինժեներատեխնիկական անձնակազմի և վորակյալ բանվորների կազրերը մեզանում բավականաչափ արտադրական փորձ են կուտակել և յերկրորդ հնգամյակում արագորեն աճում են։ Նրանք, վորակյալ բանվորների, ինժեներ–տեխնիկական անձնակազմի և տնտեսական դեկավարների այս կազրերը և նրանց աճող համալրումն են, որ պետք է և պատվով լուծեն տեխնիկական այն հսկայական սպառազինումը յերաշխավորելու խնդիրը, որ ժողովրդական տնտեսությունը ստանում է յերկրորդ հնգամյակում։

Մի քանի խոսք մեր կազրերի մասին, ամենից առաջ՝ վորակյալ բանվորների կազրերի մասին։

Յերկրորդ հնգամյակում այս կողմից մենք հսկայական քայլ ենք անում դեպի առաջ։ Իրոք վոր՝ առաջին հնգամյակում ժողովրդական տնտեսության մեջ են մտել 450 հազ. մարդ, վոր ստացել են ֆաբրիկա–գործարանային ուսուցման դպրոցները, այս թվում՝ արդյունաբերության մեջ ֆաբզավուչներից մտել են 300 հազար վորակյալ բանվորներ։ Յերկրորդ հնգամյակի ընթացքում ծրագրված է ֆաբզավուչներից ամբողջ ժողովածության տալ 2·5 միլիոն վորակյալ բանվորներ. այս քանակից 1,7 մլն. հոգի կմտնեն արդյունաբերության և 0,5 մլն.— տրանսպորտ։ Բացի դրանից՝ կպատրաստվեն 1,5 մլն. հոգի վերջնական գործավորներ գյուղատնտեսության համար— տրակտորիստներ, կոմբայներներ, բրիգադիրներ և այլն։ Վերջապես՝ ավտոդպրոցներում և դասընթացներում կպատրաստվեն 700 հազ. շոֆերներ ավտոտրանսպորտի համար։ Այսպիսով՝ արտադրության մեջ կներդրավվեն հնգամյակի ընթացքում մասսայական վորակավորման տակ 5 միլիոն պատրաստված նոր գործավորներ։

Մասնագետների արտադրկոմը (ВЫПУСК) տեխնիկական բարձրագույն ուսումնական հիմնարկներից (բուհերից) ու տեխնիկումներից, յերկրորդ հնգամյակում նշանակելիորեն ավելանում է առաջին հնգամյակի բաղդատմամբ։

Տեխնիկումներն արդյունաբերության գծով ավարտողների թիվն առաջին հնգամյակի 69 հազար հոգուց յերկրորդ հնգամյակում բարձրանում է մինչև 172 հազ. հոգու, իսկ բուհերն ավարտողների թիվը՝ 60 հազարից մինչև 112 հազարի։ Տեխնիկումները տրանսպորտի գծով ավարտողների թիվն ավելանում է 28 հազար հոգուց մինչև 97 հազար հոգու, իսկ բուհերն ավարտողները՝ 8 հազարից մինչև 28 հազարի։ Գյուղատնտեսության գծով տեխնիկումներն ավարտողների քանակն ավելանում է 57 հազարից մինչև 153 հազար, իսկ բուհերն ավարտողները՝ 29 հազարից մինչև 54 հազարի։ Այսպիսով՝ արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության համար մասնա-

դեմները պատրաստելու գործն արագորեն աճում է յերկրորդ հնգամյակում հանդես նախորդ հնգամյակի։ Սրան ավելացրեք և այն, որ տեխնիկումներն ու բուհերն ավարտողների վորակավորումն էլ տարեցտարի բարձրանում է։

Վերջապես՝ առենք մասնագետների քանակի մասին արդյունաբերության մեջ ու յերկաթուղային տրանսպորտում։ Արդյունաբերության մեջ միջնակարգ և բարձրագույն կրթություն ստացած մասնագետների քանակը 1932 թ. 123 հազ. հոգուց բարձրանում է 1937 թ. մինչև 300 հազ. հոգու։ Իսկ տրանսպորտում մասնագետների այսպիսի խումբը հնգամյակում բարձրանում է 10 հազարից մինչև 41 հազարի։

Այսպիսով՝ մեր արդյունաբերությունն ու տրանսպորտը, այլև գյուղատնտեսությունը յերկրորդ հնգամյակի տարիներին համալրվում են հսկայական քանակությամբ նոր մասնագետներով, մասնագետներ, վորոնց մեծ մասը ունի և խորհրդային իշխանության, մասնագետներ, վորոնք պատրաստված են նոր տեխնիկայով և նոր պայմաններում աշխատելու համար։ Սա մի հսկայական կապիտալ է, վորը պրոլետարական պետությունը մեծ ամբողջ է, վոր կարողանում է տնօրինել։

Պետք է ասել նաև այնպես ԽՍՀՄ մեջ ծավալված գիտա-տեխնիկական աշխատանքի մասին։ Մենք կարիք ունեցանք շատ բան ուսումնասիրելու ուսարերկրյա տեխնիկայից, ուսարերկրյա մասնագետներից։ Այդ ուսուցումը դառարկ տեղը չանցավ։ Մեզանում արդեն աճել են գիտության ու տեխնիկայի նշանակելի չափով նոր կադրեր։ Յերկրորդ հնգամյակում տնտեսական, տեխնիկական վերակազմման գործում մենք արդեն նշանակելի չափով հենվելու յենք խորհրդային տեխնիկայի նվաճումների վրա։ Գիտա-տեխնիկական աշխատանքի չաղկապումը սոցիալիստական պրակտիկայի հետ ավելի ու ավելի սերտ է դառնում, և գիտա-տեխնիկական աշխատանքը ԽՍՀՄ մեջ ավելի ու ավելի միավորվում է սոցիալիստական շինարարության մրառնական պրոցեսի։

Պրոլետարական արտադրա-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելը, նեղատյալ գիտա-տեխնիկական կադրերը՝ վերջին ժամանակաշրջանի կարևորագույն խնդիրն է յեղել։ Այս խնդրի լուծման մեջ յերկրորդ հնգամյակում մենք արագորեն առաջ ենք շարժվում։ Բանվորների ու աշխատավորության ամբողջ պահպանձի կուլտուրական հսկայական աճման հետ միասին, վորակյալ բանվորների նոր կադրեր պատրաստելու հսկայական թափի հետ միասին խորհրդային իշխանությունն իր տրամադրության տակ է ստանում տեխնիկայի ու տնտեսության տարբեր ճյուղերի հազարավոր նոր մասնագետներ։ Այս կադրերի հետ մենք կարող ենք ձեռք գարկել նոր տեխնիկան ու նոր արտադրությունները յուրացնելու խոշորագույն խնդիրների լուծմանը և հասնել նրան, վոր մեր ձեռնարկությունները իրոք կուլտուրական, ստեղնիսատար աշխատեն։ Այս կադրերի հետ մենք համարձակորեն կարող ենք ձեռք գարկել ժողտնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցման խնդրի ամբողջական և ժողտնտեսության վերելքի վերաբերմամբ յերկրորդ հնգամյակի դրած ծրագրի կատարմանը։

Այս ամենը պետք է ասած ԽՍՀՄ-ի արտադրողական ուժերի մի այնպիսի աճում, վորի նմանը դեռ վոչ մի յերկրում չի յեղել, վորի նմանը չենք ունեցել և մենք անցյալ տարիներում։ Խորհրդային Միությունը վոչ միայն արդյունաբերության աճման տեմպերով, այլև արդյունաբերական հիմնական ճյուղերի դասդասման մակարդակով հսկայաբար առաջ է և շարժվում՝ անցնելով Յեվրոպայի ամենաառաջավոր յերկրներից։ Սա տեսնում ենք հետևյալ աղյուսակից, վոր բերել է ԽՍՀՄ Պետպլանը «Յերկրորդ հնգամյա պլանի նախադիծը» գրքի 1-ին հատորում։

ԽՍՀՄ տեղը համաշխարհային արդյունաբերության արտադրանքի մեջ*)

Արտադրանքի տեսակները	1913	1918	1932 թ. **		1937 թ. **	
	Ամբողջ աշխարհում		Ամբողջ աշխարհում	Եվրոպայում	Ամբողջ աշխարհում	Եվրոպայում
Ամբողջ արտադրանքը	—	5	3	2	2	1
Էլեկտրաէներգիան	15	10	7	4	2	1
Ֆարածուխը	6	6	4	3	4	3
Տորֆը	—	—	1	1	1	1
Նավթը	2	3	2	1	2	1
Թուջը	5	6	5	4	2	1
Պողպատը	5	5	5	4	2	1
Ընդհանուր մեքենաշինությունը	4	4	2	1	2	1
Գյուղատնտեսական մեքենաշինությունը	—	4	2	1	2	1
Տրակտորները	—	4	2	1	2	1
Կոմբայնները	—	—	2	1	2	1
Ավտոմոբիլները, ընդամենը	—	12	7	5	5	3
Այդ թվում՝ բեռնատար ավտոմ.	—	11	6	4	2	1
Գլենը	7	9	9	2	3	1
Ալյումինը	—	—	11	9	2	1
Ցեմենտը	—	8	7	5	2	1
Ֆոսֆորային պարարտանյութերը (սուպերֆոսֆատ)	—	18	9	6	2	1

Այս աղյուսակից երևում է, որ յերկրորդ հնգամյակի վերջերին մեր յերկրի դիրքը համաշխարհային արտադրանքի մեջ անցյալի բազմաամամբ արմատապես փոխվում է: ԽՍՀՄ-ն ամբողջ արդյունաբերության արտադրանքի չափերով առաջին հնգամյակի նախորյակին ամբողջ աշխարհի պետությունների շարքում հինգերորդ տեղն էր գրավում: Յերկրորդ հնգամյակի նախորյակին ԽՍՀՄ-ն արդեն անցել է ամբողջ աշխարհում յերրորդ տեղը և Եվրոպայում՝ յերկրորդը տեղը: Մեր յերկրի արդյունաբերական արտադրանքը յերկրորդ հնգամյակի վերջերին

*) Կապիտալիստական աղբյուրը «Annuaire Statistique de la Société des Nations»-ի 1932 թ. տվյալներով:

**) 1932 և 1937 թ. թ. կապիտալիստական յերկրների 1929 թ. արտադրության համեմատությամբ:

ամբողջ աշխարհում կդրավի յերկրորդ տեղը, Եվրոպայում՝ առաջին տեղը: Կապիտալիստական յերկրներին տեխնիկական-արտադրական կողմից «հասնելու և անցնելու» խնդիրն իրագործվում է դարձնականում:

Սորհրդային Միությունը տնտեսության բոլոր բնագավառներում դառնում է առաջավոր տեխնիկայի յերկիր: Սորհրդային Միությունը դառնում է մի յերկիր՝ ուր արդյունաբերության ու գյուղատնտեսության արդյունքներով: Կատարելով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերազինումը՝ Սորհրդային Միությունը դառնում է մի յերկիր, ուր ամբողջ տնտեսության, տեխնիկայի ու կուլտուրայի հետագա զարգացման գործում բացված են անսահման հնարավորություններ, որոնք արժանի չեն սոցիալիստական դասակարգ հասարակության լիակատար կատարելման գործին:

II

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումն ու աշխատավոր մասսաների բարեկեցության և կուլտուրայի արագ բարձրացումը չի կարելի իրագործել առանց նոր շինարարության ահագին ծավալման: Յերկրորդ հնգամյակում նոր շինարարությունը արագորեն ծավալվում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում՝ թե՛ ծանր, թե՛ թեթև արդյունաբերության մեջ, թե՛ տրանսպորտում, թե՛ գյուղատնտեսության մեջ: Յերկրորդ հնգամյակի կապիտալային աշխատանքների պլանի առանձնահատկությունը ԽՍՀՄ-ի արտադրողական ուժերի նոր, աչքի ընկնող կանոնավոր տեղադրումն է: Այստեղ իր լիակատար զարգացումն և առանում կուսակցության ու կառավարության դիրքավորումը, որ նպատակ ունի արդյունաբերության ավելի համաչափ տեղադրումը ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա, արդյունաբերության մասեցումը հումքի և էներգիայի աղբյուրներին, հետամնաց ազգային հանրապետությունների ու մարզերի տնտեսական ու կուլ-

տուրական արագացված վերելքի ապահովումն և նշանակելի առաջ-
ընթացումն քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրության վոչնչաց-
ման ճանապարհին:

Յերկրորդ հնգամյակի նոր շինարարության թեմերի մասին խո-
սում և համեմատությունն առաջին հնգամյակի հետ: Յեթե առա-
ջին հնգամյակում ըստ ժողովրդական տնտեսության կապիտալա-
յին աշխատանքների ամբողջ ծավալը կազմում եր 50,5 միլիարդ
ռուբլի, ապա յերկրորդ հնգամյակում նա հասնում և 133,4 մի-
լիարդ ռուբլու, այսինքն մեծանում և 2,6 անգամ:

Կապիտալային շինարարության ուղղությունն ըստ առանձին
ճյուղերի յերևում և հետևյալից.

Կիսից ավելին, այն է՝ կապիտալային ծախսումներից 69,5 մի-
լիարդ ռուբլին հատկացվում և արդյունաբերության զարգացման:
Այդ ծախսումների մեծ մասը, այն է՝ 53,4 միլիարդ ռուբլին, վոր
կազմում և կապիտալային աշխատանքների ամբողջ ծավալի 40%-ը,
գնում և արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերու-
թյան զարգացմանը: Դրանով ապահովվում և ծանր արդյունաբե-
րության, վորպես յերկրի ինդուստրացման հիմքի, հետագա զար-
գացումը:

Մյուս կողմից, կապիտալային ծախսումների մեծացման տեմ-
պերը թեթև և սննդի արդյունաբերության մեջ զգեթե յերկու ան-
գամ բարձր են ծանր արդյունաբերության տեմպերից: Այդ ծախ-
սումները առաջին հնգամյակում կազմում եյին 3,5 միլիարդ ռուբ-
լի, իսկ յերկրորդում 16,1 միլիարդ ռուբլի կին, վոր նշանակում
և մեծացում 4,6 անգամ: Սպառման առարկաներ արտադրող
արդյունաբերության այդպիսի ծավալումն ամբողջովին համա-
պատասխանում և յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրներին:

Կապիտալային աշխատանքներն ըստ գյուղատնտեսության
(խորհտնտեսություններ, ՄՏԿ, կոլտնտեսություններ) նույնպես
նշանակելի չափով մեծանում են—առաջին հնգամյակի 9,7 մի-
լիարդ ռուբլուց մինչև յերկրորդ հնգամյակի 15,2 միլիարդ ռուբ-
լին, այսինքն մեծանում են ավելի քան մեկ ու կես անգամ: Այստեղ
նշված 15,2 միլիարդ ռ. գումարի մեջ չի հաշված այն, ինչ վոր

իրենք կոլտնտեսությունները են կառուցելու և ինչ վոր վոչ հա-
վելումի չի կազմի գյուղատնտեսության բնագավառում կատարելիք
շինարարության պլանի մեջ: Առանձնապես արագ են աճում կա-
պիտալային աշխատանքներն ըստ ՄՏԿ, մեծանալով ավելի քան
հինգ անգամ: Դրա հետևանքով ՄՏԿ իրենց աշխատանքով կբնո-
ղդրկեն կոլտնտեսական յանքերի ամբողջ տարածությունը: Խորհ-
տնտեսական շինարարությունը պետք և բոլոր նախադրյալներն
ստեղծի խորհտնտեսություններն որինակելի ձեռնարկություններն
վերածելու համար՝ ինչպես գյուղատնտեսության բնագավառում,
այնպես էլ կենդանաբուծության:

Ըստ տրանսպորտի կապիտալային աշխատանքների աճումը
սահմանված և միջին մակարդակից բարձր: Այստեղ շինարար-
թյունն աճում և առաջին հնգամյակի 8,9 միլիարդից մինչև յեր-
կրորդ հնգամյակի 26,3 միլիարդ ռուբլին, այսինքն յերեք անգամ:

Յերկրորդ հնգամյակի շինարարական ծրագրերի կարևորագույն
մոմենտն և հանդիսանում չհատկացրածման մեջ նոր ձեռնարկութ-
յուններ մտցնելու պլանը: Կապիտալային աշխատանքների ընդհանուր
պլանի 133 միլիարդ ռուբլու պարագայում նոր և վերակառուցվող
ձեռնարկությունները չհատկացրածման մեջ մտցնելու ծախս սահ-
մանվում և 132 միլիարդ ռուբլու մի պումար, զգեթե յերեք անգ-
ամ ավելի, քան չհատկացրածման մեջ եր մտցված առաջին հնգ-
ամյակում: Դա բացատրվում և, մի կողմից, առաջին հնգամյա-
կից վերանցող շինարարության նշանակելի չափերով, իսկ, մյուս կողմից, նրանով, վոր մեր կողմից կուտակված շինարա-
կան փորձը պետք և ապահովի շինարարության ավելի արագ տեմ-
պեր:

Կապիտալային աշխատանքների ընդունվող մաշտաբը և նոր
ձեռնարկություններ չհատկացրածման մեջ մտցնելու ծրագրերն ապա-
հովում են ժողովրդական տնտեսության հիմնական գործող ֆոն-
դերի ահագին աճումներ: Ջանազան ձեռնարկությունների մեջ
ներդրված այդ ֆոնդերի ընդհանուր գումարը հնգամյակի ընթաց-
քում 85 միլիարդ ռուբլուց աճում և մինչև 195 միլիարդ ռուբլի, վոր
նշանակում և յերկրի հիմնական ֆոնդերի մեծացումն 2,3 ան-

դամ,— ըստ արդյունաբերության այդ ճոնդերն աճում են 3 անգամ, ըստ գյուղատնտեսության ու տրանսպորտի՝ 2 անգամ: Դրանով հենց արդյունաբերության առաջատար դերն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ է՛լ ավելի է ամրապնդվում:

Շինարարության այս պլանը ապահովում է վոչ միայն արտադրական ծրագրի կատարման համար անհրաժեշտ՝ տեխնիկական բազայի աճումն, այլև ըստ արդյունաբերության մի շարք ճյուղերի նմանատիպ կարողությունների մեծ պահեստների (резервмощностей): Արտադրական կարողությունների՝ յերկրորդ հնգամյակում ստեղծվող մեծ պահեստները մեռտադրության մեջ, քարածուխի, էլեկտրակայանների և այլ ճյուղերի բնագավառում՝ ժողովրդական տնտեսության հետագա ուժեղ զարգացումը հնարավորություն կտան յերրորդ հնգամյակում:

1

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ

Թե ինչպես և ծավալում շինարարությունն ըստ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի՝ յերևում է հետևյալից.

Յերկրորդ հնգամյակի ընթացքում գործարկվում են 94 նոր մեքենաշինական գործարաններ: Այդ ժամանակաշրջանում ավարտվում և առաջին հնգամյակում սկսված կառուցումը ծանր մեքենաշինության Ուրալյան գործարանի (100 հազար տոննա արտադրությամբ) և կրամատորսկի գործարանի (150 հազ. տոննա արտադրանք), նմանապես և քիմիական ապարատուրայի հզոր գործարանի կառուցումն Ուրալում: Ավարտվում են Լուգանսկի շոգեկառքաշինական գործարանի կառուցումը (տարեկան կարողությունը՝ 1080 «ՓԴ» շոգեկառք), Որսկու շոգեկառքա և ջերմակառքաշինական գործարանի կառուցումը (կարողությունը՝ 500 շոգեկառք և 500 ջերմակառք), Կաչկարայի էլեկտրակառքաշինական գործարանի կառուցումը (կարողությունը՝ 300 մագիստրալային շոգեկառքեր): Մառնակերտն վերջացվում և Ուրալի 54 հազ. քառատոնակ վագոնների կարողություն ունեցող վագոնաշինական գործարանը և ծավալվում է Կուզնեցկի ու Նովո-Ձերկասկի շոգեկառքաշինական գործարանների և Կազանի վագոնաշինական գործարանի կառուցումը: Ծավալվում և գետային ու ծովային նավակառուցման գործարանների մեծ խմբի շինարարությունն այնպիսի խոշորագույն նավակառուցողական գործարանների ավարտմամբ, ինչպիսին նավագործարանն է Կոմսոմոլսկում, Հեռավոր Արևելքում: Ավարտվում է 50 հազար մոտորի արտադրանք ունեցող մոտորագործարանի կառուցումն Ուֆայում: Ընդլայնվում են Գորկիյ քաղաքի ավտոգործարանը՝ մինչ 300 հազար մեքենա, Ստալինի անվան՝ Մոսկվայի ավտոգործարանը— մինչ 80 հազար մեքենա (այդ թվում 10 հազար մարդատար մեքենա «Բյուիկ» ածխի) և Յարոսլավլի գործարանը՝ մինչ 25 հազար հնգաուժն բեռնամեքենայի արտադրանքի կարողությամբ: Բացի դրանից, յերկրորդ հնգամյակում կառուցվում են Ուֆայի և Ստալինգրադի ավտոգործարանները՝ յուրաքանչյուրը 100 հազարական յեռաուժն բեռնամեքենաների արտադրանքի կարողությամբ և Սամարայի ավտոգործարանը 25 հազար հնգաուժն բեռնամեքենաների արտադրությամբ: Ավտոշինարարության համար ծավալվում և հարակից արտադրությունների գործարանների մեծ խումբ, որոնց թվում 24 միլիոն հատի կարողություն ունեցող՝ դնդակակուսցքակաշկների (шарикоподшипник) հզոր գործարան, ավտոէլեկտրատարքավորման և ավտոպարագաների գործարաններ: Ավարտվում և Խարկովի տուրբոդիզելատորային գործարանը՝ 1,5 միլիոն կիլովատի և կառուցվում են Ուրալի տրանսֆորմատորային ու էլեկտրապարատային գործարանը, մի շարք էլեկտրատեխնիկական գործարաններ Մոսկվայի մարզում և Մերձվոլգյան նահանգներում, տասը դաղդյահաշինական գործարաններ, որոնք արտադրում են վաղորկով (шлифовальный), շառավղաշարժով (радиально—сверлильные), առամահատ, ավտոմատիկ և ծանր դազդյահներ: Ծավալվում և մանածատարքավորման, ներկարարա-ապրետուրային սարքավորման մի խումբ գործարանների կառուցումը, նմանապես և ոսկի, անտառամշակ և թղթի արդ-

դյունաբերության համար զանազան տեսակի տարբավորման արտադրությունը: Սրանով ամենևին էլ չի սպառվում այն խոշոր մեքենաշինական գործարանների ցուցակը, որոնք կառուցում են մեր յերկրորդ հնգամյակում:

Էլեկտրիֆիկացիայի բնագավառում կառուցվում է 79 շրջանային կայանների, այդ թվում 48 նոր էլեկտրակայանների կառուցումը: Ահագին շինարարություն է ծավալվում Մխուբյան հիմնական արդյունաբերական շրջաններում—Մոսկվա Լենինգրադ, ածխամետաղագործական բազան Ուկրաինայում և Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը: Բարձրավոլտ էլեկտրական հաղորդալարերով Մոսկվան, Իվանովը, Գորկին, մի քանից հետ, բացի դրանից Արևելքում— հյուսիսային և հարավային Ուրալը մինչև Ուրալի հետ և Ուկրաինայում Դոնբասը Դնեպրակոմբինատի հետ միացնելը նշանակում է ԽՍՀՄ արդյունաբերության հիմնական շրջանները միավորող միասնական բարձրավոլտ ցանցի ստեղծման նախապատրաստումն:

Արդյունաբերական հիմնական շրջանները, լիակատար չափով ապահովվում են էլեկտրաէներգիայով: Էլեկտրաշինարարություն ծավալվում է և արտադրության ածուխ և նաև նոր շրջաններում:

Մոսկվայի հանդույցը նշանակելի չափով ուժեղացվում է և լիովին ապահովում է էլեկտրաէներգիայով ու ստանում է Մոսկվայի շրջանի կարիքների համար կարողության անհրաժեշտ ռեզերվ: Դրա հետ միասին Մոսկվան դառնում է ԽՍՀՄ-ում և ամբողջ աշխարհում խոշորագույն ջերմահաղորդ հանդույց (теплофикационный узел), Լենինգրադը հուսալիորեն ապահովված կլինի էլեկտրաէներգիայով, որի արտադրությունը կախված չի լինի բերվող վառելիքից: Ածխա-մետաղագործական բազան Ուրալում նույնպես ապահովվում է լիակատար չափով: Դոնեցկի և Դոնբասի էներգետիկ հանդույցների միացումը, ինչպես նաև նրա մեջ Հյուսիսային Կովկասի ածխա-մետաղագործական շրջանի ներառումն այդ էներգետիկ սիստեմը դարձնում է ամբողջ աշխարհում ամենախոշոր սիստեմը, որի ընդհանուր կարողությունը յերկրորդ հնգամյակի վերջում լինելու է յերկու միլիոն կիլովատ՝

9 միլիոնրդ կիլովատ-ժամի հնարավոր արտադրությամբ: Ուրալում էլեկտրաշինարարությունը ծավալվում է տեղական ածուխի բազայի վրա:

Հարածուխի արդյունաբերության մեջ ծավալվում է խոշոր շինարարություն, որ թույլ է տալիս չհազդրծման մեջ մտցնել 178 ածխի շախտա 143 միլիոն տոնն կարողությամբ: Պլանի մեջ նախատեսված է 65 նոր շախտաների կառուցումը, որոնք ապահովելու են ածխահանման հետագա զարգացումը յերկրորդ հնգամյակի առաջին տարիներում:

Նավթարդյունաբերության մեջ կապիտալային աշխատանքները ամբողջ ծանր արդյունաբերության մյուսների տեմպից նշանակելի չափով բարձր են նախագծված: Առանձնապես կարևոր և նավթամբերամշակող գործարանների կառուցումը՝ առաջնային Բորման 46 խողովակագործարան (трубчаток) և 93 կրեկինգ: Յերկրորդ հնգամյակում նախատեսված են մի շարք նավթամուղների կառուցման ավարտումն՝ Կասպից—Որսկ, Մախաչկալա—Վորոնեժ, Նեֆտեդաղ—Կրասնովոդսկ,— Բաքու—Բաթում նավթամուղի ընդլայնումն ու արդյունամուղների (продуктопроводов) կառուցումն՝ Գրոզնի—Արմավիր և Տխուզովոյա—Դնեպրոպետրովսկ:

Սև մետաղագործության մեջ ավարտվում են հետևյալ գործարանները—Մագնիտոգորսկի գործարանը՝ 2,7 միլիոն տոնն թուջի, Կուզնեցկինը՝ 1 միլիոն տոնն թուջի, Ջապորոժյեի գործարանը, Աղովզոդսպատը, Կրիվոյ Րոգինը, Տուլայինը, Լիպեցկինը, Պետրովսկ-Ջաբայկալսկինը և Նիկոպոլի ու Առաջինուրալյան խողովակագործարանները: Կիսաչափ կարողությամբ ավարտվում և Տագիլի գործարանի կառուցումը, գործարկվում են Կալևկի գործարանի յերկու հրահալոցները, ծավալվում և Խալիլի գործարանի, Կուզնեցկի յերկրորդ և Հեռավոր-Արևելյան գործարանների կառուցումը, որոնց առաջին ագրեգատները պետք և գործարկվեն հնգամյակի վերջում:

Գունավոր մետաղագործության մեջ ավարտվում է 100 հազար տոնն պղինձ տալու կարողությամբ Մերձբալխաշյան կոմբինատը,

Մ լ ջ ի ն – Ուրալյան կոմբինատը՝ 50 հազար տոննն պղնձի արտադրության կարողությամբ: Կառուցվում է Ուրալի և Անդրկովկասի հին պղնձաձուլարկուբյունների վերակառուցումը՝ նրանց կարողությունը տարեկան մինչև 80—85 հազարի հասցնելու նախատեսումով: Ավարտվում է 60 հազար տոննն արճիճ արտադրելու կարող Կաշլոլիա մետաղի կառուցումը: Արդացվում է Բիդդելի պոլիմետաղային հարուստ քաղայի ոդոտադրումը: Ձինկի դործարաններ են կառուցվում Զելյաբինսկում և Որջոնիկիձեյում: Նամանավանդ ավարտվում է Վոլխովոյի և Դնեպրոպետրովսկի ալյումինիումի դործարանների կառուցումը, Ուրալի չրջանում կառուցվում է ալյումինիումի նոր դործարան՝ 25 հազար տոննի և կաբելային դործարանը՝ 8 հազար տոննի: Մեծ նշանակություն է տանում այն չինարարությունը, որն ապահովում է մաղնիումի, նիկելի, անադի և հազվադյուտ մետաղների արտադրությունը:

Ֆիմիայի բնագավառում ծավալվում է պարարտանյութային նոր կոմբինատների, սինթետիկ կաուչուկի դործարանների, անիլանեթրկային և լաքանեթրկային արդյունաբերության, պլաստիկ դանդվածների, սոդայի, ծծմբաթթվի, ունդինի, արհեստական թելիկի (волокно) և այլնի դործարանների կառուցումը:

Թեթև արդյունաբերության մեջ չինարարության ծավալումն առանձնապես նշանակելի է առաջին հնդամյակի համեմատությամբ: Դա յերևում է նրանից, որ յերկրորդ հնդամյակում կառուցվում են 15 նոր խոշորագույն կոմբինատներ: Այդ կոմբինատներից հինդը՝ Տաշկենտինը, Բարնաուլինը, Մոլենտինը, Զարչուկինը և Անդրկովկասյանն ունեն 200 հազարական իլիկի կարողություն: Կառուցվում են բրդեղենի 12 խոշոր ֆաբրիկաներ՝ յուրաքանչյուրը 8–ից մինչև 15 միլիոն մետր դործվածքի կարողությամբ, 12 վուշեղենի ձեռնարկություններ՝ յուրաքանչյուրը 18–ից մինչև 27 հազար իլիկի կարողությամբ, արհեստաժի արտյունաբերության 18 խոշոր ձեռնարկություններ, 13 կոտնինի ֆաբրիկա, 11 մետաքսեղենի ֆաբրիկա, 21 վոտնամանի ձեռնարկություն, 100 միլիոն դույլի կարողությամբ, 42 կաբի ֆաբրիկա,

19 տալակեդործարան, յերաժշտական դործիքների 8 ձեռնարկություն և բազմաթիվ այլ ձեռնարկություններ:

Սննդարդյունաբերության մեջ չինարարության ծավալումը նույնպես նշանակելի չափով բարձր է անցյալ տարիների մակարդակից: Այստեղ յերկրորդ հնդամյակում սկսված 17 մսակոմբինատի կառուցումը և ծավալվում է 23 նոր մսակոմբինատների կառուցումը: Բացի դրանից չաղործման մեջ են մտցվում 14 չաքարի դործարան, 21 պահածոյի դործարան, 36 հյուչակաֆաբրիկա, 59 խոշոր ոսուներան, 47 աղացախոմբինատ և չատ ուրիչ ձեռնարկություններ:

Ա ն տ ա ռ ա յ ն ա ր դ յ ու ն ա բ ե ր ու թ յ ա ն մեջ ծավալվում է մեծ քանակություն կապող վարդասաղոցարանների, փայտաքիմիական ձեռնարկությունների ֆաներային և այլ դործարանների կառուցումը: Ավարտվում է Կամայի և Կոնդոպոժի ցելուլոզաթղթի կոմբինատները, Նամանավան և Այսոսի ցելուլոզի կոմբինատ, բաչկիրական և կրասնոյարսկի թղթի կոմբինատների կառուցումը: Կառուցվում են կահկարասեղենի նոր ֆաբրիկաներ և այլն:

ԽՍՀՄ-ում արդեն ստեղծվել է կառուցողական ինդուստրիա, վորպես արդյունաբերության հատուկ ճյուղ: Յերկրորդ հնդամյակում կառուցողական մեխանիզմների պարկը նշանակելի չափով ամում է և կառուցման հիմնական պրոցեսների մեխանիզացիան հասնում է 80 %–ի, և ել ավելի բարձր մակարդակի: Շինարարության մեծ թափի կապակցությամբ յերկրորդ հնդամյակում առանձնապես մեծ նշանակություն է ստանում կառուցողական նոր տեխնիկայի լայն ու հմուտ կոդտադործման հարցը՝ ներառելով նաև ոտարերկրյա փորձի լավադույն նվաճումները:

Մի ընդհանուր նկատողություն էլ անեմ արդյունաբերական շինարարության մասին:

Մենք հպարտանում ենք, վոր մեր արդյունաբերությունը հասել է համակենտրոնացման բարձր աստիճանի և արտադրության ամենաոդտավետ ճյուղերում ներկայացված է դործարան–գիդանոցով: Մենք պետք է այսուհետև էլ ոդտադործենք արդի առաջնակարդ տեխնիկայով սարքավորված խոշոր և խոշորագույն ձեռ–

նարկութիւնների բոլոր առավելութիւնները: Դա ապահովում է յերկրորդ հնգամյակի պլանով: Սակայն արդյունաբերութիւնի համակենտրոնացումը չի կարելի չվճռել այն հիվանդութիւնի հետ, որը կոչվում է «դիսպանսերութիւն» չինարարութիւնի մեջ: Այդ մասին անհրաժեշտ է հիշել առանձնապես այժմ, յերբ նոր չինարարութիւնի կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է արդյունաբերութիւնի ծավալումը նոր շրջաններում, արդյունաբերական ձեռնարկութիւնների ստեղծումը սակավարդյունաբերական մարզերում և արդյունաբերութիւնի մոտեցումը հումքի ու վառելիքի աղբյուրներին: Սրանից յելնելով, մենք, որինակ, անհրաժեշտ գտանք ծավալել վոչ թե մեկ-յերկու նոր ավտոդործարանների, այլ շորս ավտոդործարանների կառուցումը ԽՍՀՄ-ի տարբեր մարզերում: Հայտնի յե նմանապես կկ վարչումը հացահատիկային խորհտնտեսութիւնների ապահովորացման մասին:

Արդյունաբերութիւնի ահագին ծավալման հետ միասին պիտի զարգանա քաղաքային չինարարութիւնը և նոր քաղաքների կառուցումը: Ցերկրորդ հնգամյակում պետք է լայնորեն ծավալվի հարյուրավոր արդյունաբերական կենտրոններն բարեկարգ քաղաքների վոխակերպելու աշխատանքը:

Այստեղ որինակ կարող է ծառայել մեր մայրաքաղաքը—Մոսկվան, վորը վերջին տարիներս քիչ չի արել իր քաղաքային չինարարութիւնի մեջ: Բայց վորքան են խնդիրները ճնում այստեղ և, յերևում է հետևյալից: Առաջին հնգամյակում Մոսկվայում շատ բան է արված փողոցները, ասֆալտները (мостовые), խճուղիները բարելավելու համար: Այդ աշխատանքն, իհարկե, դեռևս ամենևին էլ ավարտված չի և սրանից հետո յել է չարունակվելու: Բայց յերկրորդ հնգամյակում Մոսկվան պետք է ի կատար ածե ավելի բարդ խնդիրներ ևս. նախ, կառուցի Մոսկվան վոլգայի հետ միացնող խոշոր ջրանցք, յերկրորդ, կառուցի առաջին մետրոպոլիտենը ԽՍՀՄ-ում: Մոսկվայի մետրոյի առաջին հերթը բանել և սկսում արդեն հոկտեմբերի 17-րդ տարեդարձին: Այդ չինարարութիւնի մեջ արդեն ըրաղված են ավելի քան 35 հազ.

բանվոր և աշխատանքը կատարվում է իսկական բոլշևիկյան տեմպերով:

Առանձին կառուցումներից կենտրոնական մի կառուցում Լենինգրադում: Գիտական մտքի համար աչքի ընկնող նշանակութիւն ունի յերկրորդ հնգամյակում այստեղ ավարտվող կառուցումը, վոր տալիս է նոր խոշորագույն բազա Եքսպերիմենտալ Բժշկականութիւնի Համամիութենական Ինստիտուտի (Всесоюзный Институт Экспериментальной Медицины,—ВИЭМ) աշխատանքների համար, վորի նպատակն է մարդկային որգանիզմի, նրա առողջութիւնի ու նրա հիվանդութիւնների կոմպլեքսային ուսումնասիրութիւնը և բժշկականութիւնի զարգացումը, վորպես գիտութիւնի: Այդպիսի ինստիտուտ արտասահմանում չկա: Նրա ստեղծման մեջ չի կարելի չտեսնել նոր վերաբերմունք ԽՍՀՄ-ում դեպի և մարդը և դիտութիւնն այն յերկրում, վորտեղ կառուցվում է սոցիալիզմ:

Բոլոր սովորական շրջանակներից դուրս է գալիս կառուցումը Մորֆուդների Պալատի, մի վիթխարի շենքի, վորը միաժամանակ պետք է պատվանդան դառնա մեծն Լենինի հսկայական անդրիի համար: Այդ շենքի կառուցումը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթանակի նշանավորումն է: Ցեվ մենք պետք է նրա ավարտումը դիտի բերենք յերկրորդ հնգամյակում:

2

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵՂԱԴՐՈՒՄՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Ցերկրորդ հնգամյակի չինարարական ծրագրի մեջ ահագին նշանակութիւն ունի չինարարութիւնի նոր տեղադրումը յերկրի տերիտորիայում: Շինարարութիւնի այս նոր տեղադրումը նկատի ունի յերկու խնդրի լրագործումը. նախ, յերկրի բնական հարստութիւնների ոգտագործման ամենակարող ուժեղացումը այն շրջաններում, վորոնք անցյալում յետ են մնացել և վորոնք պետք է դառնան ինդուստրիայի զարգացման նոր շրջաններ և, յերկրորդ, տնտեսական ու կուլտուրական արագացված բարձրացում այն հետամնաց ազգային հանրապետութիւնների և

մարզերի, որոնց հետամնացության մեջ դեռ մինչև վերջ եւ զգացվում է ցարական–գաղութային ռեժիմի ժառանգությունը:

Բնութենական ռեսուրսներով մեր երկիրը ամենահարուստ երկրներից է:

Աշխարհի երկրների մեջ մենք բռնում ենք առաջին տեղը կամ առաջին տեղերից մեկը ըստ այնպիսի բնութենական հարստությունների, ինչպես երկաթն է, ածուխը, նավթը, գունավոր մետաղները, նմանապես և անտառն ու ջրային էներգիան: Մեր երկրաբանների աշխատանքը վերջին տարիների ընթացքում խիստ ծավալվեց, ավելց նշանակելի արդյունքներ և հետագայում էլ պետք է ամենակերպ ստացվեն դրանից մեր կողմից:

Ճերմաթի հանքանյութի ընդհանուր պաշարները ՍՍՀՄ–ում հաշվվում են մոտավորապես 240 միլիարդ տոննա, որը կազմում է համաշխարհային երկաթահանքանյութային բոլոր ռեսուրսների համարյա 50 տոկոսը: Այդ պաշարները չորս անգամ գերազանցում են ամբողջ Ճերմանային պաշարներից: Մեր հայտնաբերված ածխային ռեսուրսները Հոկտեմբերյան հեղափոխության տարիներում մեծացել են 5 անգամ: Ըստ ածխային ռեսուրսների ՀԱՄՆ–ից հետո ՍՍՀՄ ամենահարուստ երկիրն է: Որհրդային Միության նավթային պաշարները վորոշվում են յերեք միլիարդ տոննա և կազմում են համաշխարհային ռեսուրսների յերրորդ մասը: Մեր հետամնացությունն ուժեղ կերպով յերևան է գալիս գունավոր մետաղների հետախուզումների մեջ: Մեր ռեսուրսներն ըստ պղնձի, արճիճի, ցինկի, նիկելի առայժմ կազմում են համաշխարհային պաշարների 5–ից մինչև 10%–ը: Բայց վերջին տարիներս, ուժեղացված հետախուզումների շնորհիվ գունավոր և հազվագյուտ մետաղների ռեսուրսները աճում են արագ կերպով (վոլֆրամ, մոլիբդեն, վիսմուտ, բերիլիում): Անտառային հարստությունները մենք մինչև այժմ գնահատ ամենաանճշտորեն չափով ենք ոգտագործում, իսկ այդ առիթով մեր հնարավորությունները ուղղակի անսահման են: Դրա հետ միասին չի կարելի չնշել անտառների վոչնչացման անթույլատրելիությունը կենտրոնից շատ մոտ գտնվող շրջաններում և անտառամշակութային ձեռնարկումների թուլությունը յերաշտային շրջաններում: Մեր ջրային ռեսուրսներն առաջ շատ վատ էին ոգտագործվում: Որհրդային իշխանության որով մեծ առաջին անգամ կատարվել սկսեցին ՍՍՀՄ–ում խոշոր հիդրո–էլեկտրակայաններ:

Թե վորքան վատ էին հետազոտվում և ոգտագործվում յերկրի բնութենական հարստությունները, յերևում է հետևյալից: Հին Ռուսաստանում, յերբ վերցնենք նրան այժմյան սահմաններում, յերկաթահանքերի մշակումը կատարվում էր գրեթե բացառապես յերկրի հարավում և փոքր չափով Ուրալում: Դոնբասը տալիս էր ամբողջ հանած ածուխի 86%–ը, իսկ մնացած շրջանները կատարելապես աչքաթող էին արված: Նավթ ստացվում էր միայն Բաքվից ու Գրոզնուց:

Այդ որվանից դրությունն արմատապես փոխվել է: Հին շրջանների կողքին արդեն առաջացել են նոր շրջաններ ինչպես ըստ յերկաթահանքերի ու գունավոր մետաղների, այնպես էլ ըստ ածուխի և նավթի: Մեզանում հայտնաբերված են այնպիսի խոշոր յերկաթահանքային վայրեր, ինչպես Կուրսկի մագնիսային անոմալիայի հարստացուն շրջանը, Մագնիտնայա սարը, Կեմերովոյի Ձերժինսկի վայրը Բաշկիրիայում, Նալիչևան վայրը Մոլդավական յերկրում, նմանապես և յերկաթահանքերի վայրերը Արևմտյան և Արևելյան Սիբիրում, Կազախստանում, Հյուսիս–Կովկասյան յերկրում և Լենինգրադի մարզի հյուսիսում: Ածխարդյունաբերության նկատմամբ մենք արդեն խնդիր ենք դնում գերազանցելու Գաղթասը նոր Դոնբաս,—արդեն բարձրանում են ածխային այնպիսի շրջաններ, ինչպես Կարագանդայինը, Կուզնեցկայանը, Չելյաբինսկինը, Մերձ–Մոսկովյանը, նմանապես ածխային շրջանները Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Անդրկովկասում, Մոլդին Ասիայում և Հյուսիսային յերկրում: Բացի բազվից ու Գրոզնուց մեծ նշանակություն են ձեռք բերում նավթային այնպիսի նոր շրջաններ, ինչպես Մայկոպը, Եմբան, Թուրքմենիան—Կրասնովոդսկի շրջանը, Բաշկիրիան և մի շարք այլ շրջաններ:

Բնութենական նշված ռեսուրսների առկայության ու նրանց

տեղաշրջման կապակցությամբ յերկրորդ հնգամյակում խնդիրը է դառացած տեղծելու ինդուստրացման նոր հենարանային բազաներ, մասնավորապես Միջին Վոլգայի արևելյան շրջաններում—Ուրալ, Արևմտյան և Արևելյան Սիբիր, Բաշկիրիա և Հեռավոր Արևելյան յերկիր, Կազախստան, Միջին Ասիա: Այդ նոր ինդուստրիալ բազաների ստեղծումն Արևելքում արտահայտվում է այդ շրջաններում ուժեղ կերպով մետալուրգիայի, ածխարդյունաբերության, իսկ դրա հետ միասին նաև մեքենաշինության զարգացնելու մեջ:

Մեր Արևելքի ինդուստրացման զարգացման մեջ առաջին տեղը պատկանել է և պատկանելու յե Ուրալ-Կուզնեցկու կոմբինատին, որի կառուցմանն և հատկացվում յերկրորդ հնգամյակում ՆՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվելիք բոլոր կապիտալների մոտ մեկ քառորդը: Միության նշված արևելյան շրջաններում (Ուրալ, Սիբիր, Բաշկիրիա, Հեռավոր Արևելյան յերկիր, Կազախստան, Միջին Ասիա, Անդրկովկաս) այդտեղ մետալուրգիայինը, ածխի, նավթի արդյունաբերությունը, մեքենաշինությունը, ելեկտրաշինտարություն և այլն զարգացնելու նպատակով ինդուստրացման նորանոր հենարանային բազաների վրա ծախսվում և ծանր արդյունաբերության մեջ նոր շինարարության հատկացված բոլոր կապիտալներդրումների մոտ կեսը:

Մյուս կողմից, տեղի յե ունենում թեթև ու սննդի արդյունաբերության մոտեցումը դյուղատնտեսական հումքի աղբյուրներին: Դա նույնպես առաջին հերթին վերաբերում և արևելյան շրջաններին և կենտրոնական ու հյուսիսային շերտի մի քանի արդյունաբերական շրջաններին ավելի հետամնաց շրջաններին: Յերկրորդ հնգամյակում կառուցվող 15 բամբակեղենի կոմբինատներից 10-ը պետք և կառուցվեն Միջին Ասիայում, Սիբիրում և Անդրկովկասում: Վունչեղենի արդյունաբերության բնագավառում կառուցվում են նոր ֆաբրիկաններ գլխավորապես Արևմտյան մարզում, Գորկու յերկրամում և Բելոռուսիայում: Շաքարի գործարաններ կառուցվում են մեծ մասամբ Արևմտյան Սիբիրում, Կիրովկիայում, Հեռավոր Արևելյան յերկրամում և Անդրկովկասում: Բացի դրանից արևելյան

շրջաններում ծավալվում և մեծ չինարարություն րդեղենի, տրիկոտաժի, մետաքսեղենի, կաշի, կաշվի և վոտնամանի ֆաբրիկաներ կառուցելու գծով, նմանապես և մսակոմբինատների, ձկնամթերանոցների, մակարոնի, հրուշակի և այլնի ֆաբրիկաների գծով:

Յերկրորդ հնգամյակի ամբողջ արդյունաբերական չինարարության մեջ ուժեղացված ուշադրություն և դարձվում այն շրջանների վրա, վորոնք ավելի հետամնաց են արդյունաբերությամբ: Դրա համեմատ արդյունաբերական չինարարությունը զգալի կերպով ավելի ինտենսիվ և ծավալվում այնպիսի շրջաններում, ինչպես Միջին Վոլգայի շրջանն ե, Թաթարիան, Կենտրոնական Սեաոդղային մարզը (ՉՆՕ), Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Կարելիան, Մուրմանսկի յերկիրը, Հեռավոր Արևելքը, Արևելյան Սիբիրը:

Ընկ. Ստալինն արդեն ասել և այն մասին, վոր այսուհետև իր նշանակությունը կունենա և մեր մարդկերի հին բաժանումը՝ արդյունաբերական և ագրարային մարզերի: Յերկրորդ հնգամյակի չինարարության պլանը լիովին ամրապնդում և այդ յեղրակացությունը:

Արդյունաբերության նոր տեղաշրջումը յերկրորդ հնգամյակում սկսվում և ծանր արդյունաբերության հիմնական բազաների ստեղծումն ու թեթև և սննդի արդյունաբերության նոր շինարարության հետ միասին ապահովում և այդ ճյուղերի տնտեսական հետամնացության արագացված վերացումը:

Գյուղատնտեսության բնագավառում մենք պետք և ապահովենք հացահատիկային մշակությունների հիմնական շրջանների զարգացումն ու ուժեղացնենք առաջ չարժենք հացահատիկային տնտեսությունը ու նախ և առաջ ցորենը՝ սկսած հին շերտում ու Սիբիրում: Սկսած հին շերտը, վորտեղ ցանքերը պիտի տանեն 3,7 միլիոն հեկտարի, թվուններից նոր տարածություններ ուժեղնացնել մաքրելու պարագայում, բոլոր հնարքներն ունի դառնալու ցորենի նշանակելի շրջաններից մեկը: Պետք և ամրացնել— հատատատուն դարձնել տեխնիկական մշակությունների տարածությունները՝ նրանց արտադրության հիմնական շրջաններում և ապահովել ճակնդեղա-

յին նշանակություն Ալեհեյքսում: Անհրաժեշտ է ուժեղացված սատարումն բարձրարժեք նոր մշակույթների զարգացմանը, մանավանդ սուբարոպիկական շրջաններում:

Անդրվոլգյան շրջանի յերաշտի դեմ մղվող պայքարի դործը ծավալվում դառնում է մեծ աշխատանք: Այդ շրջանի վոռոշման լայն ծրագիրն ակսվում է տեղական առումներով վոռոդվող 130 հազար հեկտար ցանքսերի տարածություն ստեղծելուց, և դրա հետ մեասին պետք է ավարտվի Անդրվոլգյան շրջանի վոռոշման դլխավոր պլանի իրագործման նախապատրաստումը:

Արտադրողական ուժերի նոր տեղադրման խնդիրների ամբողջ իրագործման մեջ տրանսպորտը պետք է խաղա ահագին և այն էլ ակտիվ դեր: Դրա համեմատ պետք է ծավալվի յերկաթուղային դծերի կառուցումը դեպի արդյունաբերական այնպիսի ձեռնարկություններ, ինչպես Բալախանն է (պղինձ), Բեդդերը (պղինձ, ցինկ, արճիճ), Ստերլիտամակը (նավթ), Ջուլիմը (անտառ) և այլ ուրիշներ:

Այս ամենը նշանակում է, որ ժողովրդական տնտեսության մեջ արտադրողական ուժերի տեղադրման ծրագիրը յերկրորդ հնգամյակում վոչ միայն ապահովում են ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության արագ աճումը, այլ և հետամնաց շրջանների տնտեսական ու կուլտուրական վերելքի նշանակելի արագացումը:

Յերկրորդ հնգամյակի չինարարական ծրագրի իրագործումը փոխակերպում է մեր յերկիրը, արտադրական կյանքի մեջ դրավում բնութենական ահագին նոր ռեսուրսներ, գյուղատնտեսական աշխատանքը նրա մեքենային նոր տեխնիկայով բարձրացնում և ինդուստրիալ աշխատանքի մակարդակին, հետամնաց շրջանները քաշում և յերկրի առաջավոր շրջաններին մոտեցնելու նպատակով, տրանսպորտային նոր ուղիներով չաղկապում և կենտրոնն ու յերկրի հեռավոր ծայրամասերը, ապահովում է ՆՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրաների չեղած վերելքը և այս ամենով նախապատրաստում և քաղաքի և դյուղի հակադրության վոչնչացումը:

Այս չինարարական ծրագրի իրագործումը, նմանապես և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ծավալումը սոցիալիստական ձեռնարկումների կիրառումը և յերկրի կառավարման ու պաշտպանության համար պահանջվող ծախսումները յերկրորդ հնգամյակում կպահանջեն ավելի քան 340 միլիարդ ռուբլի, այսինքն 2,8 անդամ ավելի, քան առաջին հնգամյակում: Նշված ծախսումները միայն 1937 թվ. կկազմեն 77,5 միլիարդ ռուբլի:

Վորտեղ են այդ միջոցներն ստանալու աղբյուրները:

Պետության յեկամուտների դլխավոր ու վճռողական աղբյուրը պետք է կազմեն այն կուտակումները, վորոնք պիտի տա սոցիալիստական տնտեսությունը: Դա յերևում է հետևյալից:

1937 թվականին բնակչության միջոցներով (ուղղակի հարկեր, փոխառություններ և այլն) ծածկվում է այդ ծախսերի պակաս, քան $^1/_6$-ը, այն է 9,3 միլիարդ ռուբլի ի դեմաց 1932 թվ. 8,2 միլիարդ ռուբլու: Այսպիսով, արանում չեն մեր յեկամուտների դլխավոր աղբյուրը, վորոնք հարկավոր են յերկրորդ հնգամյակի ծրագրի իրագործման համար:

Մյուս կողմից, այն կուտակումները (չահույթները, շրջանառությունից դանձվող հարկերը), վոր պետք է տա ամբողջ սոցիալիստական տնտեսությունը, պիտի 1937 թ. կազմեն 65,3 միլիարդ ռուբլի, այսինքն ահռելի քան 2 անդամ ի դեմաց 1932 թ.: Դա յերկրորդ հնգամյակի խոշորագույն խնդիրն է: Յերկու հետևյալ պայմանների կատարման պարագայում միայն կարելի յե ապահովել պետության համար այդ կուտակումների ստացումը. առաջին, ահռելմանված չափերով արտադրանքի ինքնարժեքը իջեցնելով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արտադրանքի մեծացման ծրագիրը լիովին կատարելու պարագայում և, յերկրորդ, առևտրից ստացվող յեկամուտներով՝ տրանսքաշընթացության ահռելմանված ծավալման իրագործման պարագայում:

Սկսեմ պետության յեկամուտների այդ հիմնական աղբյուրներից առաջինով:

Ինչումն են կայանում մեր խնդիրները արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու վերաբերմամբ յերկրորդ հնգամյակում:

Ահա այդ առաջադրանքները. ամբողջությամբ վերցրած արդյունաբերության նկատմամբ ինքնարժեքի իջեցումը պետք է կազմի 26%, որը 1937 թվ. պետությանը տալիս է վոչ պակաս, քան 13 միլիարդ ռուբլի կուտակում,—ըստ տրանսպորտի—40 %, որը տալիս է 7,6 միլիարդ ռուբլի,—ըստ խորհտնտժողկոմատի—63%, որը կազմում է 1,6 միլիարդ ռուբլի,—առևտրական կազմակերպությունների չբաշխառու ծախսերի իջեցում—26%, որը կազմում է 1,7 միլիարդ ռուբլի,—շինարարության արժեքի իջեցում—40%, որը պետությանը տալիս է 8,7 միլիարդ ռուբլի խնայողություն: Այս խնդիրների կատարումն իրագործել—նշանակում է 1937 թվ. պետության համար ապահովել 34,6 միլիարդ ռուբլի: Այդ խնդիրները կատարել կարելի է միայն. ա) ապահովելով աշխատանքի արտադրողականության՝ հնգամյակի կողմից ընդունված աճումը, բ) կրճատելով արտադրանքի մեկ միավորին ընկնող վառելիքի և հումքի ծախսումները, իսկ դրա համար մեզանում կան մեծ հնարավորություններ անտնտեսավարության դեմ ուժգնացնելս պայքարելու պարագայում,—գ) նշանակելի չափով կրճատելով ամեն տեսակի անարտադրողական ծախսերը, կրճատելով ապարատը և այլն: Լուծել այդ խնդիրները նշանակում է ահագին պայքարի ծավալել մեր արդյունաբերության, տրանսպորտի, խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների աշխատանքի բարելավման համար: Այդպիսի դործերը չեն կատարվում ինքնահոսով: Նրանք լուծվում են պայքարով՝ ընդդեմ հազարավոր դժվարությունների, որոնցից շատերը մենք արդեն հաղթահարել ենք և որոնց դեմ մենք պետք է մղենք է՛լ ավելի համառ ու է՛լ ավելի կազմակերպված պայքար:

Պետության յեկամուտների յերկրորդ խոշորագույն աղբյուրը կլինի պետական-կոոպերատիվ առևտուրը: Վորպեսզի լիովին ապահոված լինենք առևտրից ստացվող յեկամուտները, մենք պետք է լիակատար կերպով իրագործենք լայն սպառման ապրանքների արտադրանքի ծրագիրը, առավելագույն չափով բարելավելով այդ արտադրանքի վորակը: Այն ժամանակ պետության յեկամուտների այդ կարևորագույն աղբյուրն էլ ապահովված կլինի: Չի կարելի

մոռանալ, վոր յերկրորդ հնգամյակում մենք ղնում ենք մանրածախի գները 35 % իջեցնելու խնդիրը: Դա նշանակում է, վոր առևտրից սպասվող յեկամուտների ծրագրի կատարումը կարող է ապահովվել միայն ապրանքաշրջանառության ահագին ծավալումով և առևտրական ամբողջ ապարատի աշխատանքի վճռական բարելավմամբ:

Լուրջ պայքարել յերկրորդ հնգամյակում կատարելիք սոցիալիստական կուտակման ծրագրի այս յերկու պայմանների իրագործման համար—նշանակում է անշեղ պայքար մղել մեր յերկրի ամբողջ տնտեսության կազմակերպման բարելավման համար, տնտեսական բոլոր ղեկներում տնտեսչվարի մտցնելու համար, պլանային-ֆինանսական կարգապահության ուժեղացման համար և խորհրդային ռուբլու հետագա ամրապնդման համար, վորը (ռուբլին) սոցիալիստական տնտեսության բարձրացման և քաղաքի ու գյուղի տնտեսական զորման ամրացման կարևորագույն գործիքն է:

Այսպես ուրեմն, յերկրորդ հնգամյակի շինարարական ծրագրի և մյուս խնդիրների իրագործման համար մեզանում կան բնութենական անհրաժեշտ ռեսուրսներ, վորոնց ոգտագործման հնարավորությունն արագ աճում է: Մենք ունենք նմանապես յեկամուտների ահագին աղբյուրներ և այդ յեկամուտների ապահովումն ամբողջովին կախված է մեզանից, մեր աշխատանքից:

Յերկրորդ հնգամյակի հեռանկարները՝ նրա շինարարական վիթխարի ծրագրով՝ մեր առջև բաց են անում մեր յերկրի վերելքի այնպիսի ուղի, վորը բարձրացնում է խանդավառությունը և հաղթանակի կամք ամրացնում մեր յերկրի աշխատավորների սրտերում: Մեր խնդիրն է՝ է՛լ ավելի կազմակերպված ձևով պայքար ծավալել ժողովրդական տնտեսության մեջ եղած ահագին ռեզերվների ոգտագործման համար, ըստ ամենայնի բարելավել աշխատանքի կազմակերպությունը արտադրության և շինարարության մեջ, ապահովել սոցիալիզմի կառուցողների աճող կադրերի հմուտ կոնկրետ ղեկավարումը:

Մեր խնդիրն է՝ կազմակերպել յերկրորդ հնգամյակի հաղթանակը:

III

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Սոցիալիզմի ուժն այն է, որ ժողովրդական տնտեսության վիթխարի վերելքը սոցիալիստական չինարարությունն անխզելիորեն չաղկապում է աշխատավոր մասսաների բարեկեցության ահագին բարձրացման հետ: Սոցիալիզմի առաջնորդումը նշանակում է կապիտալիստական տարրերի—աշխատավորներին չհատուցվող ծառայողների վոչնչացում: Դա նշանակում է, որ այն միջոցները, որոնք առաջ ընկնում էին չհատուցվողների ձեռքը, մասնավոր ձեռնարկությունների ձեռքը, անցնում են հենց իրենց՝ աշխատավորներին: Հասկանալի է, որ այդ ամենը տեղի է ունենում աշխատավորների կատաղի պայքարում ընդդեմ բուրժուական դասակարգերի մնացորդների: Բայց ինչն այդ պայքարի մեջ են բանվորները ու գյուղացիները իրենց համար նվաճում նոր կյանք, դուրս գալիս այն թշվառությունից ու խավարից, որոնց մեջ նրանց պահում էին կապիտալիստները ու կալվածատերերը:

Առաջին հնգամյակում արդեն մենք բանվորների դրությունը բարձրացնելու տեսակետից արմատական բարեփոխման հասանք: Մենք արժանք ունի գործազրկության վոչնչացումը, հենց մեր բոլոր բանվորների վստահությունը վաղվա նկատմամբ, աշխատանքով ապահովված լինելու նկատմամբ: Ամբողջ աշխարհում վոչ մի տեղ բանվորները չեն կարող այդ մասին իրատել անգամ: Վերջին տարիներում մի ամբողջ հեղաշրջում տեղի ունեցավ գյուղացիության դրության մեջ էլ: Կոլեկտիվացումը սրբեց ահավոր քանակությամբ կուլակներ և չքավորների ու միջակների ամբողջ մասսան դուրս բերեց իսկական վերելքի ուղին: Տարեցտարի թշվառացող գյուղից առանձնից մի գյուղ, որ տարեցտարի բնթանում և վերելքի ուղով: Գյուղացիության կյանքի պայմանների արմատական բարելավման լավագույն ցուցանիշ է հանդիսանում այն փաստը, որ, չնայած բանվորների բարեկեցության բարձրացման, մեզանում շատ դեպքերում բանվորների պակաս կա քաղաքներում, այնինչ

կապիտալիստական բոլոր յերկրներում միլիոններ են ձեռք առնում այն կիսաքաղցած գյուղացիների հոտանքի դեմ, որոնք քաղաքներն են գնում դատում ճարելու նպատակով:

Ցերկրորդ հնգամյակի ուժը կայանում է նրանում, որ մենք այժմ ե՛լ ավելի արագ կարող ենք գնալ աշխատավորների բարեկեցության բարձրացման ուղիով:

Սկսեմ բանվորների դրությունից:

Մեղանում, իհարկե, բանվորների մեջ գործազրկություն չկա բնավ դալու վտանգ չկա: Ընդհակառակը, բանվորների և ծառայողների թիվը հնգամյակի ընթացքում մեծանում է՝ 1932 թվականի 22,9 միլիոն մարդուց մինչև 28,9 միլիոն մարդ 1937 թվ., այսինքն մեծանում է 26%—ով: Բուն արդյունաբերության մեջ բանվորների և ծառայողների թիվը մեծանում է 2,2 միլիոն մարդով, այսինքն 28%—ով: Մեծագույն նշանակություն ունի այն փաստը, որ բանվորների և ծառայողների ընտանիքներում ամբողջ աճող յերիտասարդությունն ապահովված է աշխատանքով և, ուսման վերջ դասընթաց անցնելով, մտնում է խորհրդային տնտեսության աշխատավորների շարքերը:

Մեր յերկրի բանվորների առաջ չի ծառացած աշխատավարձ յերկարաձգման վտանգը: Ընդհակառակը, մեր արդյունաբերության մեջ աշխատորը արդեն կրճատված է մինչև 7 ժամը, իսկ ավելի դժվար աշխատանքների մեջ մինչև 6 ժամն ու ավելի պակաս: Ցեվ պետությունը մի բան և պահանջում միայն՝ այդ կարճ աշխատորվա ընթացքում արնիվ և լիակատար աշխատանք:

Բանվորների և ծառայողների յեկամտի վերաբերմամբ յերկրորդ հնգամյակում հենակետը դարձվում է անվանական աշխատավարձի բարձրացումը: 1932 թվականի մակարդակի համեմատությամբ անվանական աշխատավարձը պետք է հնգամյակի ընթացքում մեծանա 2 անգամ: Դա նշանակում է, որ (աշխատանքի վոչ դյուրանուսական ճյուղերի) բանվորների և ծառայողների՝ մեկ ընկնող սպառման ֆիզիկական ծավալի ընդհանուր չափը պետք է մեծանա յերկու անգամ:

Բանվորների և ծառայողների անվանական աշխատավարձի աճումը տեղի կ ունենում հետևյալ յերեք աղբյուրների հաշվին՝

ա) բանվորական ընտանիքի միջոցային եկամտի նշանակելի աճմանը.—

բ) բանվորների և ծառայողների կողմից ըստ կուլտուր-կենցաղային սպասարկման պետական և այլ ֆոնդերի ստացվող ձրի ծառայությունների (услуг) մեծ աճման.—

գ) Լայն սպառման ապրանքների գների ահագին իջեցման:

Աշխատավարձի ֆոնդը ըստ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հնգամյակում աճում է 32,7 միլիարդ ռուբլուց մինչև 50,65 միլիարդ ռուբլի, այսինքն մեծանում է 54,7%-ով: Բանվորների և ծառայողների միջոցային եկամուտը հնգամյակի ընթացքում մեծանում է 37 %-ով, իսկ բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը մեծանում է 22,8%-ով: Մենք սխալ ենք համարում յերկրորդ հնգամյակում միջոցային աշխատավարձը բնականոն բարձրացնելու դադարեցումը: Բանվորների աշխատավարձի բարձրացումը տեղի կունենա աշխատանքի արտադրողականության աճման և բանվորների վորակավորման նշանակելի բարձրացման հետևանքով, նմանապես և յերկրորդ հնգամյակի առաջին տարվա մեջ կատարված՝ աշխատավարձի բարձրացման կատակցությամբ: Վերջապես, բանվորների միջոցային եկամուտները կմեծանան նաև այն պատճառով, վոր բանվորների ընտանիքներում կմեծանա աշխատողների թիվը, ստիպենդիաների, թոշակավորների և այլոց քանակը:

Բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձի աճման համար մեծ նշանակություն ունեն պետության ծախսումները աշխատավորների կուլտուր-կենցաղային ձրի սպասարկման վրա: Այդ ծախսերը արհմիությունների ծախսումների հետ միասին հնգամյակի ընթացքում մեծանում են ավելի քան յերկու անգամ 4,3 միլիարդ ռուբլուց հասնելով 9,3 միլիարդ ռուբլու: Այդ միջոցները հատկացվում են սոցիալական ապահովագրության դեմ թոշակների ու նպաստների մեծացնելու գործին, մանուկների և մեծահասակների կրթության ու ուսուցման ծախսերի մեծացմանը, բուժման, մսուրների, հանդստյան տների, սանատորիաների և բանվորների ու ծառայողների կյանքի կենցաղային և կուլտուրական պայմանների բարելավման համար գործադրվող այլ միջոցառումների:

Ռեալ աշխատավարձի աճման մեջ վճռողական նշանակություն ունի հնգամյակում նախատեսված՝ լայն սպառման ապրանքների մանրածախ գների իջեցումը 35 %-ով: Ինչպես հայտնի յե, վերջին տարիներում մենք յերբեմն սխալված ենք յեղել բարձրացնել ապրանքների գները: Այժմ մեր արդյունաբերությունն ամրացել է, գյուղատնտեսությունն ավարտել է վերակազմական շրջանը, մեր կոլմիր կազրերն ուժեղ են, ուստի և մենք բոլոր նախապայմաններն ունենք իջեցնելու արտադրանքի ինքնարժեքը և կրճատելու անարտադրողական ծախսերը, վորպեսզի վճռականորեն իջեցնենք ապրանքների գները: Գների իջեցումը 35 %-ով— վոչը խնդիր չե, բայց այդ խնդիրը մենք այժմ կարող ենք իրագործել և այդ պատճառով պետք է իրագործենք ինչ գնով էլ լինի: Սրանումն է յերկրորդ հնգամյակում քաղաքի և գյուղի աշխատավորների բարեկեցության բարձրացման վճռողական լծակը:

Գյուղն այժմ արագ վերելքի ճանապարհն է բռնել: Մեր ամբողջ առաջ աճում և կոլտնտեսականների բարեկեցությունը: Մի քանի պատահական և, վոր յերբ կոլտնտեսություններն արդեն անցել են վերակազմական շրջանն ու հասել կայունության, մենք ստացանք հացահատիկների ռեկորդային բարձր բերք: Հայտնի յե նմանապես, վոր հացաբույսերի բերքն ամենից բարձր եր այնտեղ, վորտեղ ավելի լավ են կազմակերպված կոլտնտեսությունները, վորտեղ ամրացել են նրանք: Ինքնին պերճախոս և Կարարդայի որինակը, վորտեղ անցյալ տարի աչխորին տրված և մինչև մեկ վուրհատիկ (յեգիպտացորենը ներառյալ) և վորտեղ կոլտնտեսություններն իրոք արդեն վորոշ չափով ամրացել են:

Վորպեսզի արագ բարելավվեն իրենց կյանքը, գյուղացի-կոլտնտեսականները պետք է հիշեն մեկ բան, աղնիվ աշխատել կոլտնտեսության մեջ և խնամքոտ վերաբերվել ցույց տալ դեպի կոլտնտեսության գույքը: Իսկ պետությունը գյուղատնտեսությանն ողնելու համար նրան տալիս է մոչ մի այլ տրակտորներ, ավտոմոբիլներ, կոմբայններ, գյուղատնտեսական մեքենաներ, վերանորոգա-

ա) բանվորական ընտանիքի միջոցային եկամտի նշանակելի աճմանը.—

բ) բանվորների և ծառայողների կողմից ըստ կուլտուր-կենցաղային սպասարկման պետական և այլ ֆոնդերի ստացվող ձրի ծառայությունների (услуг) մեծ աճման.—

գ) նաև սպառման ապրանքների գների ահագին իջեցման:

Աշխատավարձի ֆոնդը ըստ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հեղափոխում աճում է 32,7 միլիարդ ռուբլուց մինչև 50,65 միլիարդ ռուբլի, այսինքն մեծանում է 54,7%-ով: Բանվորների և ծառայողների միջոցային եկամուտը հնգամյակի ընթացքում մեծանում է 37 %-ով, իսկ բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը մեծանում է 22,8%-ով: Մենք սխալ ենք համարում ներկայիս հնգամյակում միջոցային աշխատավարձը բնականոն բարձրացնելու դադարեցրը: Բանվորների աշխատավարձի բարձրացումը տեղի կունենա աշխատանքի արտադրողականության աճման և բանվորների վորակավորման նշանակելի բարձրացման հետևանքով, նմանապես և ներկայիս հնգամյակի առաջին տարվա մեջ կատարված՝ աշխատավարձի բարձրացման կատարածությամբ: Վերջապես, բանվորների միջոցային եկամուտները կմեծանան նաև այն պատճառով, վոր բանվորների ընտանիքներում կմեծանա աշխատողների թիվը, ստախանովականների, թոշակավորների և այլոց քանակը:

Բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձի աճման համար մեծ նշանակություն ունեն պետության ծախսումները աշխատավորների կուլտուր-կենցաղային ձրի սպասարկման վրա: Այդ ծախսերը արհմիությունների ծախսումների հետ միասին հնգամյակի ընթացքում մեծանում են ավելի քան ներկու անգամ 4,3 միլիարդ ռուբլուց հասնելով 9,3 միլիարդ ռուբլու: Այդ միջոցները հատկացվում են սոցիալական ապահովագրության դեմ թոշակների և նպաստների մեծացնելու գործին, մանուկների և մեծահասակների կրթության ու ուսուցման ծախսերի մեծացմանը, բուժման, մսուրների, հանդուցյան տների, սանատորիաների և բանվորների ու ծառայողների կյանքի կենցաղային և կուլտուրա-

կան պայմանների բարելավման համար գործադրվող այլ միջոցառումների:

Ռեալ աշխատավարձի աճման մեջ վճռողական նշանակություն ունի հնգամյակում նախատեսված՝ լայն սպառման ապրանքների մանրածախ գների իջեցումը 35 %-ով: Ինչպես հայտնի է, վերջին տարիներում մենք կրկնակի անգամ ստիպված ենք եղել բարձրացնել սպրանքների գները: Այժմ մեր արդյունաբերությունն ամրացել և, գյուղատնտեսությունն ավարտել է վերակազմական շրջանը, մեր կարմիր կազրերն աճել են, ուստի և մենք բոլոր նախադրյալներն ունենք իջեցնելու արտադրանքի ինքնարժեքը և կրճատելու անարտադրողական ծախսերը, փորձենք վճռականորեն իջեցնենք սպրանքների գները: Գների իջեցումը 35 %-ով— փոքր թռիչք չէ, բայց այդ թռիչքը մենք այժմ կարող ենք իրագործել և այդ պատճառով պետք է իրագործենք ինչ գնով էլ լինի: Սրանումն է կերկրորդ հնգամյակում քաղաքի և գյուղի աշխատավորների բարեկեցության բարձրացման վճռողական լծակը:

Գյուղն այժմ արագ վերելքի ճանապարհն է բռնել: Մեր ագրար առաջ անում է կոլտնտեսականների բարեկեցությունը: Մի քանի պատահական և, վոր կերբ կոլտնտեսություններն արդեն անցել են վերակազմական շրջանն ու հասել կայունության, մենք ստացանք հացահատիկների ռեկորդային բարձր բերք: Հայտնի է նմանապես, վոր հացարույսերի բերքն ամենից բարձր եր այնտեղ, վորտեղ ավելի լավ են կազմակերպված կոլտնտեսությունները, վորտեղ ամրացել են նրանք: Ինքնին պերճախոս և կարարդայի որինակը, վորտեղ անցյալ տարի աչխորին տրված և մինչև մեկ վուտ հատիկ (յեղիպատացորենը ներառյալ) և վորտեղ կոլտնտեսությունները իրոք արդեն վորոշ չափով ամրացել են:

Վորպեսզի արագ բարելավեն իրենց կյանքը, գյուղացի-կոլտնտեսականները պետք է հիշեն մեկ բան, աղնիվ աշխատել կոլտնտեսության մեջ և խնամքոտ վերաբերմունք ցուցաբերել կոլտնտեսության գույքը: Իսկ պետությունը գյուղատնտեսությանն օգնելու համար նրան տալիս է մոչ մշակի տրակտորներ, ավտոմոբիլներ, կոմբայններ, գյուղատնտեսական մեքենաներ, վերանորոգա-

կան արհեստանոցներ և ուրիշ տեխնիկական սարքավորում, այլև ուժգնացնել պատրաստում և դյուղատնտեսության փորձված մասնագետների կադրեր, նմանապես և կազմակերպում և տրակտորիստների, կոմբայնյորների, բրիգադիրների և կոլտնտեսություններ ու ՄՏԿ-ների ղեկավարների ամբողջ բանակների նախապատրաստումը: Կենդանաբուծության բարձրացման համար պետությունը վոչ միայն ոդնություն և ցույց տալիս կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին, այլև ամեն կերպ հեշտացնում և կոլտնտեսական կովադուրկ տնտեսությունների լիկվիդացիան, վարկ կազմակերպելով և կովադուրկներին կով ունենալու հնարավորություն տալով: Մեզանում այս տարի արդեն, այսինքն կերկրորդ հնգամյակի յերկրորդ տարում կլինեն խոշորագույն մարզեր, վորոնք գերծ կհամարեցնեն կոլտնտեսական կովադուրկ տնտեսությունները և բոլոր կոլտնտեսականներին կապահովեն կովով կամ եզ հոդով: Մեր խորհտնտեսությունները մեծ դեր կխաղան կոլտնտեսություններին ցեղային անասուն, տեսակավոր սերմեր և այլն մատակարարելու մեջ:

Այսպիսով, ստեղծված են բոլոր նախադրյալները, վորպեսզի կոլտնտեսությունները դարձնենք բոլշևիկյան և կոլտնտեսականների համար ապահովենք կուլտուրական ու ունևորական կյանք: Ընկ. Ստալինի այս լոզունգը մենք կարող ենք և պետք է իրագործենք յերկրորդ հնգամյակի արդեն առաջին յերկու յերեք տարում: Այսպիսով, վերջապես, մարդկային, կուլտուրական կյանք կսկսեն վարել դյուղացիական բազմամիլիոն մասսաները:

Կուլտուրական զարգացման նկատմամբ ԽՍՀՄ առաջ է քայլում, վորպես հսկա:

Յերկրորդ հնգամյակում մենք պետք է այդ բնագավառում իրագործենք հետևյալ խնդիրները.

ա) Ամբողջ բնակչության անդրագիտության վերացում: Այս խնդիրը միանգամայն իրագործելի է արդեն մեզանում յերկու-յերեք տարվա ընթացքում:

բ) Վոչ միայն քաղաքում, այլև դյուղում յոթնամյակի ծավալով ընդհանրական պարտադիր պոլիտեխնիկական ուսուցման իրագործում: Դրա համապատասխան յոթնամյա դպրոցի կոնտինգենտը պետք է աճի 21,7 միլիոն աշակերտից մինչև 28,3 միլիոն աշակերտ: Այս խնդիրը պետք է դառնա մեր դպրոցի պարզացման մեջ յերկրորդ հնգամյակի կենտրոնական խնդիրը:

գ) Ընդհանրական ուսուցման դպրոցի մանկավարժական կադրերի ընդհանուր քանակի մեծացումն հնգամյակի ընթացքում 628 հազարից մինչև 834 հազար: Դպրոցներն ապահովված են բարձրագույն և միջնակարգ կրթություն ուներ մանկավարժներով, մի բան, վոր դպրոցները և աշակերտներին դասավորելով, ուսումնական պարապմունքով ու անհրաժեշտ սարքավորմամբ ապահովելու հետ միասին մեծապես կբարձրացնի դպրոցի աշխատանքի վորակը: Դպրոցի պոլիտեխնիկացման մարքս-լենինյան հիմքի վրա անցկացնելու ժամանակ ուսուցման վորակի բարձրացումը կուսակցության և կառավարության առաջնակարգ խնդիրներից մեկն է:

դ) Սովորողների ընդհանուր քանակի մեծացումն (ստորին և միջնակարգ դպրոցներում, բանֆակներում, ֆաբ. գործ. ուս., տեխնիկումներում, բուհերում և բարձրներում) 1932 թվ. 24,2 միլիոն մարդուց մինչև 1937 թվ. 36 միլիոն մարդը:

ե) Հասարակական և նահապետական դաստիարակության մինչև յոթ տարեկան հասակ ունեցող մանուկները ընդգրկվելու չեն 1937 թվ. 16 միլիոն հոգի՝ 1932 թվի 5,2 միլիոն մանկան փոխարեն,—մեծացումն ավելի է, քան յերեք անգամ: Այսուհետև կարևորագույն խնդիրը նախադպրոցական ուսուցման տարածումն է վորակյալ կադրերով՝ մանկավարժներով ու դեկավարներով:

զ) Հանրակրթական դպրոցներում և բարձրացված տիպի դասընթացներում սովորողների քանակի մեծացումը հասնում է 10,5 միլիոն մարդու, մի բան, վոր կապված է բնակչության լայն մասսաների դեպի կուլտուրան ունեցած ահագին ձգտման հետ:

է) Ակումբների, կուլտուրայի տների, կրթության-ընթերցարանների և այլնի ցանցի մեծացումն 49,3 հազարից մինչև 76,9 հազար, այսինքն ավելի քան մեկ ու կես անգամ:

ը) Հնգամյակի ընթացքում մասսայական գրադարանների ցանցի մեծացումն 15 հազարից մինչև 25 հազար, իսկ նրանց գրքային ֆոնդի մեծացումը՝ յերեք անգամ:

բ) Ռադիոհաղորդիչ կայանների թվի մեծացումը հնգամյակի ընթացքում 57–ից մինչև 88, իսկ ընդունիչ ռադիոկետների քանակի մեծացումը ՄՍՀՄ բնակիչների մեկ հազարին— ամբողջ երկիրը նկատի առած— 13–ից հասնելու է 44–ի և քաղաքում՝ մինչև 78 ռադիոկետ:

ժ) Գիտահետազոտական ինստիտուտների (առանց տեխնիկումների ու ասպիրանտուրայի) գիտական աշխատավորների քանակը մեծանալու է հնգամյակի ընթացքում մինչև 50 հազար և դրանց 1932 թվ. 44,1 հազարի:

Ազգատնտեսության բոլոր ճյուղերում ամման ամենից մեծ տեմպ ունենալու են ազգային հանրապետությունների ու մարզերը: Դեռ երբեք չեն ստեղծվել այսպիսի բարենպաստ պայմաններ ազգային կուլտուրաների ամման և ՄՍՀՄ բոլոր ազգությունների աշխատավորների չարքերից չլսած նոր կուլտուրական կադրերի լայն առաջքաշման համար: Սոցիալիստական հիմքի վրա տեղի ունեցող՝ ազգային կուլտուրաների ահռելի ամման մեջ իր արտահայտությունը կգտնի սոցիալիզմի հաղթական ամումը ՄՍՀՄ–ում, որն ամբողջ աշխարհի ժողովուրդներին բազմաթիվ նոր օրինակներ կտա այն բանի, որ մեր ժամանակ միայն սոցիալիզմը կարող է լինել իսկական անտեսական ու կուլտուրական վերելքի բազա:

Աշխատավորների առողջապահության բարելավման գործում նույնպես ահագին խնդիրներ են ծառացած երկրորդ հնգամյակում: Այդ խնդիրների մասշտաբը թեկուզ նրանով է բնութագրվում, որ ծախսումները առողջապահության վրա, բանվորական հանգստի և ֆիզկուլտուրայի վրա առաջին հնգամյակի 5,4 միլիարդ ռուբլուց երկրորդ հնգամյակում մեծանում են մինչև 19,6 միլիարդ ռուբլի, այսինքն աճում են համարյա 4 անգամ: Հիվանդանոցային մահճակալների քանակը քաղաքներում մեծանում է 44%–ով, գյուղական վայրերում 98 %–ով: Նշանակելի չափով կաճեն նաև բժշկական կադրերը:

Բանվորների համար առանձնակարգ նշանակություն ունի բնակարանային հարցը: Ամբողջ բնակարանային ֆոնդը երկրորդ հնգամյակի ընթացքում մեծանում է 185 միլիոն քառակուսի մետրից մինչև 246 միլիոն քառակուսի մետր, այսինքն 33 %–ով: Սակայն բնակչության մեծ աճման պատճառով բնակարանային նորման բարձրանում է միայն 15 %–ով, բայց արդյունաբերության մի քանի ճյուղում նա աճում է շատ ավելի արագ. այսպես, մեքենաշինության բանվորությանը բնակարանային նորման աճում է 22%–ով, սև մետաղագործության մեջ— 33 %–ով, քարածխային արդյունաբերության մեջ մեծանում է երկու անգամ:

Վերջապես, քաղաքի և գյուղի աշխատավորների մատակարարման գործի բարելավման և ապրանքաշրջանառության ծավալման մասին:

Ապրանքային վորպի՞սի ֆոնդեր են լինելու երկրորդ հնգամյակում մեր տրամադրության տակ:

Մենք արդեն գիտենք, թե ինչ տեմպերով են աճում երկրորդ հնգամյակում թեթև ու սննդի արդյունաբերությունը և լայն սպառման առարկաների արտադրության այլ ճյուղերը: Դրա համապատասխան արագ կաճի լայն սպառման ապրանքների այն ֆոնդը, որը լինելու է մեր տրամադրության տակ: Թեթև 1932 թվականին սեռական արդյունաբերության արտադրած արդյունաբերական ապրանքների ամբողջ զանգվածը, ներառելով նաև սննդահամային ապրանքները՝ գնահատվում էր 14,5 միլիարդ ռուբլի (1932 թվ. բազիսային անվոփոխ գներով), մոտ 1937 թվականին այդ ապրանքային արտադրանքն աճում է մինչև 34,2 միլիարդ ռուբլի (նույն գներով), այսինքն 135,5 %–ով: Մի փոքր ավելի զանգված և աճում տնայնագործական–արհեստագործական կոոպերացիայի՝ լայն սպառման ապրանքների արտադրանքը, բայց, մյուս կողմից, վոչ–չուվաշական ֆոնդերն աճում են դրանից ավելի զանգված, քան չուվաշականները: Դրա հետևանքով լայն սպառման ապրանքների չուվաշական ֆոնդը հնգամյակի ընթացքում մեծանում է 159,4%–ով: Այսպիսով, լայն սպառման ապրանքների չուվաշական արտադրանքը մինչև հնգամյակի վերջն աճում է ավելի քան 2,5 անգամ: Արագ տեմպերով աճում է նմանապես գյուղատնտեսության ապրանքային արտադրանքը,

թևև մթերատեսակ մեծ չափով աճում և կլոռնտեսականների անհնարին սպառումը:

Գյուղատնտեսության արդյունքների ապրանքային դասդվածի մեծացումը տեղի չի ունենում նախ, պետական հիմնական առաջքների հաշվին (հարկից, ՄՏԿ բնավճարից, խորհտնտեսությունների), երկրորդ, մերձքաղաքային տնտեսության հաշվին և երրորդ, կոլտնտեսական առևտրի և ապահենարտնացված հարթատեսությունների հաշվին: Գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի մեծացման այդ բոլոր աղբյուրները հնարավորություն են տալիս բարձրացնելու դրեթե երկու անգամ այնպիսի արդյունքների մատակարարումը, ինչպես հացահատիկինն են, կարտոֆիլը և բանջարեղենները, իսկ ըստ մսի և կաթի՝ մոտավորապես 2½ անգամ:

Իրրև դրա արդյունք մենք ստանում ենք պետական և կոոպերատիվ առևտրի ընդհանուր մանրածախ ապրանքաշրջանառության ու հասարակական սննդի տրադ աճում: Ահա երկրորդ հնգամյակի ապրանքաշրջանառության աճման հիմնական ցուցանիշները:

Մանրածախ ապրանքաշրջանառության աճումը երկրորդ հնգամյակում

	1932 թ. Հնգամյակի մանրածախ (մլրդ. ռուբ.)		1937 թ. %-ով 1932 թ. համեմատ
	1932 թ.	1937 թ.	
1. Լայն սպառման ապրանքներ, այդ թվում՝ գործվածքեղեն, հագուստ, կոշկամանե, ոսկյա, ոսկերչական և այլ արդյունաբերական ապրանք.	16,970	44,120	260,0
2. Սննդամթերքներ այդ, թվում՝ հաց, միս, ձուկ, հարպանություններ, չաքար, ձուկ և այլն .	10,145	23,160	228,5
3. Հասարակական սնունդ	4,800	12,700	264,6
Ընդամենը (առանց ծխախոտա-ալկոհոլային խմբի)	31,915	80,000	250,7

Աղյուսակից երևում է, որ առանձնապես արագ աճում է մանրածախ ապրանքաշրջանառությունն ըստ լայն սպառման ապրանքների (260 %): Մի փոքր ավելի դանդաղ է մեծանում սպրանքաշրջանառությունն ըստ սննդամթերքների (228,5 %): Ամենից ավելի արագ են աճում հասարակական սննդի ծավալման տեմպերը (264,6 %): Ընդհանուր առմամբ ապրանքաշրջանառությունը յերկրորդ հնգամյակի վերջին մեծանում է 2,5 անգամ (250,7 %)—ըստ քաղաքի ավելի դանդաղ (238,9 %) ըստ գյուղի ավելի արագ (281,4 %):

Մնում է ավելացնել, որ նույնպես համապատասխան տեմպերով աճում են կարևորագույն մթերքների սպառման և միջին մարդադլուխ նորմաները: Յերկրորդ հնգամյակի ընթացքում այդ միջին մարդադլուխ նորմաները մեծանում են ըստ մսի և կենդանական յուղի յերկու անգամ, ըստ ձուկ, չաքարի և հրուշակային արդյունքների—մոտավորապես 2,5 անգամ, ըստ սպահածոների—4 անգամ, ըստ հացի, կարտոֆիլի և բանջարեղենի պահանջմունքները բավարարվում են:

Աճում են նաև միջին սպառման մարդադլուխ նորմաներն ըստ բոլոր արդյունաբերական ապրանքների: Միջին թվով այդ նորմաներն ըստ արդյունաբերական ապրանքների յերկրորդ հնգամյակում աճում են 2,5 անգամ:

Այս ամենը հնարավոր և դարձնում աշխատավորների սպառման մակարդակի բարձրացումը հնգամյակի ընթացքում 2—3 անգամ: Աշրանքաշրջանառության ծավալի խիստ մեծացման հետ միասին անհրաժեշտ է ապահովել նրա ստրուկտուրայի նշանակելի բարելավումը սննդի առարկաների և լայն սպառման ապրանքների կարևորագույն խմբերի առաջադրանքների, ապրանքների վորակի և նրանց ասորտիմենտի բարելավման միջոցով:

Ապրանքաշրջանառության ահագին մեծացումը պետական-կոոպերատիվ առևտրական ցանցի մեջ և արդյունաբերական ապրանքների դների իջեցումը մինչև հնգամյակի վերջը 35 %-ով հնարավորություն են տալիս ապահովելու գյուղատնտեսական արդյունքների չուկայական դների իջեցումը և մինչև վերջը հասցնելու պայքարը առևտրի մեջ սանկուլյատիվ տարրերին վոչնչացնելու համար: Արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքնե-

ըի «գների մկրատը» ստուգանաբար վոչնչանում և այդ գների վոսմերձեցումով։ Մենք արդեն սկսել ենք գների իջեցում անցկացնել ապառ վաճառքի առևտրի մեջ և հասել ենք նշանակելի արդյունքների դյուղատնտեսական մթերքների չուկայական գների իջեցման մեջ։ Ցերկրորդ հնգամյակում մենք պետք է ապահովենք ապրանքաշրջանառության այնպիսի աճում և արդյունաբերական ապրանքների ու դյուղատնտեսական մթերքների գների իջեցման այնպիսի քաղաքականության կիրառում, վորպեսզի նախապատրաստենք նորմավորված առևտրի վերացումը։

Դրա համար մենք հարկադրված կլինենք առևտրական մանրածախ ցանցի հետագա մեծ ծավալումն կատարել։ Դա վերաբերում է և սպառողական կոոպերացիային, մանավանդ գյուղում, և պետական առևտրին ապառ վաճառքի առևտուրը ներառյալ, և բոլոր ժողկոմատների բան. մատ. բաժիններին և, վերջապես հասարակական անցին։ Նշանակելի չափով կծավալվի կոլտնտեսական առևտուրը ևս։

Մեր առջև յերկրորդ հնգամյակում դրված խնդիրներից կարելի յե պրոթ հանել այն դնդքում միայն, յեթե ծավալենք պետական և կոոպերատիվ առևտրի բոլոր ոեսակները և ապահովենք այն խանութների ու կրպակների հզոր ցանցով, վորոնք համապատասխան կերպով ոեխնիկապես հարմարեցված լինեն ինչպես խոշոր, այնպես էլ մանր առևտրի համար, յեթե իսկապես բարելավենք պետական–կոոպերատիվ առևտրի ամբողջ կազմակերպությունն ու կադրերի բնարոությունն առևտրական ցանցում։ Հենց այն պատճառով, վոր առևտրի բարելավման գործում մինչև այժմ դանդաղ ենք առաջ չարժվել, մենք պետք է յերկրորդ հնգամյակում բնդհուպ ձեռք գարկենք այդ գործին ու հասնենք այն արագ վերելքի բոլշևիկյան լայն ճանապարհը։ Այդ խնդրի, վորպես մերձավոր գործնական տարրների ամենակարևոր խնդիրներից մեկի, բոլշևիկյան լուծումը պետք է ապահովի։ Մենք պետք է անենք այդ, յեթե կամենում ենք իսկապես բարելավել բանվորների և գյուղացիների մատակարարման գործը։ Մենք պետք է անենք այդ, յեթե կամենում ենք ունալ աշխատավարձի վճռական բարձրացմամբ ու բանվորների մատակարարման բարելավմամբ ել ավելի լավ ապահովենք ժողովրդական անտեսության վերելքի ծրագիրն ու այդ անտեսության արագ զարգացումը։ Մենք պետք է անենք այդ ինչ գնով ել վոր լինի, հիշելով, վոր այդ խնդրի լուծմամբ մենք ամենահաստատուն կերպով ամրացնում ենք բանվորների և գյուղացիների դաշինքը՝ սոցիալիզմի հաղթանակի այդ հիմքը։

Ընկ. Ստալինը ավեց մեր պարտականությունների հետևյալ խոշոր ծավալուն առևտրի նշանակության հիանալի դնահատականը։ Ընկ. Ստալինը վոչնչացնող կերպով խարազանեց ինչպես աղայական–արհամարհական վերաբերմունքը դեպի խորհրդային առևտուրը, այնպես ել «ձախլիկ»–մանր–բուրժուական անհեթեթությունն անհապաղ արդյունավորանակության անցնելու մասին։

Այս ամենն ընդգծում է մեր խնդիրների առևտրի նկատմամբ։ Առանձնապես վճռական դատապարտման են արժանի դիվանակական–բյուրոկրատական կարգերն առևտրական գործի կառավարման մեջ։ Նրանք այստեղ դեռևս այնքան ուժեղ են և դեռ ևս այնքան թույլ և ծավալված պայքարը նրանց դեմ, վոր կուլտուրության ամենակենսական խնդիրներից մեկը հանդիսանում է այդ դիվանակական–բյուրոկրատական այլանդակությունների վերացման խնդիրը և ամենակարգ ատատրումն այն բոլոր ադնիվ աշխատավորներին ու գործին նվիրված բոլշևիկներին, վորոնք համառորեն աշխատում են առևտրի կազմակերպության բարելավման համար։

Չի կարելի չընդունել, վոր մենք հիանալի նախադրյալներ ունենք բանվորական և գյուղացիական մասսաների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի արագ բարձրացման համար։ Իր բոլոր միջոցառումներով սեռությունը հեշտացնում է քաղաքի և գյուղի աշխատավորների բարեկեցության վերելքը։

Պետության և կուլտուրության միջոցառումները նպատակ ունեն որավուր բարելավելու բանվորների աշխատանքի պայմանները և հեշտացնելու նրանց արտադրական վորակավորման ու կուլտուրական ընդհանուր մակարդակի բարձրացումը։ Իսկ դա իր հերթին հնարավորություն է տալիս բանվորական ամբողջ մասսային՝ ան-

չեղոքեն բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունն ավելի արագ, քան յերբևէ՝ առաջ գնալու իր նյութական բարեկեցության ու կուլտուրական աճման բարելավման ճանապարհով:

Գեղության և կուսակցության մլիոնաուսումները նպատակ ունեն վերջնականապես խորհրդային հողի յերեսից սրբելու դյուղացիության չահագործողների մնացորդները և վոչնչացնելու դյուղում նոր կարգի դեմ ուղղված կուլակային դիմադրության բոլոր ու ամեն տեսակի փորձերը և ընդ ամին ամեն կերպ ամրապնդելու կոլտնտեսությունները, նրանց մեքենաներ և լավագույն տեխնիկա մատակարարելով ու դյուղում ապահովելով կուլտուրական կյանքի արագ աճումը: Դա ստեղծում է չեղած բարենպաստ պայմաններ դյուղատնտեսության վերելքի համար և կոլտնտեսականների ամբողջ մասսայի կուլտուրական ու նյութական կյանքի տարեցտարի համար և դեպի նոր յերջանիկ կյանքը տանող այդ վերելքի տեմպերը ուղղակի կախման մեջ է դնում հենց իրենից՝ էլտրակտորանների կազմակերպվածությունից և աշխատանքի արտադրողականությունից:

Ճանապարհից վերացված են բանվորների և դյուղացիների կյանքի նյութական ու կուլտուրական արագ վերելքի ուղիի խոչընդոտները: Այս ամբողջ գործում վճռողական խոսքը պատկանում է հենց իրենց բանվորներին, հենց իրենց աշխատավոր դյուղացիներին: Վերջիվերջո բանը կախված է հենց մեղանից, մեր աշխատանքից, դրված խնդիրների կատարման համար մղվող պայքարը կազմակերպելու մեր հմտությունից:

IV

ՊԱՏՐԱՍՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՑԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցած չրջանը խոսում է բանվոր դասակարգի լարված պայքարի մասին ընդդեմ քշնամական դասակարգերի մնացորդների: Վորպեսզի հաղթանակ տարած գար դեպի յերկրորդ հնգամյակի խնդիրները, բանվոր դասակարգը պետք է իր ճանապարհից նետի նեպմանական բուրժուազիայի մնացորդներին քաղաքներում, ջախջախիր կուլակությունը դյուղում և որավուր հակահարված տար մանրբուրժուական տարերքին, վորը դեռևս այնքան ուժեղ է մեր յերկրում:

Անդամ բոլշևիկյան կուսակցության մեջ գտնվեցին՝ նշանավոր խմբեր, վորոնք իրենց մանր-բուրժուական տատանումների և կուսակցության դեմ ուղղված պայքարի մեջ անդրադարձրին թշնամական դասակարգերի գրոհումը: «Ձախ» ոպոզիցիայի դրոշի տակ, ինչպես և բոլշևիկյան տեմպերի դեմ ուղղված աջքենքումային պայքարի դրոշի տակ և, վերջապես, այդ խմբերի ու ֆրակցիաների բլոկների դրոշի տակ պայքար էր մղվում ընդդեմ կուսակցության գլխավոր գծի և լենինյան ղեկավարության, վորի գլուխ էր կանգնած և պետք կանգնած լինի ընկ. Ստալինը (ծափահարություններ): Կուսակցությունը պատռվով չետ մղեց բոլոր դրոհներն ու ջախջախեց աջ ու «ձախ» ոպոզիցիոներներին: Առանց դրան մենք չէինք ունենալ վոչ կուսակցություն, վոչ սոցիալիզմի մեծ հաղթանակներ:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգն առաջին հնգամյակի դրծին ձեռնարկել կարող էին միայն ջախջախելուց հետո տրոցկիստական ոպոզիցիան, վորը բացատում էր սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեկ յերկրում: Առանց վերացնելու այդ պատրոզական խումբը, վորը փորձ էր անում քաշելու մեզ դեպի հետ, դեպի կապիտալիզմը, մենք մտնել անդամ չէինք կարողանա այն ամենամեծ պայքարի մասին, վոր մեր յերկրի բանվոր դասակարգը մղում էր և հաղթականորեն մինչև վերջը տարավ առաջին հնգամյակում: Ջարդելով տրոցկիստներին, կուսակցությունը պահեց-պաշտպանեց մեկ յերկրում սոցիալիզմի տանելիք հաղթանակի լենինյան դրոշակը: Այն ժամանակ միայն ստեղծվեց լիակատար վստահություն բանվոր դասակարգի լայն մասսաների մեջ կուսակցության քաղաքականության ճշտության նկատմամբ, և մասսաների խանդավառությունն սկսեց սոցիալիզմի կառուցման ճանապարհին դեպի առաջ սլված յուրաքանչյուր քայլի հետ մեծանալ:

Առաջին հնգամյակի համար մշվող պայքարը չէր կարող հաղթանակով վերջանալ, եթե կուսակցությունը առաջանվեր աջակի դեմ պայքարելիս, որոնք նպատակ ունեին հրաժարվելու ընդհանուր արտադրության բոլշևիկյան տեմպերից և վերացնելու կապիտալիզմի կաշկանդումները: Ի պատասխան աջերի գրոհին կուսակցությունը պաբղեց կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ճակատի ուղղությամբ հարձակման դրոշակը, և այդ դրոշակի ներքո մենք տարանք առաջին հնգամյակի հաղթանակը: Այդ թեզման լիկվիդատորական էությունն ու կուլակային ատտաքը ժամանակին մերկացվեցին բոլշևիկների կողմից: Աջերի և «ձախերի» դեմ ուղղված պայքարում, նրանց վերոհիշյալ դաշնակցության դեմ մղվող պայքարում, կուսակցությունը համախմբեց բանվոր դասակարգն ու գյուղացիության մեծամասնությունը և լուծեց սոցիալիզմի կառուցման ամենադժվար խնդիրը՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրը:

Առաջին հնգամյակի հաղթությունները ամբողջ աշխարհի առաջ դրծնակատում ապացուցին մեկ երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը: Սոցիալիզմը հաղթանակեց ԽՍՀՄ-ում և նրա վերջնական հաղթանակի համար մղելիք հետագա պայքարի բոլոր ներքին դժվարությունները, որքան էլ նրանք մեծ լինեն դեռևս, անհամեմատելի են այն լրջագույն դժվարությունների հետ, որ արդեն հաղթահարել ենք: Այս է առաջին հնգամյակի հաղթանակի հիմնական իմաստը:

Չի կարելի ԽՍՀՄ-ում տեղի ունեցող երևույթները չզուգադրել կապիտալիստական երկրներում նկատվող դրության հետ:

Ահա արդեն հինգերորդ տարին է, որ կապիտալիստական աշխարհը չի կարողանում դուրս գալ տնտեսական խորը ճգնաժամից: Կապիտալիստական երկրներում գործերի անցյալ տարի կեղծ վերելքից հետո նույնիսկ՝ տնտեսական կյանքի մակարդակն այդ երկրներում դեռևս նշանակելի չափով պակաս է նախաճգնաժամային 1929 թվականից: ԽՍՀՄ և կապիտալիստական հիմնական երկրների ժողովրդական եկամտի դինամիկա (1928 թ. տոկոսային հաշվումներով)*)

Երկրներ	1928 թ.	1929 թ.	1932 թ.	1937 թ. (պլան)
ԽՍՀՄ . . .	100	115,6	182,0	401,0
Անգլիա . . .	100	103,8	83,1	—
Գերմանիա . . .	100	101,0	61,4	—
ՀԱՄՆ . . .	100	103,4	43,6	—

Աղյուսակից երևում է, որ 1928 թվականից ած 1932 թվ. ժողովրդական եկամուտն Անգլիայում ընկել է 16,9 %-ով, Գերմանիայում ընկել է 38,6 %-ով, ՀԱՄՆ ընկել է 56,4 %-ով: Ինչպես աղյուսակից երևում է, ամենահարուստ կապիտալիստական երկրում ՀԱՄՆ-ում ժողովրդական եկամուտն ընկել է ամենից մեծ չափով: Մինչև ԽՍՀՄ-ի այդ ժամանակաշրջանում ժողովրդական եկամուտը բարձրացել 82 %-ով:

Մենք չենք կարող ԽՍՀՄ-ի և կապիտալիստական երկրների ժողովրդական եկամտի դինամիկան համեմատել 1933—1937 թվ. հինգ տարվա ընթացքում: Կապիտալիստական երկրները վոչ հնգամյակներ ունեն, վոչ էլ պարզ հեռանկարներ: Կապիտալիստական պետությունների դեկավարներից չատերը հաղիվ թե հույս ունենան թեկուզ այդ ժամանակաշրջանի վերջում հասնելու 1928 թվ. մակարդակին: Այլ է դրությունը ԽՍՀՄ-ում: Մենք ունենք պարզ հեռանկար, որ հնգամյակն է տալիս: Մենք գնում ենք մի ճանապարհով, որ ունի ժողովրդական եկամտի խիստ զառիվեր: Մենք նպատակ ենք դնում մեզ բարձրացնել ժողովրդական եկամտի

*) Աղբյուրներ. Անգլիայի համար – Ջոդեռի լիգա, «1932—1933 թվ. համաժողովրդական տնտեսական դրությունը».
Գերմանիայի համար – «Վիրտշաֆտսունդ աուսլանդսաբեկ», 1933 թվ. № 22։
ՀԱՄՆ-ի համար 1933 թվ. մարտի 18-ի «Նեկոնոմիստ» (Նեղինալ Ինդեստրիալ Կոնֆերենս Բորդի ավյալները)։

մուտք 1932 թվ. համեմատությամբ 120 %-ով, իսկ 1928 թվ. համեմատությամբ՝ 301 %-ով:

Ճիշտ չեմ հիշատակի այն բազմաթիվ փաստերը, որոնք վկայում են կապիտալիստական երկրներում հղնաժամի չբջանում անցած՝ արտադրողական ուժերի կործանման մասին: Այդ փաստերը չափազանց շատ են, և նրանք բոլորն էլ վկայում են այդ յուրաքանչյուրական արտադրության ահագին անկման մասին, աշխատանքի մասնավոր արտադրական վիճակների ապարատի մասին, արդյունաբերության մեջ և քաղաքներում նոր շինարարության կրճատման, իսկ շատ դեպքերում նաև լիակատար դադարեցման մասին, համաշխարհային առևտրի կտրուկ անկման մասին, բանվոր դասակարգի անթիվ զոհերի մասին, բանվորների գործազրկության ու թշվառության մասին, գյուղի քայքայման և գյուղատնտեսության անկման մասին: Բավական է ասել, որ 1932 թվ. հունիսին ՀԱՄՆ կոնգրեսը ընդունեց «ժողովրդական անտեսության վերակազմման ակտ» և այլն օրենք, և այդ օրենքն սկսում էր հետևյալ խոսքերով.

«Վճռականում է, որ գոյություն ունի ազգային աղետ, որի տարածությունը մասսայական գործազրկությունն ու արտադրության կազմալուծությունն են: Այդ աղետը վորպես ծանր բեռ ընկած է ինչպես նահանգների միջև առևտրի ունեցող առևտրի, այնպես էլ արտաքին առևտրի վրա, վնաս և հասցնում ընդհանուր բարեկեցությանը, ջլատում ամերիկական ժողովրդի կենսական մակարդակը և այլն»:

Այս խոսքերը «ազգային աղետի» և ժողովրդի կենսական մակարդակի ջլատման մասին կապիտալիստական ամենահարուստ երկրում՝ խոսնք երկնց փոխարեն խոսում են: Նրանց նշանակությունն առանձնապես այն պատճառով է շատ մեծ, որ նրանք ասված են կապիտալիստական արդի հասարակության տիրապետող չրջանների կողմից:

Իսկ մենք մեր խնդիրն ենք համարում պայքարը հանուն յերկրորդ հնգամյակի հաղթանակի:

Երկրորդ հնգամյակում մեր խնդիրները ծավալվում են ի-վիթխարի ծրագիր: Այդ ծրագիրն, ինչպես ասված է նրանց համագումարին ներկայացրած թեզիսներում, առաջադրում է՝

«ա) կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի լիկվիդացիան, գյուղատնտեսական տնտեսությունների կոլեկտիվացման լիակատար ավարտման և բոլոր տնտեսապորձնների կոոպերացման հիմքի վրա արտադրության դործիքների մասնավոր սեփականության վերջնական լիկվիդացիան, — Խորհրդային Միության ևկոնոմիկայի բարձրացման լիկվիդացիան և արտադրության սոցիալիստական յեղանակի, վորպես արտադրության միակ յեղանակի սահմանումը, ընդամեն յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությունը դարձնելով սոցիալիստական հասարակության ակտիվ ու գիտակից կառուցողներ:

բ) ՌՍՀՄ-ի ժողովրդական ամբողջ տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումն այն հաշվի վրա, որ ստեղծված և առաջին հնգամյակի չրջանում, ընդ ամին այդ վերակառուցումն ընթացում և արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության (ծանր արդյունաբերության) հետագա արագ վերելքի ուղիով,—

գ) բանվորական և գյուղացիական մասսաների բարեկեցության ավելի արագ բարձրացում, ընդ ամին վճռական բարելավումն ՌՍՀՄ-ում բնակարանային և կոմունալ ամբողջ դործի,—

դ) բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հիման վրա պրոլետարական դիկտատուրայի տնտեսական ու քաղաքական դերքերի ամրապնդումն՝ վերջնականապես վերացնելու համար կապիտալիստական տարրերին ու դասակարգերն առհասարակ,—

ե) յերկրի պաշտպանունակության հետագա ամրապնդումը»:

Այսպիսի ծրագիր հնգամյակի համար իր առաջ դնել կարող է Խորհրդային սոցիալիզմի յերկիրը միայն: Բայց բանը չի սահմանա-

վակխում ծրագրի մշակմամբ: Ծրագիրը մշակել և հանդստանալ ղրանով՝ նշանակում է դործը կորստի մատնել, թաղել ծրագիրը: Ծրագրի մշակումով մենք միայն սկսում ենք դործը: Դլխավորը ծրագիրը կյանքում կիրառելու համար մղելիք պայքարի կազմակերպումն է:

Այդ պայքարը մեր կուսակցությունն է կազմակերպում: Կուսակցությունը կազմակերպում և ղեկավարում է սոցիալիստական անդասակարդ հասարակության կառուցման ամբողջ դործը: Անդասակարդ հասարակություն կառուցելու համար մղվող պայքարի դործիք հանդիսանում է կուսակցության ձեռքում պրոլետարական պետության ամբողջ ապարատը:

Մարքսիզմն ուսուցանում է, որ բանվոր դասակարդը չի կարող վոչնչացնել դասակարդերն ու կառուցել սոցիալիզմ, չջարդելով բուրժուական պետության մեքենան: Մարքսիզմը նմանապես ուսուցանում է, որ միայն պրոլետարական հեղափոխությամբ ստեղծված պետությունը կարող է մինչև վերջը հասցնել դասակարդերի վոչնչացումն ու ապահովել սոցիալիստական անդասակարդ հասարակության կառուցումը և դրանով մինչև վերջն ապահովել պետական ապարատի նոր, պրոլետարական ձևով՝ նրա լավագույն հնարավորությունները: Անիշխանական հրաժարումը պետությունից արտահայտում է բուրժուական հասարակության սոցիալական այն խմբերի հուսահատության անդորրությունը, վորոնք դուրս են մղվել լրենց ազուրից (КОЛЕН) ու կորցրել ապագայի ճանապարհը: Մարքսիստական վերաբերմունքը դեպի պրոլետարական պետությունը, վորպես սոցիալիզմի կառուցման վճռորոշիչ դործիքը, տալիս է պարդ հեռանկար կոմունիզմի լրիվ հաղթության համար:

Հոկտեմբերյան հեղափոխության տասնվեց տարվա ընթացքում քիչ փոփոխություններ չեն տեղի ունեցել մեր պետության մեջ: Մտաբերեցեք, թե ինչ եր ասում Լենինը նեպի սկզբում, 1923 թվականին. «Մեր խորհրդային հանրապետության մեջ սոցիալական կարգը հիմնված է յերկու դասակարդի՝ բանվորների և գյուղացիների համաձայնության վրա, վորին այժմ վորոշ պայ-

մաններով մասնակից են դարձված նաև «նեպմանները», այսինքն բուրժուազիան», Լենինի այս ֆորմուլի մեջ տրված է ճշդրիտ արտահայտությունն այն բանի, վորպիսին մեր պետությունն եր ընդամենը 10—12 տարի սրանից առաջ: Բայց այն տրվանից, յերբ բանվոր դասակարդի պայքարը լենինյան կուսակցության դրոշակի տակ ապահովել է մեզ համար սոցիալիստական տնտեսաձևի անքակտելիորեն տիրապետող դերությունն, «նեպմանին» ու կուլակին, այսինքն բուրժուազիային նույնիսկ պատկի տեղ չի մնում մեր տնտեսական կարդում: Դրանով իսկ պրոլետարական պետությունը ԽՍՀՄ-ում մի քայլ ևս արավ դեպի առաջ: Բայց հենց այժմ է լիակատար չափով ծավալվում պրոլետարական պետության, վորպես անդասակարդ հասարակության կառուցման դործիքի, դերը բանվոր դասակարդի և նրա կուսակցության ձեռքում: Այդ պատճառով էլ այնպիսի սրությամբ ծառացել է բյուրոկրատիզմի դեմ ուղղված պայքարի, ղեկավարման դլխավոր—բյուրոկրատական մեթոդների դեմ մղելիք պայքարի հարցը, վորպիսի մեթոդները հանդիսանում են կապիտալիզմի մնացորդների վաստիարաշուն արտահայտությունը կառավարման սիստեմի մեջ:

«Լենինիզմի հարցերի չուրջը» հոդվածում ընկ. Ստալինը ամբողջ պարդությամբ չարադրել է, թե ինչումն է կայանում պրոլետարական դիկտատուրայի նշանակությունը: Նա նշել է «պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմեր.

1) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը հաղթածողների ճնշման համար, յերկրի պաշտպանման համար, մյուս յերկրների պրոլետարների հետ ունեցած կապերի ամրապնդման համար, հեղափոխության զարդացման ու հաղթանակի համար բոլոր յերկրներում:

2) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը աչխատավոր և չհագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես կտրելու համար, պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրապնդելու համար, այդ մասսաներին սոցիալիստական չինարարության դործի մեջ ներդրավելու համար, այդ մասսաների պետական ղեկավարու-

թյան համար, վոր արվում է պրոլետարիատի կողմից:

3) Պրոլետարիատի իշխանության ողտագործումը սոցիալիզմի կազմակերպման համար, դասակարգերի վոչնչացման համար, անդասակարգ հասարակության, անպետության հասարակության մեջ անցնելու համար»:

Այդ հիմնական խնդիրներն այժմ էլ են կանգնած պրոլետարիատի դիկտատուրայի առաջ:

Ներկրող հեղափոխի ծրագիրը տալիս է անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման դիրքավորում: Ինչ խոսք, վոր ծրագիրը դրավիչ է, ընդունակ միլիոններ ուղղորդելու ամեն մի պայքարի համար:

Բայց այնպիսին է անցյալի ուժը, սովորությունների ուժը, կապիտալիզմի մնացուկների ուժը մարդկանց գիտակցության մեջ, վորոնք դեռ յերկեկ ճնշված եյին բուրժուական–կալվածատիրական ուժի արադիցիաներով, այնպիսին է մանր–բուրժուական տրամադրությունների ապրումնությունը անդամ աշխատավորների մասսաների մեջ, անդամ կուսակցության մի քանի միջնահավերում, վոր մեր մարտական լոզունգը կապիտալիստական տարրերին ու ուհատարակ դասակարգերը լի՛ վին վերացնելու մասին յերբեմն ընկալվում են վորպես դասակարգային պայքարի վերջ, վորպես ուղիի ինքնահանգստացման ու դենքից հրաժարվելու: Չի կարելի ժխտել հոսանքով լողալու, բանը ինքնահոսին թողնելու և քաղքենության ճահճի մեջ սուղվելու վոչ սակավաքանակ ցանկացողների առկայությունը: Ահա թե ինչու յեն կուսակցությունն ու Նախ և առաջ ընկ. Ստալինը յուրաքանչյուր քայլափոխում վոչնչացնում այդ տրամադրությունների «ժողովրդականությունը» և ինքնահոսի հերոսների «միտքը»: Կուսակցությունը բացահայտում և անդատակարգ հասարակության կառուցման խնդիրների իմաստը, վորոնց իրագործումը պահանջում է համառ և իրոք հերոսական պայքար ընդդեմ կապիտալիզմի մնացորդների, ընդդեմ հաղթահատած բոլոր դասակարգի ներքին ու արտաքին թշնամիների, ընդդեմ աշխատավորների բոլոր ու ամեն տեսակ թշնամիների: Ահա թե ինչու կուսակցության ամենաակ-

տալ խնդիրն է հանդիսանում բանվոր դասակարգի հեգեմոնական աչալրջության ուժեղացումը, մասսաների և ավելի ևս ուղղորդումը սոցիալիզմի կառուցման դժվարությունների դեմ պայքարելու համար, պրոլետարական դիկտատուրայի ամենակողմանի ուժեղացումն ընդդեմ թշնամիների, ընդդեմ թշնամական դասակարգերի մնացորդների: Դրա համար մեզ հարկավոր է «պրոլետարիատի ուժեղ ու հզոր դիկտատուրա» (Ստալին): Այդ հզորության և ուժի նշանակությունը պետք է ընդգծենք մենք ավելի ևս այն պատճառով, վոր մեր առաջ ամբողջ սրությամբ ծառացած են և դեռ յերկար ժամանակ պիտի ծառացած լինեն հարցերը հաղթանակության արտաքին հարձակումներից պաշտպանելու խնդիրները:

Միայն դրա համար չէ, վոր մեզ հարկավոր է պրոլետարական դիկտատուրայի հզորությունը: Այդ հզորությունը, վոր հենվում է բարձր զարգացած ինդուստրիայի և արդի ամբողջ տեխնիկայի ողտագործման վրա, մեզ հարկավոր է ամբողջ ժողովրդական անտեսության, այդ թվում և նրա ամենահետամնաց ճյուղի՝ գյուղատնտեսության վերակերտման ու վերափոխման համար: Նա հարկավոր է նմանապես նրա համար, վոր կազմակերպենք նոր կուլտուրայի կառուցումն ու վերթխարի աշխատանքը մասսաների սոցիալիստական վերադաստիարակման համար:

Մեր պետությունը կոչվում է բանվորագյուղացիական, որովհետև հիմնված է բանվորների և աշխատավոր գյուղացիների դաշինքի վրա: Մեր պետությունը պրոլետարական պետություն է, վորովհետև բանվոր դասակարգն է հանդիսանում նրա դեկավար ուժը: Բանվոր դասակարգի դեկավարությունը դյուղացիական–անտեսական ու կուլտուրական ահագին ոդնության և դյուղի սոցիալիստական վերադաստիարակման գործի կազմակերպության մեջ: Բանվոր դասակարգի դեկավարությունը դրա հետ միասին նպատակ ունի ապահովելու պետության չահերը, վորպես մեր յերկրի բոլոր աշխատավորների պլխավոր չահը: Դա առանձնապես անհրաժեշտ և այժմ, յերբ կոլտնտեսականների չարքերն են

մոնոմ պրոլետարների սոցիալիստական խմբերն անգամ, որոնց պրա դեռ չերեկ առանձնապես նկատելի չեր կուլտուրայական ու կապիտալիզմի այլ մնացուկների ազդեցությունը: Միայն պրոլետարական դիկտատուրայի ամբողջ ապարատին հենվելով և ավելի ու ավելի ծավալելով մասսաների սոցիալիստական վերադաստիարակման աշխատանքը՝ կարող է մեր կուսակցությունը պատվով կատարել բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան կոլտնտեսությունների վերածելու, աշխատավոր գյուղացիների ամբողջ մասսան, ինչպես և բանվորներին նոր անդասակարգ հասարակության դիտակից ու ակտիվ կառուցողներ դարձնելու խնդիրը:

Մեր կուսակցության ձեռքում պրոլետարական դիկտատուրան մինչև այն ժամանակ հանդիսանում է բուն իսկ բանվորների կազմակերպման ու վերադաստիարակման հզոր ապարատ: Այն որվանից, երբ բանվոր դասակարգը իր ձեռքն է վերցրել իշխանությունը, նա հնարավորություն է ստացել մինչև վերջը կատարելու ոչ միայն կապիտալիստական հասարակության ավերեզմանափորի, այլև սոցիալիստական հասարակության կազմակերպչի դերը: Ներա առջև միաժամանակ խնդիր է դառացել.

> «Պահպանելու բանվոր դասակարգի շահերը բանվորներից այն խմբակներից, խմբերից, խավերից, որոնք համառորեն կառչած են կապիտալիզմի արդիլիանքներին (սոմոթուլիններին) և չարունակում են առաջվա նման նայել խորհրդային պետությանը՝ «նրան» տալ որքան կարելի քիչ ու վատ աշխատանք,—«նրանից» սրկել որքան կարելի շատ փող (Լենին):

Դրա մեջ է իր արտահայտությունը գտնում պատակարգային պայքարի յուրահատուկ ձևը մեր պայմաններում: Այդ մոռանալ չի կարելի թեկուզ այն պատճառով, որ այժմ բանվոր դասակարգի մեջ ներհոսում են ոչ-պրոլետարական խավերից միլիոնավոր դրսեկներ: Բանվորների հետամնաց խմբերին և ամբողջ մասսային՝ սոցիալիզմի վրդով վերադաստիարակելու ուժեղացված աշխատանքով մենք ապահովում ենք պրոլետարական դիկտատուրայի, որպես նոր հասարակության ստեղծման վճռողական դերը

ծիքի, ամրապնդումը: Մեր ուժը այն է, որ բանվորների ճնշող մասսան արդեն մտել է ոչ թե մրցող եկամիտկայի, այլ և աշխատավորների դիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների դեմ պայքարող դիտակից ու ակտիվ մարտիկների չարքերը: Այդ պայքարի մեջ բանվոր դասակարգն իր ամբողջ դանդաղով անցնում է սոցիալիստական վերադաստիարակության դպրոցը, առանց որի աշխատավորների ավանդատրդն անգամ չի կարող մինչև վերջը հասցնել սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցման գործը:

Այս ամբողջ վերակառուցման ու նոր հասարակության ստեղծման դեկավարությունը դռնվում է մեր կուսակցության ձեռքում: Մեր չինարարության հաջողություններով ու հաղթանակներով կուսակցությունն իրավամբ կարող և հպարտանալ: Նա չի կապիտակերպում դրանք, նա չի կանգնած սոցիալիզմ կառուցող աշխատավորների դիմաց: Դրա հետ միասին կուսակցության մեջ ուժեղ և այդ չինարարության առանձին ճյուղերի թերությունների և հետամնացության պատասխանատվության դիտակցություն:

Ահա թե ինչու առաջին հնգամյակի հաղթանակներից հետո կուսակցությունը ոչ մրցան չի կրճատում պրոլետարական ինքնաքննադատության գործը, այլ, ընդհակառակը, ոգևորում և ինքնաքննադատության դենքից սոցիալիզմի համար մղվող հետագա պայքարի համար: XVII համագումարը ցույց տվեց, որ կուսակցությունը բարձր և պահում ինքնաքննադատության դրոշակը մեր աշխատանքի բոլոր և ամեն տեսակի թերությունների դեմ պայքարելիս: Իսկ լսելով յերեկվա թեքվողականների ճառերը, մենք պետք է ասենք. բանն այժմ լիկվիդատորությամբ չի և ոչ այնքան անցյալ սխալներին նվիրված ճառերը, որքան դանկությունը պայքարի մեջ մտնելու, իրենց համար առնչ գտնելու սոցիալիզմի անձնվեր կառուցողների չարքերում:

Ընդունելով յերկրորդ հնգամյակի ծրագիրը, մենք միաժամանակ XVII համագումարում դնում ենք կուսակցական և խորհրդային չինարարության կազմակերպական հարցերը, որոնց

լուծումից եւ գործնականում կախված կլինի նոր հնգամյակի ծրագրի իրական կատարումը: Այժմ, յերբ կուսակցության քաղաքականության ճշտության գիտակցությունը բանվորների և գյուղացիների չատ միլիոնների սեփականությունն է, վճռորոշման նշանակություն ունեն կատարվածի ապահովման լինդբերները, մեր շինարարության կազմակերպական հարցերը, պրակտիկ պայքարը բյուրոկրատիզմի բոլոր այլասերումների դեմ:

Այսպես ուրեմն, մեր ձեռքում գտնվում են բնութենական ահռելի հարստություններ, վորոնք մեկայն այժմ են լսկականորեն ի սպաս դրվում ամբողջ յերկրի շահերին, աշխատավորների ամբողջ մասսայի շահերին: Մենք արդեն ստեղծել ենք մի լինդուստրիա, վորն ընդունակ է կարճ ժամանակամիջոցում իրագործելու ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակազմումը, և ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակազմության խնդիրն առաջադրում ենք, վորպես յերկրորդ հնգամյակի խնդիրներից կարևորագույնը: Մենք գյուղատնտեսության մեջ՝ վճռորոշման մասում ավարտել ենք վերակազմական շրջանը և այժմ հնարավորություն ունենք ապահովելու կոլտնտեսական գյուղի վերելքի չտեսնված տեմպեր: Մենք անշեղորեն գնում ենք մեր յերկրի աշխատավորների կենսական մակարդակի և կուլտուրայի վերելքի ուղիով և այժմ հնարավորություն ունենք այդ գործում առաջ չարժվելու ավելի արագ, քան թե անցյալ բոլոր տարիները: Միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ սոցիալիզմ կառուցողների սեղմ շարքերով համախմբվել են, անսասանորեն հավատալով այն ուղու ճշտությանը, վորով նրանց առաջնորդում է մեր կուսակցությունը: Սոցիալիստական անդասակարգ հասարակության հաղթանակի համար մղվող պայքարում աշխատավոր մասսաների մեջ աճում են ակտիվությունն ու ձեռներեցությունը: Ամեն և որտեղ աճում է քաղաքում ու գյուղում մեր ամբողջ շինարարության ղեկավարների փորձը: Հենվելով գործարանների ու կոլտնտեսությունների, հենվելով պրոլետարական դիկտատուրայի ամբողջ ապարատի, կուսակցությանը պայքար և կարմիր կենտրոնի դասակարգերի վերացման համար և մեր յերկրի աշխատավորներին առաջնորդում դեպի սոցիալիստական անդասակարգ հասարակության ստեղծումն:

Ձկան խոչընդոտներ, վորոնք կարողանալին կանգնեցնել կամ կասեցնել ԽՍՀՄ-ի աշխատավորների չարժումը դեպի յերկրորդ հնգամյակի հաղթանակը—մի հաղթանակ, վորի կատմանը պատմական մեր կուսակցության ձեռքումն է: Մեզ համար սարսափելի չե վորևե թիվնամի, ինչպես ել նա փորձելու լինի ջլատել յերկրորդ հնգամյակի հաղթանակը: Կուսակցությունը, վոր չատ մարտեր և մղել բոլոր յերանգների ոպորտունիզմի դեմ՝ ռազմավորված և, վորպեսզի այսուհետև ել ջախջախի ոպորտունիզմը թեորիայում և պրակտիկայում:

Մենք դեպի հաղթանակ ենք գնում մարքսիզմ-լենինիզմի դրոշակի տակ: Մենք կհաղթենք այդ մեծ դրոշակի տակ, վոր դեպի առաջ և առնում բոլշևիկյան կուսակցությունը, վոր իր յերկաթե ձեռքերի մեջ և պահում բանվոր դասակարգի և լենինյան կուսակցության առաջնորդն ու պարծանքը՝ ընկ. ՍՏԱԼԻՆԸ (Բուռն ծափահարություններ):

Կեցցե յերկրորդ հնգամյակի լիակատար հաղթանակը!:

(Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգնում):

ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔԸ

Ընկերներ, համագումարում անդի ունեցած վիճաբանությունները ցույց տվին, որ XVII կուսակցական համագումարի պատգամավորները համաձայն են այն բանում, որ կենտրոնական Կոմիտեի՝ յերկրորդ հնգամյակին վերաբերող թեզիսները պետք և ընդունվեն մոտիկ հիմք համագումարի թեզիսների համար:

Տեղական պատգամավորների և մեր չինարարության առանձին ճյուղերի աշխատողների յելույթները ցույց տվին, որ նրանց առաջարկները ուղղված չեն յերկրորդ հնգամյակի պլանի հիմնական մասերի փոփոխության: Ինձ թվում է թե առանձին չրջանների ու տնտեսության առանձին ճյուղերին վերաբերող այդ բոլոր հարցերը պետք և մոխրագրվեն այն հանձնաժողովի քննարկման, որը պետք և ընարի համագումարը:

Բայց հարկավոր և դատել մի հարց, որ ամեն վիճաբանությունների ժամանակ դրվեց ընկ. ընկ. Որջոնիկիձեյի, Միկոյանի և Լյուբիմովի կողմից: Ընկ. ընկ. Որջոնիկիձեյի, Միկոյանի և Լյուբիմովի այդ առաջարկները—որ նրանք արին կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյի անդամների դիտությամբ ու համաձայնությամբ—ընդհանուր առմամբ ունեին այն իմաստը, որ մենք պետք և ուժեղացված դիտողության ցուցահաններ յերկրորդ հնգամյակի առաջադրանքների մեջ: Կոնկրետորեն այդ առաջարկները արտահայտում են մոտավորապես այսպիսի տեսակի թվանշանների մեջ. արդյունաբերական արտադրանքի տարեկան աճի ընդհանուր չափը հնգամյակի ընթացքում սահմանել մոտ թե 18,9 տոկոս, այլ 16,5 տոկոս: Խոսքը վերաբերում և նրան, որ կատարենք արդյունաբերական արտադրանքի տարեկան աճման տեմպերի պարզ վերջրացում և ամբողջ հնգամյա չրջանի համար սահմանենք մեր արդյունաբերության աճման այնպիսի տեմպ, որի մասին

յերազել չի կարող կապիտալիստական մորևե յերկիր: Բայց արդյունաբերության 16,5 տոկոսի աճման տարեկան տեմպի առաջադնել կարող և միայն տանելով մեծագույն հաղթանակ առաջին հնգամյակում:

Խոսքն այն մասին և, որ ուժեղացված դիտողության ցուցահաններ յերկրորդ հնգամյակի նախանչումների մեջ: Ճի՞շտ և արդյոք այդ առաջարկը:

Նախ և առաջ հարց դնենք. արդյոք իրագործելի՞ յեն այն առաջադրանքները, որոնք առաջարկված են XVII համագումարին կամ թեզիսներում: Այո, իրագործելի յեն: Համագումարը յերեք որ քննում եր յերկրորդ հնգամյակի ծրագիրը, և համագումարի վոչ մի պատգամավոր չասաց, թե այդ ծրագիրն ու նրա կողմից կանխադծվող տեմպերն անիրագործելի յեն: Ընդհակառակը, համագումարում կատարված բոլոր յելույթները մի բան են ասում, այն, այդ ծրագիրը, որ կուսակցության կենտրոնական Կոմիտեի կողմից նախագծված և համագումարին ներկայացված թեզիսներում, իրագործելի յեն: Ամբողջ XVII համագումարը արտահայտեց հաստատուն միահամուռ կարծիք. այո, մենք հանձն ենք առնում կատարել այդ ծրագիրը, այդ առաջադրանքներն ընդունելի յեն մեզ համար, նրանք իրագործելի յեն, մենք կիրագործենք նրանք (ծափահարություններ): Ցնբե մի այնպիսի համագումար, ինչպես բոլշևիկյան կուսակցության XVII համագումարն և, համաձայն և այս հարցում,— նշանակում և չի կարող ստրակցիա լինել, որ դործը կարվի, որ յերկրորդ հնգամյակի այդ ծրագիրն իրագործելի յե:

Ցնվ դրա հետ միասին, մեր առաջ, ընկերներ, կանգնած և այսպիսի մի հարց: Մեր առաջ կանգնած և այն բնդհանուր սպարդանների հարցը, որոնցում մենք աշխատում ենք, որոնցում մեզ վիճակված և լինելու իրագործել յերկրորդ հնգամյակը: Հարցը վերաբերում և նաև այնպիսի բաների, որոնք միայն մեզանից չեն կախված: Բանը վերաբերում և նրան, որ յերկրորդ հնգամյակի ծրագիրը վերջնականապես ընդունելիս մենք հաշվի առնենք թե

ներքին և թե արտաքին հանգամանքները: Այս կապակցությամբ համադրամարտում արված առաջարկության նկատմամբ՝ վոր պետք է վորոշ զգուշավորություն ցուցահանել նոր հնգամյակի համար ընդունվող առաջադրանքներում՝ պահանջվում է լուրջ ուշադրություն: Ինչո՞ւ չի անհրաժեշտ այդ: Դա անհրաժեշտ է այն պատճառով, վոր այն առաջադրանքները, վորոնք կընդունենք մենք կուսակցության XVII համագումարում, պետք է իրագործվեն բոլոր հանգամանքներում: Այդ է դլխավորը: Մենք պետք է կուսակցության XVII համագումարում ընդունենք այնպիսի վճիռներ, վորոնք կուսակցությունը, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարդը, աշխատավորները կկատարեն անկախ իրադրության մեջ ունենալիք վորևե բարդություններից, վորոնք կկատարվեն լուծվին, կկատարվեն բոլշևիկորեն: Այս է խնդիրը (ծափահարություններ): Մենք դիտենք, թե ինչ է նշանակում հնգամյակ կատարել: Ցերր մենք ձեռնարկեցինք առաջին հնգամյակի կատարման, մենք այդ դործին լուրջ ձեռնարկեցինք: Մենք ապահովեցինք վոչ միայն առաջին հնգամյակի կատարումն, մենք ապահովեցինք առաջին հնգամյակի կատարումը չորս տարում:

Այժմ հարցն այն է, վոր հաշվառելով այժմյան չրջանի հանգամանքների ամբողջ միասնությունը, աչքաոանքի այնպիսի թափ վերցնենք, վորը համենայն դեպս բոլոր պայմաններում լուծվին իրագործվի այն հնգամյա չրջանում, վոր կոչվում է յերկրորդ հնգամյակ:

Համեմատենք ընկ. Որջոնիկիձեի և մյուս ընկերների առաջարկությունն այն վճռի հետ յերկրորդ հնգամյակի տեմպերի վերաբերյալ, վոր ընդունեց մի տարի առաջ կենտրոնական Կոմիտեի և կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի միավորյալ պլենումը: Ի՞նչ եր ասվում 1933 թվականի հունվարին կկ և կվՀ միավորյալ պլենումում: Ցեւս կքաղեմ ընկ. Ստալինի խոսքերը յերկրորդ հնգամյակի և նրա տեմպերի մասին: Ահա թե ինչ եր ասում ընկ. Ստալինը կկ և կվՀ այդ միավորյալ պլենումում: Նա ասում եր.

«Ցեւս կարծում եմ, վոր յերկրորդ հնգամյակի համար հարկ կլինի վերցնելու արդյունաբերական արտադրանքի տա-

բեկան աճի համար միջին թվով 13—14%: Արդյունաբերական արտադրանքի աճի այդպիսի տեմպը կապիտալիստական յերկրների համար կապիտալիստական յերկրների համար կապիտալիստական յերկրների համար

հովազրված: Մեր տարեկան պլանների մեջ յերկրորդ հնգամյակում մենք պետք է ապահովենք յերկրորդ հնգամյակի առաջադրանքների վոչ միայն կատարումն, այլ և գերակատարումը:

Այդ պետք է վերաբերի և ընթացիկ տարվան—յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվան: Միանալով յերկրորդ հնգամյակի համար առաջարկվող՝ արդյունաբերական արտադրանքի տարեկան 16,5%-ի աճի առաջարկին, մենք պետք է լիովին պահպանենք, չկրճատելով վոչ մի տոկոս, վոչ մի տասներորդական տոկոսով կուսակցության ու կառավարության կողմից ընդունված առաջադրանքը 1934 թվ. յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա համար: Իսկ այդ առաջադրանքը, ինչպես հայտնի յե, վորոշվում է 19%-ով: Դա նշանակում է, վոր 1934 թվականի համար արդեն մենք վերցնում ենք հնգամյակի միջին տեմպերից բարձր առաջադրանք: Դրանով մենք ցույց ենք տալիս, թե ինչպես ենք մենք կամենում հաստատուն դարձնել յերկրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքը տարեկան 16,5%-ով մեծացնելու ծրագրի կատարումը: Մնում է մի բան՝ իսկականորեն ապահովել 1934 թվ. առաջադրանքի, այսինքն յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա առաջադրանքի կատարումն:

Ցնվ յես հավատացած եմ, վոր ներկա համազումարը այս հարցում կլինի համառաչն և կոազմավորի բոլոր ուժերը կատարելու համար ընթացիկ տարվա ծրագիրն ու յերկրորդ հնգամյակի ամբողջ պլանը (ձեփոխարություններ):

Ինչ է նշանակում այն վճռի ընդունումը, վոր այստեղ մտցված է անվանածս ընկերների կողմից: Նա նշանակում է հետևյալը:

Յերկրորդ հնգամյակում բոլոր ամբողջ արդյունաբերության նա տալիս է արդյունաբերական արտադրանքի տարեկան մեծացումն 16,5 %-ով: Արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության մեջ տարեկան աճը 14,5 %: Ինչպես տեսնում ենք, համապատասխան կկ թեզիսներին՝ այս առաջարկը վոչ միայն ապահովում է ամբողջ արդյունաբերության ահագին աճումը, այլև լայն սպառման առարկաներ արտադրող արդյունաբերության առանձնապես ուժեղացված աճումը:

Ինչ է նշանակում այս առաջարկը ըստ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ամբողջ չափի: Այդ նշանակում է, վոր յեթե առաջին հնգամյակի վերջում, 1932 թվականին, ամբողջ արդյունաբերությունը մեզ տվեց 43 միլիարդ ռուբլու արտադրանք, ապա յերկրորդ հնգամյակի վերջում, 1937 թվականին, մեր արդյունաբերությունը պիտի տա 92,7 միլիարդ ռուբլու արտադրանք: Այդ նշանակում է, վոր յերկրորդ հնգամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքի տարեկան ընդհանուր չափն աճելու յե ավելի քան յերկու անգամ: Ահա թե ինչ է նշանակում այդ առաջադրանքն ըստ արդյունաբերական արտադրանքի աճման:

Նշված առաջարկը չի չոչափում կապիտալային աշխատանքների հարցը—բոլոր այն առաջադրանքները յերկրորդ հնգամյակում կատարելիք կապիտալային աշխատանքների մասին, վորոնք նշված են համազումարին ներկայացված թեզիսների նախագծում, լիովին մնում են ուժի մեջ: Այսպիսով, կապիտալային աշխատանքների ընդհանուր ծավալն ըստ ժողովրդական տնտեսության, ինչպես այդ նշված է համազումարին ներկայացված թեզիսներում, առաջին հնգամյակի 50,5 միլիարդ ռուբլուց յերկրորդ հնգամյակում մեծանում է, գառնալով 133,4 միլիարդ ռուբլի, այսինքն ըստ ամբողջ ժողովրդական տնտեսության յերկրորդ հնգամյակում առաջին հնգամյակի համեմատությամբ կապիտալային աշխատանքների աճը կկազմի 164%,—ըստ արդյունաբերության— ամբողջությամբ վերցրած՝ 180 %,— ըստ ինքն արդյունաբերության՝ 360 %:

Լիովին թողնելով այդ բոլոր առաջադրանքները կապիտալային աշխատանքների վերաբերմամբ, թեզիսների համեմատությամբ վոչինչ չփոփոխելով նրանց մեջ, մենք դրանով նույնպես ցույց ենք տալիս լիակատար ղեկավարություն,— այնպիսի ղեկավարություն, վոր չինարարության վերթարի թափով յերկրորդ հնգամյակում կապահովի մեզ համար ել ավելի մեծ չափով արդյունաբերության համար ընդունված մի քիչ վերջացիվող առաջադրանքների կատարումը: Ընդունելով այդ առաջադրանքը կապիտալային աշխատանքների նկատմամբ, մենք լիովին ու ամբողջա-

պես ապահովում ենք յերկրորդ հնգամյակի արդյունաբերական արտադրանքին վերաբերող ծրագրի կատարումը և հզոր բազա նախապատրաստում ժողովրդական անտեսության ահագին աճման համար յերկրորդ հնգամյակում:

Ահա, ընկերներ, այն վճիռների իմաստը, որոնց մասին այժմ խոսվում է: Ցնս կարծում եմ, որ պետք է ընդունել այդ առաջարկը: Այդ առաջարկի ընդունումը կլինի բոլշևիկյան զգուշության արտահայտություն, որպիսի զգուշությունը պահանջում է լուրջ հաշվառում այն ամբողջ իրադրության, որի մեջ ապրում ենք մենք: Ընդունելով այդ առաջարկը, մենք ամբողջովին ապահովում ենք Կ՝ յերկրորդ հնգամյակին նվիրված թեզիսների դիրքավորման պահպանումը, ապա նշանակում և ապահովում ենք և անտեսության վիթխարի աճումը, և մեր յերկրի կենսական մակարդակի ու կուլտուրայի ահագին վերելքը:

Ցնթե մենք ընդունենք կոնտակտական համապատասխան թեզիսներն այդ ուղղումներով հանդերձ, ապա մենք ցուցահանած կլինենք յերկրորդ հնգամյակի հիմնական գծում թե՛ բոլշևիկյան պրոլետարիատի թե՛ բոլշևիկյան կոռվունակության: Այդ՝ գիծը լիովին ապահովում է բանվոր դասակարգի շահերը սոցիալիզմի համար մղվող նրա պայքարի մեջ:

Նոր հնգամյակի ծրագիրն ընդունելուց հետո գնա պետք է իսկական պայքար ծավալվի նրա իրագործման համար: Հնգամյակը, թեպետ և նրա յերկրորդ հնգամյակն է, ինքը չի հաղթանակի: Մեր խնդիրն այն է, որ կազմակերպենք հաղթանակը, մեր խնդիրն այն է, որ այդ հաղթանակը վերցնենք մեր ամուր բոլշևիկյան ճնռքը (բուռն, յերկար չդադարող ծափահարություններ, որոնցից վեր են ածվում ովացիայի):

ԸՆԿԵՐ ՄՈԼՈՏՈՎԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

ՑԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԹԵԶԻՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ, թույլ տվեք սահմանափակվել միայն այն լրացումների և ուղղումների քվարկմամբ, որոնք ընդունված են համապատասխան հանձնաժողովի կողմից՝ յերկրորդ հնգամյակի թեզիսների չորսջը:

Ի՞նչ լրացումներ են մտցված թեզիսներում: Ցնս կթվարկեմ այդ լրացումները:

Առաջին, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՐՎԱԾ լրացումները:

Արդյունաբերության արտադրանքի մասին գլխում, «բ» կետի վերջում, որտեղ խոսվում է մեքենաշինության մասին, մտցված է հետևյալ լրացումը.—

«Պետք է ընդարձակվի ճանապարհային աշխատանքների, կոմունալ անտեսության և բնակարանային–կենցաղային շինարարության սարքավորումների արտադրությունը»:

«Գ» կետում, որտեղ խոսվում է շինարարության հիմնական պրոցեսների մեքենայացման մասին, լրացում է արված տեղական շինանյութերի արդյունահանման մեքենայացումն իրագործելու անհրաժեշտության մասին: Այդ կետի վերջում, բացի դրանից, արված է մի լրացումն ևս, այն է, ավելացված է հետևյալը.— «Իրագործել փայտածուխի այրման մեքենայացումը»:

Արդյունաբերության բաժնում «դ» կետում, ուր խոսվում է ենթդեևտիի բազայի և վառելանյութի մասին, կետի վերջում ավելացված է «ծավալել տորֆի և թերթաքարերի գազիֆիկացիան»:

«ե» կետում, ուր խոսվում է թեթև և սննդի արդյունաբե-

րության մասին, լրացում և արված մանավանդ քային հետամնաց մեքենաները ժամանակակից մեքենաներով փոխարինելու անհրաժեշտության մասին:

Արդյունաբերական շինարարության բաժնում լրացում և արված, որը մատնանշում է Կուզնեցկի և Իրկուտսկի վագոնաշինական գործարանների կառուցման անհրաժեշտությունը՝ յուրաքանչյուրը 10 հազար չորսոնանի վագոնի կարողությամբ, այսինքն այստեղ լրացում և արված Սիբիրում յերկու նոր վագոնաշինական գործարանի կառուցման մասին:

Ստալինոգորսկի (նախկին (Բորբիկովի) ելեկտրոկայանի կարողություն սահմանված և վոչ թե 250 հազար կիլովատ, այլ 400 հազար կիլովատ: Լենինգրադի շրջանում ավելացված և ելի մի նոր—Ոխտենսկի— ջերմակենտրոնի շինարարություններ:

Վառելանյութային արդյունաբերության շինարարության բաժնի վերջում լրացված և հետևյալը.— «Անհրաժեշտ համարել տորֆի և թերթաքարերի արդյունաբերության շինարարության ծավալումը»:

Ցեխ, վերջապես, գունավոր մետաղագործության բաժնում ավելացված և կեմերովի գործարանի շինարարությունը:

Ցեխ թվարկեցի հանձնաժողովի՝ արդյունաբերության վերաբերող բոլոր քիչ թե շատ կարևոր լրացումները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ասպարեզում հանձնաժողովի կողմից բնդունված են հետևյալ լրացումները:

6-րդ կետում մտցված և հետևյալ լրացումը խորհուրդների մասին.—

«Հացահատիկային, անասնապահական, ճակնդեղի մշակության, բամբակագործական և այլ խորհրդակցությունները զարգացնել գյուղատնտեսական օրինակելի ձեռնարկություններ՝ մեքենայական խոշոր անտեսության անխնայելի յուրացման ուղղությամբ կատարվող համատարած աշխատանքի, ճիշտ ցանքաշրջանառության լիովին կիրառելու և սերմացուի դերը կատարելագործելու, անասունների ցեղը բարելավելու, արտադրանքի վորակը բարձրացնելու և պետության հանձնվող հացահատիկի, ճակնդեղի բամբակի, մսի, կաթի, յուղի, կաշու ու բրդի քանակն ավելացնելու և արտադրության վողջ կազմակերպումը վճռականորեն բարելավելու, խոշոր խորհրդտնտեսությունները, ապահոչորացներ, չափից դուրս մատնագիտացումը վերացնելու և այլնի հիման վրա»:

Այնտեղ, ուր խոսվում է գյուղատնտեսության դծով շինարարությունը ծավալելու մասին, լրացված է.— «անհրաժեշտ է ձեռնամուխ լինել Անդրվոլգյան շրջանի ծավալուն իրիգացման աշխատանքներին»:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ բաժինը վերածված և տրանսպորտի և կապի մասին բաժնի: Դրան համաձայն 8-րդ կետի վերջում մտցված և հետևյալ լրացումը.— «Համապատասխան ընդգծում է կապի բոլոր տեսակների, հատկապես ռադիոյի մեծ զարգացման և կապի աշխատանքի վորակի արմատական բարելավման անհրաժեշտությունը»:

Վերջապես, տրանսպորտի բաժնում արված է մի մատնանշում ել փոքր գետերն ոդտագործելու համար ծանծաղանիստ նավերի շինարարության զարգացման անհրաժեշտության վերաբերյալ:

Ահա յերկրորդ հնգամյակի մասին թեղիսների առթիվ արված բոլոր լրացումները:

Այժմ թույլ տվեք խոսելու այն մասին, վորը վերաբերում է թեղիսների թվական մասը:

Ձեմ թվարկի այդ ուղղումներից յուրաքանչյուրը, այլ կնշեմ, վոր այն առաջարկությունները, վորոնք արված են համապատասխան և վորոնք մատնանշում են յերկրորդ հնգամյակի առաջադրանքներում ուժեղացրած զգուշություն հայտարերելու անհրաժեշտությունը՝ ներկայիս ամբողջությամբ վերցրած վողջ իրադրության կապակցությամբ,—այդ առաջադրանքները հանձնաժողովի կողմից բնդունված են միաձայն:

Ի՞նչ բանի յեն հանդում նրանք: Ամենից առաջ յերկրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի աճելման ավելացման տեմպի մասին: Այդ տեմպն՝ արդյունաբերության առաջադրում ամբողջությամբ վերցրած՝ սահմանվում է 16,5 տոկոս: Դրան համաձայն արտադրության միջոցներ արտադրող արդյու-

նարերության աճի տարեկան միջին տեմպը սահմանվում է 14,5 %, իսկ սպառման միջոցներ արտադրող արդյունաբերության դծով 18,5 %:

Այդ առնչությամբ փոփոխված և նույնպես թեղիսներում բերված ներկրորդ հնգամյակի արդյունաբերական աճի աղյուսակը: Այստեղ մտցված են հետևյալ հիմնական փոփոխությունները.— Ներկրորդ հնգամյակի վերջին տարվա համար արդյունաբերական արտադրանքի ընդհանուր չափը սահմանվում է 92,7 միլիարդ ռուբլի, որը 1932 թվականի հարաբերությամբ կազմում է 214 %: Սպառողության միջոցներ արտադրող արդյունաբերության դծով արտադրանքի ընդհանուր չափը 1937 թվականի համար սահմանվում է 45,5 միլիարդ ռուբլի, իսկ լայն սպառման առարկաներ արտադրող արդյունաբերության համար արտադրանքի ընդհանուր չափը 1937 թվականին սահմանվում է 47,2 միլիարդ ռուբլի:

Արդյունաբերական արտադրանքի առանձին առաջադրանքներից անհրաժեշտ է մատնանշել հետևյալ փոփոխությունը: Մեքենաշինության և մետաղամշակման դծով 1937 թվականի համար պլանի ընդհանուր չափը սահմանվում է 19,5 միլիարդ ռուբլի, որը 1932 թվականի հարաբերությամբ կազմում է 207 %: Ներկրորդական բնույթի մի քանի փոփոխություններ մտցվում են քարածխի, նավթի, քիմիայի առաջադրանքներում: Սակայն դեռ հիմնական այն փոփոխությունները, որոնք վերաբերում են մետաղին: Չուգունի դծով 1937 թվականի համար վերջնական թիվ է սահմանվում 16 միլիոն տոննա, պրոպատի դծով—17 միլիոն տոննա, պրոկատի դծով— 13 միլիոն տոննա:

Ճիշտ պետք է ասենք նաև, որ հանձնաժողովը նպատակահարմար դատեց աղյուսակում, ուր բերված են արդյունաբերության առանձին ճյուղերի առաջադրանքները, մատնանշումները տալ ըստ յուրաքանչյուր արդյունաբերական ժողկոմատի՝ ամբողջությամբ վերցրած, այսինքն ըստ ծանր արդյունաբերության ժողկոմատի, թեթև արդյունաբերության ժողկոմատի, սննդարդյունաբերության ժողկոմատի և Մատժողկոմատի: Այդ աղյուսակում նույնպես ավելի մանրամասն տվյալներ են բերված թեթև արդյունաբերության առանձին ճյուղերի վերաբերյալ:

Այժմ կարիք չկա կանգ առնելու արդյունաբերության դծով արված ավելի մանրամասն ուղղումների վրա:

Գյուղատնտեսության վերաբերյալ՝ արտադրանքի ավելացումը 1937 թվականի համար սահմանվում է 1932 թվականի կըրկնակին, իսկ ընդհանուր առմամբ 26,2 միլիարդ ռուբլի: Հացահատիկային կուլտուրաների դծով բերքատվությունը մի հեկտարից 1937 թվականի համար սահմանվում է 10 ցենտներ, և դրան համապատասխան փոխվում է հացահատիկային կուլտուրաների ընդհանուր արտադրանքի ընդհանուր չափը: Համբակ-բուսաթելի դծով արտադրանքի ընդհանուր չափը սահմանվում է 7 միլիոն ցենտներ՝ հեկտարից 12 ցենտներ բերքատվության պայմանով: Վուշբուսաթելի դծով արտադրանքի ընդհանուր չափը վերցվում է 8 միլիոն ցենտներ՝ 3,7 ցենտներ բերքատվության պայմանով: Վերջապես, գյուղատնտեսության մեքենայացման վերաբերյալ.— կալսելու մեքենայացումը հնգամյակի վերջում հանձնաժողովն ընդունել է 85 տոկոսի չափով. տեսակավոր սերմերով ապահովվածությունը՝ 75 տոկոսի չափով:

Ասպ տրանսպորտի դծով: Արդյունաբերության և գյուղատնտեսության դծով ընդունված արտադրանքի ընդհանուր չափի փոփոխման համապատասխան, անվիճելիորեն փոփոխվում են նաև բեռնաշրջանառության չափերը: Կարիք չկա կանգ առնելու այդ դործի մանրամասնություններին վրա: Այդ մանրամասնությունները վոչինչ էական չեն մտցնում այն բանում, ինչը գրված է թեզիսներում:

Աշխատանքի դծով հետևյալ փոխոխություններն են մտցված թեզիսներում: Առաջին, նորից համապատասխան արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր չափի նվաճեցմանը, նվաճեցված է բանվորների և ծառայողների թվի աճը, ըստ որում վերջնականապես բանվորների և ծառայողների թվի աճը ժողովրդական վողջ տնտեսության համար 1937 թվականին՝ 1932 թվականի հարաբերությամբ՝ սահմանվում է 26 տոկոսով,

իսկ խոշոր արդյունաբերության դծով—29 տոկոս: Հետո աշխատավարձի մասին: Թեզիսների նախագծում խոսվում էր ռեալ աշխատավարձի 2,1 անգամ աճի մասին՝ առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ: Հանձնաժողովն առաջարկում է ռեալ աշխատավարձի աճը սահմանել յերկու անգամ՝ առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ: Դրան համապատասխան վորոշ չափով փոփոխվում և նաև աշխատավարձի ընդհանուր ֆոնդի աճը:

Ապրանքաշրջանառության դծով: Կենտկոմի թեզիսներում ասված եր ապրանքաշրջանառության յերկրորդ հնգամյակի վերջում ավելացնել 2 ½—3 անգամ: Նկատի առնելով այն փոփոխությունները, վորոնք ընդունված են արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ, հանձնաժողովն առաջարկում է ապրանքաշրջանառության աճը սահմանել 2 ½ անգամ՝ առաջին հնգամյակի վերջի դիմաց: Աշխատավորության սպառման նորմաների ավելացումը սահմանվում է վոչ թե 2 ½—3 անգամ, այլ 2—3 անգամ՝ առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ, վորովհետև առանձին արտադրանքների դծով աճը կլինի 2 անգամ, մյուսներինը՝ 3 անգամ:

Սրանով յես վերջացնում եմ թեզիսների առթիվ հանձնաժողովի ընդունած ուղղումների չարադրումը:

Ինչպիսով, ուղղումները չեն փոխում յերկրորդ հնգամյակի հիմնական առաջադրանքները:

Ինչպես յես արդեն ասացի յեղրափակման խոսքում, հիմնական աշխատանքների չափը ժողովրդական անտեսության բոլոր ճյուղերում չի փոփոխվում և վոչ մի տոկոսով, և վոչ մի տասնորդական տոկոսով: Հիմնական չինարարության վիթխարի պլանը, ինչպես նա ուրվագծված և կենտրոնական Կոմիտեի թեզիսներում, մնում է առանց վորևե փոփոխության և այդ ձևով առաջարկվում է համագումարի հաստատության: Իսկ դրանով ասպահովում են վոչ միայն յերկրորդ հնգամյակի արտադրական առաջադրանքները, այլև մեր յերկրի հետագա աճը յերրորդ հնգամյակում:

Ժողովրդական անտեսության աճի բոլշևիկյան տեմպն իր

լիակատար արտահայտությունն է գտնում այն առաջարկություններում, վորոնք մտցվում են ի հաստատություն համագումարի: Արդյունաբերության աճը, գյուղատնտեսության աճը, ապրանքաշրջանառության աճը, աշխատավորության կենսական մակարդակի և կուլտուրայի աճը, ժողովրդական յեկամտի աճը, մեր յերկրի արտադրողական ուժերի աճը՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերազինման գործի ավարտման հիման վրա, իրենց հետագա վիթխարի զարգացումը կգտնեն յերկրորդ հնգամյակի հսկայական տեմպերում:

Ընդունելով ներկա վորոշումը, մենք ընդունում ենք յերկրորդ հնգամյակի բոլշևիկյան ծրագիրը: Ընդունելով այդ վորոշումները յերկրորդ հնգամյա պլանի մասին, մենք ընդունում ենք նրանց վորպես խնդիր, վորը պահանջում է ամբողջ բանվոր դասակարգի և աշխատավորության վոչ մասսայի ուժերի հսկայական լարում, վորպես խնդիր, վորը պահանջում է մեր վոչ կուսակցության վիթխարի աշխատանքը:

Ընդունելով այդ առաջադրանքները, մենք լիակատար իրավունքով կարող ենք ասել.— Յերկրորդ հնգամյակը—դա կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի լիակատար վերացման պայքարի ծրագիրը է: Դա—անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման պայքարի ծրագիր է: Ընդունելով այդ առաջադրանքները, մենք լիակատար իրավունքով կարող ենք ասել.— կե՛ցցե յերկրորդ հնգամյակը—առաջին հնգամյակի հաղթանակների լավագույն չարունակությունը! (Ծափահարություններ):

Կեցցե՛ մեր Լենինյան կուսակցությունը, վորն ղեկավարում է յերկրորդ հնգամյակի հաղթանակի պայքարի վողջ գործը! (Ծափահարություններ):

Կե՛ցցե յերկրորդ հնգամյակի հաղթանակների առաջնորդն ու կազմակերպիչը— ընկ. ՍՏԱԼԻՆԸ! (Բուռն, յերկարատև ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգնում, բացականչություններ—«ուռա՛»):

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ
(1933 —1937 Թ. Թ.)

ՀԱՄԿ(Բ)Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎՆ ԸՆԿ. ԸՆԿ. Վ. ՄՈԼՈՏՈՎԻ և Վ. ԿՈՒՅԲԻՇԵՎԻ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված միաձայն)

Բանվոր դասակարգի հերոսական պայքարի շնորհիվ արդեն առաջին հնգամյակի ընթացքում կառուցված և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը, ջախջախված և կապիտալիստական վերջին դասակարգը — կուլակությունը, իսկ գյուղացիության հիմնական մասսաները — կոլտնտեսականները — Խորհրդային իշխանության հաստատուն հենարանն են դարձել գյուղում: ԽՍՀՄ–ն վերջնականապես հաստատվել է սոցիալիստական ուղու վրա:

Առաջին հնգամյակի տարիներին ԽՍՀՄ–ում կառուցվել և տեխնիկապես առաջավոր խոշոր արդյունաբերության, ըստ վրում առանձնապես նշանակելի հաջողություններ են ձեռք բերված ժամանակակից ծանր ինդուստրիայի — սոցիալիզմի նյութական բազայի, ժողովրդական վաղջ տնտեսության վերակառուցման հիմքի և թեթև ու սննդի արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրության զարգացման պայմանի — ստեղծման գործում: Վերջին արտադրության ստորյակ նոր ճյուղեր են կազմակերպված,— բարդ դազգ ահաչինության, ավտոմոբիլային ու տրակտորային արդյունաբերություն, կոմբայնաշինություն, ինքնաթիռ և ավիամոտորաշինություն, հզոր տուրբինների և դիզելատուրնե-

րի արտադրություն, բարձրորակ պողպատների, ֆերրո–համաձուլվածքների, ալյումինի արտադրություն, ժամանակակից քիմիական արդյունաբերություն, սինթետիկ կաուչուկի, ապակի, արհեստական թելուկի արդյունաբերություն և այլն: Ժամանակակից տեխնիկայի հիման վրա վերակառուցված են տրիկոտաժի, կարի, կոշկի, մսի, պահածոների, թղթի արդյունաբերությունը և այլն: Կատարվել են հազարավոր առաջավոր ճեռնարկություններ, որոնք գտնվում են կապիտալիստական տեխնիկայի լավագույն նմուշների մակարդակին և ժողովրդական բովանդակ արտադրությունը վերադրում են նոր տեխնիկական կուլտուրայի բարձր աստիճանին:

Առաջին հնգամյակում արմատապես վերակառուցվել և գյուղատնտեսությունը: Լենինյան կուսակցության կողմից ղեկավարվող պրոլետարիատը միլիոնավոր գյուղացիներին համոզեց կոլեկտիվ արտադրության առավելության մեջ և կոլտնտեսային նոր կարգ ստեղծեց գյուղում: Արդյունաբերության զարգացման ապագրիզում ձեռք բերված հաղթանակները պայմանավորեցին այն հսկայական հաջողությունները, որ մենք ունեցանք գյուղատնտեսությունը մեքենայական տեխնիկայի ռելսերի վրա փոխադրելու ուղղությամբ: ԽՍՀՄ–ն դարձավ աշխարհում ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրը:

Աշխատանքի նոր, սոցիալիստական կարգապահության ստեղծման գործում ձեռք բերված խոշոր հաջողությունները, բանվորների կվալիֆիկացիայի բարձրացումը, արտադրության կազմակերպման բնագավառում ձեռք բերված զգալի նվաճումները հնարավորություն տվին տեխնիկական վերակառուցման ընթացքում հսկայական հաղթանակներ ձեռք բերել աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում: Աշխատանքի արտադրողականության ամենամեծ ակտիվը ԽՍՀՄ–ն իր հեռավոր և թողել բոլոր կապիտալիստական յերկրներին՝ նույնիսկ բարձրագույն վերելքի տարիների համեմատությամբ:

Պրոլետարիատը, հաղթահարելով հնգամյա պլանի կենսագործումից բղխող հսկայական դժվարությունները, պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ ձեռք բերեց բազաքի և

դյուղի աշխատավորության դրությունը բարելավելու գործում: Խորհրդային հասարակարգի առավելություններն արդեն իսկ պայքարների ճնշք բերված ստիպեցնում հնարավորություն տվին լիովին վերացնելու գործազրկությունը, յոթժամյա աշխատանքային որ մտցնել, վոչնչացնել աղքատացումն ու պատուհերիզմը դյուղում:

Բանվորն ու կոլտնտեսականը լիակատար վստահության ձեռք բերին վաղվա որվա նկատմամբ և միայն նրանց գործ դրած աշխատանքի վորակից ու քանակից և կախված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ՍՍՀՄ-ում աշխատավորի համար անհետացել և գործազրկության, աղքատության և սովի սպառնալիքը: Ցուրաքանչյուր բանվոր կոլտնտեսական վստահ ու ուրախ և նայում իր ապագային, ամենալի ու ամենալի բարձր պահանջներ առաջադրելով դեպի ուրախության ու կուլտուրային:

Առաջին հնգամյակի տարիներին ՍՍՀՄ-ն դարձավ առաջավոր կուլտուրայի յերկիր: Վերացվել և տասնյակ միլիոնավոր բանվորների և դյուղացիների անդրագիտությունը և լրակատարված և անցումն ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման: Լայն ծավալվել և արտադպրոցական կրթությունը, խիստ կերպով բարձրացել և թերթերի, ամսագրերի և մյուս տպագրական հրատարակությունների տիրաժը: Ջրալի հաջողություններ են ձեռք բերված գիտական-տեխնիկական մտքի զարգացման բնագավառում, վորն ընդունություն կերպով լուծել և մի շարք խոշոր տեխնիկական պրոբլեմներ:

Առանձնապես զբալի անտեսական և կուլտուրական ամ և անկի ունեցել Մինուրյան տղղային ռայոններում, վորոնք արագ թափով ընթանում են լրմնց հետամնացության վերջնական լիկվիդացիայի ուղով:

Հնգամյակի հանդրադարձով, ամբողջ աշխարհի հարյուր միլիոնավոր աշխատավորների աչքի առաջ, մարդկության պատմության մեջ առաջին անգամ դործնականում ապացուցված և մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը:

Առաջին հնգամյակի այդ բոլոր հաջողությունները նախապատրաստեցին յերկրորդ հնգամյակի կառուցման ու իրագործման նախադրյալն ու հզոր բազան:

> «Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում և կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիան, դասակարգային տարբերության և չահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումն ևկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, յերկրի վողջ աշխատավոր բնակչության վերածումն անդատակարդ սոցիալիստական հասարակության դիտակից ակտիվ կառուցողների» (XVII կուսկոնֆերենցիա):

Պրոլետարյատ դասակարգերի մնացորդների վերջնական լիկվիդացիան և ամբողջությամբ աշխատավորության սրամտության տակ անցնող ժողովրդական յեկամտի ընդհանուր աճը պետք և յերկրորդ հնգամյակում ապահովեն բանվորական և կոլտնտեսական մասսաների բարեկեցության ել ավելի արագ վերելքը, ռեալ աշխատավարձի դզալի աճը, աշխատավորության սպառման մակարդակի բարձրացումը յերկու-յերեք անգամ:

Այդ ընդերների իրագործումը հնարավոր և միայն ժողովրդական վողջ անտեսության, արդյունաբերության, տրանսպորտի, դյուղատնտեսության ծավալուն տեխնիկական վերակառուցման հիման վրա: Դրա համար ել յերկրորդ հնգամյակի հիմնարկն և վճռողական անտեսական խնդիրը՝ ժողովրդական վողջ անտեսության վերակառուցման ավարտումն և: Իսկ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտման վճռողական պայմանը յերկրորդ հնգամյակում պետք և հանդիսանա նոր տեխնիկայի և նոր արտադրություններն յուրացումը: «Նոր շինարարության պաթոսը...» պետք և յերկրորդ հնգամյակում լրացվի «նոր դործարանների և նոր տեխնիկայի յուրացման պաթոսով, աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացմամբ, ինքնարժեքի լուրջ կրճատմամբ» (Ստալին):

դյուղի աշխատավորության դրությունը բարելավելու գործում: Խորհրդային հասարակարգի առավելությունները ոչղեն իսկ պատերազմն ձեռք բերված ամրակուռ հնարավորություն ստեղծեց լիովին վերացնելու գործազրկությունը, յոթժամյա աշխատանքային որ մտցնել, վերջնացնել աղքատացումն ու պատուհերիզմը դյուղում:

Բանվորն ու կոլտնտեսականը լիակատար վստահություն ձեռք բերին վաղվա օրվա նկատմամբ և միայն նրանց գործ դրած աշխատանքի վորակից ու քանակից ե կախված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ԽՍՀՄ–ում աշխատավորի համար անհետացել և գործազրկության, աղքատության և սովի սպառնալիքը: Ճուրջանչյուր բանվոր կոլտնտեսական վստահ ու ուրախ և նայում իր ապագային, ավելի ու ավելի բարձր պահանջներ առաջադրելով զարգացման ու կուլտուրային:

Առաջին հնգամյակի տարիներին ԽՍՀՄ–ն դարձավ առաջավոր կուլտուրայի յերկիր: Վերացվել և տասնյակ միլիոնավոր բանվորների և դյուղացիների անգրագիտությունը և լրիվանացված և անցումն ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման: Լայն ծավալվել և արտադպրոցական կրթությունը, խիստ կերպով բարձրացել և ինժիների, ամառգրների և մյուս տպագրական հրատարակությունների տիրաժը: Ջղալի հաջողություններ են ձեռք բերված գիտական–տեխնիկական մտքի զարգացման բնագավառում, վորն ինքնուրույն կերպով լուծել և մի շարք խոշոր տեխնիկական պրոբլեմներ:

Առանձնապես զգալի անառնական և կուլտուրական ոճ և տեղի ունեցել Մխուրյան ազգային ռայոններում, վորոնք արագ թափով ընթանում են իրենց հետամնացության վերջնական լիկվիդացիայի ուղով:

Հնգամյակի հանդրադարձով, ամբողջ աշխարհի հարյուր միլիոնավոր աշխատավորների աչքի առաջ, մարդկության պատմության մեջ առաջին անգամ գործնականում ապացուցված և մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը:

Առաջին հնգամյակի այդ բոլոր հաջողությունները նախապատրաստեցին յերկրորդ հնգամյակի կառուցման ու իրագործման նախադրյալն ու հզոր բազան:

> «Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում և կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիան, դասակարգային տարբերություն և չահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումն ևկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումն սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողների» (XVII կոնֆերենցիա):

Պորտատուդ դասակարգերի մնացորդների վերջնական լիկվիդացիան և ամբողջությամբ աշխատավորության տրամադրության տակ անցնող ժողովրդական յեկամտի ընդհանուր աճը պետք և յերկրորդ հնգամյակում ապահովեն բանվորական և կոլտնտեսական մասսաների բարեկեցության ե'լ ավելի արագ վերելքը, ոեալ աշխատավարձի դզալի աճը, աշխատավորության սպառման մակարդակի բարձրացումը յերկու–յերեք անգամ:

Այդ բնդիրների իրագործումը հնարավոր և միայն ժողովրդական վողջ անտնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի, դյուղատնտեսության ծավալուն տեխնիկական վերակառուցման հիման վրա: Դրա համար ել յերկրորդ հնգամյակի հիմնական և վճռորոշ անտնտեսական խնդիրը՝ ժողովրդական վողջ անտնտեսության վերակառուցման ավարտումն և: Իսկ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտման վճռորոշ պայմանը յերկրորդ հնգամյակում պետք և հանդիսանա նոր տեխնիկայի և նոր արտադրություններ յուրացումը: «Նոր շինարարության պաֆոսը...» պետք և յերկրորդ հնգամյակում լրացվի «նոր գործարանների և նոր տեխնիկայի յուրացման պաֆոսով, աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացմամբ, ինքնարժեքի լուրջ կրճատմամբ» (Ստալին):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՑԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՃԻ ԾԲԱԴԻՐԸ ՑԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Համկ(բ)կ XVII համագումարը հաստատում է Միության պետական պլանային հանձնաժողովի ներկայացրած և Համկ(բ)կ Կենտկոմի ու ՍՍՀՄ Ժողկոմխորհի ընդունած՝ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտման և արտադրանքի աճի ծրագրերը յերկրորդ հնգամյակում։

Համկ(բ)կ համագումարը վորոշում է՝

1. Վողջ արդյունաբերության արտադրանքի ծավալը 1937 թվականին, այսինքն՝ յերկրորդ հնգամյակի վերջին՝ սահմանել 92,7 միլիարդ ռուբլի (1927—1927 թվականի գներով)՝ ընդդեմ առաջին հնգամյակի վերջին՝ 1932 թվականի 43 միլիարդ ռուբլու, այսինքն՝ տարեկան միջին աճում 16,5 տոկոս և արդյունաբերական արտադրանքի չափի ավելացում 2,1 անգամ, իսկ նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ մոտավորապես 8 անգամ։ Լույն ապահովման առարկաների արտադրության ուղղությամբ նշել զարգացման ավելի արագ տեմպ վոչ միայն առաջին հնգամյակի համեմատությամբ (աճի տարեկան միջին տեմպը 18,5 տոկոս՝ առաջին հնգամյակի 17 տոկոսի փոխարեն), այլև յերկրորդ հնգամյակում արտադրության միջոցների արտադրության զարգացման տեմպի համեմատությամբ (աճի տարեկան միջին տեմպ 18,5 տոկոսով՝ արտադրության միջոցների աճի միջին տարեկան տեմպը 14,5 տոկոսի փոխարեն)։

2. Սահմանել արտադրանքի հետևյալ չափին ըստ արդյունաբերության կարևորագույն ճյուղերի.

	Առաջադրանք 1937 թվականի համար	
	Բացարձակ	Տոկոսներով 1932 թ. համեմատությամբ
Վողջ արդյունաբերությունը 1926—27 թվականի գներով (միլիարդ ռուբլիներով)	92,7	214,1
Այդ թվում		
Արտադրության միջոցների արտադրությունը	45,5	197,2
Սպառման առարկաների արտադրությունը	47,2	233,6

Մանր Անդյունաբերության Ժողկոմատ (միլիարդ ռուբլի)	33 5	234.6
Անասնարդյունաբերության Ժողկոմատ (միլիարդ ռուբ.)	3,6	200,0
Թեթև Արդյունաբերության Ժողկոմատ (միլիարդ ռուբլ.)	19,5	248,8
Մատժողկոմատ (միլիարդ ռուբլիներով)	11,9	256,1
Մեքենաշինության և մետաղամշակության (1926—27 թ. գներով) միլիարդ ռուբլիներով	19,5	207,0
Այդ թվում		
Մետաղահատ դազգահներ (հազար հատով)	40	267,0
Տրակտորները՝ պայմանական 15 ուժանոց (հազար հատով)	167	323,0
Կոմբայններ (հազար հատով)	20	200
Մոտոխոտալային շոգեքարշեր (հաշված պայմանական «Ə» և «СУ», հատով)	2800	337
Ապրանքատար վագոններ՝ յերկու առանցինների հաշվով, հազար հատով	118,4	581
Ավտոմոբիլներ հազար հատով	200	837 0
Էլեքտրաէներգիա միլիարդ կիլովատ ժամով	38	283,0
Այդ թվում		
Գյուղերդյուղ շրջանային կայաններ	24,5	296
Քարածուխ (միլիոն տոններով)	152,5	237
Դաշտային հում նավթ (միլիոն տոններով)	46,8	210
Չուգուն (միլիոն տոններով)	16	260
Պողպատ (միլիոն տոններով)	17	269
Գրոտատ (միլիոն տոններով)	13	303
Քիմիական ապրանքարտադրություն (26—27 թ. գներով, միլիարդ ռուբլիներով)	5,5	280
Տախտակներն (միլիոն խոր. մետրերով)	43	176
Բամբակի գործվածքներ (միլիոն մետրերով)	5100	188
Վուշի գործվածքներ (միլիոն մետրերով)	600	461
Կոշիկներ (միլիոն զույգերով)	180	220
Շաքար-ջաղարավազ (հազար տոններով)	2500	302
Ձկան վորս (հազար տոններով)	1800	139
Մրտ (Մատժողկոմատ. միլիոն տոններով	1200	276
Գահածոներ (միլիոն քանակներով)	1000	279

Նկատի ունենալով, որ տեղական արդյունաբերությունը կարող է լուրջ լրացուցիչ ֆակտոր հանդիսանալ բանվորների և կոլտնտեսականների արագորեն աճող պահանջները բավարարելու գործում, համապատասխանը կհրկրորդ հնգամյակում տեղական արդյունաբերության կողմից արտադրվող լայն սպառման առարկաների արտադրության համար ստեղծել նախատեսում է յերեք անգամ, և պարտավորեցնում է տեղական մարմիններին՝ առավելագույն նախաձեռնություն հանդես բերել տեղական արդյունաբերության զարգացման ու հումքի նոր տեսակներ հայտաբերելու գործում: Միաժամանակ համապատասխանը պարտավորեցնում է կենտկոմին ու ժողկոմխորհին՝ ուժեղացնել տեղական արդյունաբերության՝ մթերքենական և հանրապետական արդյունաբերության մի շարք ճյուղերում տեղական մարմինների ենթակայությանը հանձնելու միջոցով, նաև տեղական արդյունաբերության հումքային բազայի մասը դնելով տեղական դործկոմների տրամադրության տակ:

3. Համապատասխանը մատնանշում է, որ արդյունաբերության զարգացման սահմանված ծրագիրը կատարելու և ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն իրականացնելու համար անհրաժեշտ է.—

ա) Տեխնիկապես վերազինել ՄՍՀՄ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, որոնց ապահովի նորագույն տեխնիկական նվաճումները կարճ ժամանակամիջոցում արմատացնելը և 1937 թվականին արդյունաբերության ողջ արտադրանքի մոտ 80 տոկոսն առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում կատարված կամ ամբողջովին վերակառուցված նոր ձեռնարկություններից ստանալը: Միևնույն յերկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսությանը տրվող արտադրության միջոցները պետք է յերկրորդ հնգամյակի վերջում կազմեն ժողովրդական ողջ տնտեսության մեջ գործող արտադրության միջոցների 50—60 տոկոսը:

բ) Կենսագործել մեքենայացում — ժողովրդական տնտեսության այդ առաջատար ճյուղի — այնպիսի վերակառուցումը, որն ապահովի ժողովրդական տնտեսության՝ ժամանակակից, տեխնիկապես առաջավոր սարքավորման բոլոր պահանջները սե-

վական ուժերով բավարարելն՝ արտադրության նոր տեսակների լայն զարգացման պայմաններում: Ներկրվող հնգամյակում պետք է յուրացվի մոտ 200 տեսակ–չափի նորագույն դաղդյահների արտադրությունը: Մետաղագործական մեքենաշինությունը պետք է յուրացնի մետաղագործական բոլոր ցեխերի սարքավորման լրիվ կոմպլեկտը, թեթև և սննդի արդյունաբերության տասնյակ նոր տիպի մեքենաների մեքենաշինությունը: Գյուղատնտեսական մեքենաշինությունը պետք է յուրացնի մեքենաների ու սրակատորային կցորդ ինվենտարի բոլոր տեսակների արտադրությունը՝ գյուղատնտեսության հետագա մեքենայացումն իրականացնելու, հատկապես տեխնիկական ու չարքահերկ կուլտուրաների աշխատունկալ պրոցեսները մեքենայացնելու համար: Պետք է լայնացվի ճանապարհային աշխատանքներին, կոմունալ տնտեսությանը և բնակարանային–կենցաղային շինարարությանն անհրաժեշտ տարբավորման արտադրությունը:

դ) Հիմնականում ավարտել արդյունաբերության բոլոր աշխատընկալ և դժվարին պրոցեսների մեքենայացումը: Ջարածխի արտադրության ասպարեզում հանքահատման աշխատանքների մեքենայացումը հնգամյակի վերջին հասցնել 93 տոկոսի, համապատասխանորեն բարձրացնելով մյուս պրոցեսների մեքենայացման մակարդակը.—սև մետաղագործության մեքենայացումը հասցնել այնպիսի մակարդակի, որն ապահովի չուգունի 80 տոկոսը լցովին մեքենայացված դոմնեններից ստանալը. տորֆի արդյունաբերության ասպարեզում մեքենայացված չեղանակներով տորֆի արդյունահանման չափը սահմանել տորֆի ընդհանուր արդյունահանման ավելի քան 70 տոկոսի չափով. շինարարության բնագավառում հիմնական պրոցեսների մեքենայացումը բարձրացնել մինչև 80 տոկոսի և իրականացնել տեղական շինանյութերի արտադրության մեքենայացումը. անտառանյութերի մթերման ու մշակության մեքենայացման ասպարեզում՝ փոխադրության մեքենայացումն ավելացնել 6 անգամ, մշակմանը՝ 3 անգամ. իրագործել փայտածուխի այրման մեքենայացում:

ղ) Նոր ենթրգետիկ բազա ստեղծել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցումն ավարտելու համար և բո-

լոր էներգետիկ հանդուցվածքում կարողության ռեզերվները առավ-
ծել, որոնք ապահովեն ժողովրդական տնտեսության անընդմեջ
էլեկտրամատակարարումը: Հիմնականում ավարտել արդյունաբե-
րության էլեկտրիֆիկացիան, արդյունաբերության բոլոր ճյուղե-
րում, հատկապես մետաղագործության և քիմիայի բնագավա-
ռում, լայնորեն ոգտագործելով արտադրության էլեկտրընկալ
նորագույն մեթոդները (էլեկտրընկալ արտադրությունների կոդ-
մից էներգիայի սպառման առնվազն քան 9 անգամ), լայնորեն
զարգացնելով տրանսպորտի էլեկտրիֆիկացումը և էլեկտրաէներ-
գիան ատոմհանարար արմատացնելով գյուղատնտեսության ար-
տադրական պրոցեսներում: Ավելի լայն կերպով ծավալել ար-
դյունաբերության ու խոշոր քաղաքների էլեկտրամատակարարումը: Շարու-
նակել էլեկտրամատակարարման համար վառելիքի տեղական տե-
սակները՝ Մերձ-Մոսկովյան, Ուրալի, Արևելյան Սիբիրի, Մլչին
Ասիայի ածուխը, տորֆը և թերթաքարը, ու հատկապես հիդրո-
էներգետիկ միջոցներն ավելի լայն կերպով ոգտագործելու դիծը:
Ցերկրորդ հնգամյակում ավարտել ջրջանային կայանների հան-
դուցավորումը ջրջանների սահմաններում և սկսել կայանների
միջջրջանային հանդուցավորումը, արդեն յերկրորդ հնգամյակում
առեղծելով էլեկտրամատակարարման ամենախոշոր սիստեմն ամ-
բողջ աշխարհում (Դոնբաս-Մերձ-Դնեպրյան ջրջանը՝ տարեկան
9 միլիարդ կիլովատ արտադրությամբ): Ծավալել տորֆի և թեր-
թաքարերի գազիֆիկացիան:

յե) Լիովին վերացնել ան մետաղագործության հետ մնալը
ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր տեմպերից:
Հնգամյակի տարիներին կրկնապատկել մետաղագործության կա-
րողությունը, միջոցներ ձեռք առնել արագորեն հաղթահարելու
այն խզումը, որ գոյություն ունի դոմենային և նրանցից հետ
մնացող պողպատաձուլման և հատկապես պրոկատային ցեխերի
միջև.—մետաղի զանազան տեսակները՝ վորակա-
կարողության միջև.—մետաղի, էլեկտրապողպատի, ֆերրո-համաձուլվածքների;
բարդ պրոֆիլ ունեցող պրոկատի արտադրությունը ծավալել ժո-
ղովրդական տնտեսության պահանջները լիովին բավարարող չա-
փով. լայն վերակառուցման յենթարկել յերկաթահանքային ար-

դյունաբերությունը, լայնորեն արմատացնելով հանքաքարի հա-
րստացման ու ագլոմերացիայի մեթոդները:

Առանձնապես արագ տեմպով հաղորդել գունավոր մետաղա-
գործության զարգացմանն ու տեխնիկական վերազինմանը, վերջ-
նականապես անցնել պղինձ ստանալու ժամանակակից յեղանակ-
ներին (ֆլոտացիա, ալոտացիչ վառարաններ) և ցինկի արտա-
դրության մեջ լայնորեն արմատացնել առաջավոր էլեկտրալու-
ծական մեթոդը և նրա ոգնությամբ 1937 թ. առնվազն վորջ ցինկի
70 տոկոսը. կազմակերպել անագի, նիկելի, մագնեզիումի արտա-
դրությունը, լայն ծավալել ալյումինի արտադրությունը. լրիվ
բավարարել ամբողջ ժողովրդական տնտեսության, մանավանդ
էլեկտրիֆիկացիայի պահանջները գունավոր մետաղագործության
արտադրանքով:

զ) Վճռական տեղաշարժեր առաջացնել քիմիական արդյու-
նաբերության զարգացման մեջ, վորն ապահովի ժողովրդական
տնտեսության բոլոր ճյուղերի լայն քիմիացումը և յերկրի պաշտ-
պանունակության ամրացումը: Ցերկրորդ հնգամյակի ընթացքում
տնտեսապատիկ ավելացնել ամեն տեսակի պարարտանյութերի ար-
տադրությունը. լայնորեն ծավալել քիմիական մի շարք նոր ար-
տադրություններ ստեղծելու պրոցեսը (կարծր վառելանյութի —
ածխի, տորֆի, թերթաքարերի քիմիական վերամշակման, ներ-
կանյութերի նոր տեսակներ, պլաստմասսաներ, սինթետիկ կաու-
չուկ և այլն). տեխնոլոգիական նորագույն պրոցեսներն արմատ-
ացնել քիմիական արդյունաբերության մեջ (լայն զարգացնել
էլեկտրատերմիկ և էլեկտրալուծական մեթոդները, ռեակցիաները
կատարել դաշտային ֆազերում և այլն). ուժեղացնել քիմիական
արդյունաբերության կոմբինացումն արդյունաբերության մյուս
ճյուղերի հետ (կոքսային արդյունաբերության, գունավոր մե-
տաղագործության, սև մետաղագործության հետ և այլն), և
հումքի մի շարք նոր տեսակների ոգտագործումը:

Ըստ ամենայնի ծավալել թեթև ու սննդի արդյունաբերու-
թյան կարևորագույն ճյուղերի արտադրությունը՝ խոշոր մեք-
նայական ինդուստրիայի ստեղծման հիման վրա.—ավտոմատիկ
գործվածքային դազդյահների տեսակարար կշիռը բամբակեղենի

արդյունաբերության մեջ մինչև 40 տոկոս հասցնելը հնգամյակի վերջում և հետամնաց մանուածքային մեքենաները ժամանակակից մեքենաներով փոխարինելը· վերացնել վուշի արդյունաբերության տեխնիկական հետամնացությունը՝ արագաշարժ մեքենաներ արմատացնելու և վուշի նախնական մշակումն արմատական վերակառուցելու միջոցով· իրագործել տրիկոտաժի, կարի և կոշիկի արտադրությունների բարմակոդմանի մեքենայացումը· կոմբինացման զարգացման հիման վրա ստեղծել խոշոր, մեքենայական մարդյունաբերություն, ձկան մեքենայացված վորսի տեսակարար կշիռը բարձրացնել մինչև պետական ձկնարդյունաբերության վորսի 70 տոկոսին՝ տեխնիկական նավատորմի դգալի վերակառուցման միջոցով· յայն վերակառուցման ենթարկել ձկնհան արդյունաբերությունը՝ արտադրության ամենից ավելի էֆեկտավոր եքսպեդիցիոն կեղանակի արմատացման հիման վրա:

4· Արդյունաբերության տեխնիկական վերակառուցման խնդիրների իրագործումը պահանջում է հաջողությամբ յուրացնել նոր տեխնիկան և նոր արտադրություններ, վորը պետք է իր արտահայտությունը գտնի աշխատանքի արտադրողականության զգալի աճի և ինքնարժեքի լուրջ կրճատման մեջ: Դրան համապատասխան համադումարը վորոշում է.—

ա) արդյունաբերության ասպարիզում աշխատանքի արտադրողականությունը յերկրորդ հնգամյակում բարձրացնել 63 տոկոսով, առաջին հնգամյակի 41 տոկոսի փոխարեն, այսինքն՝ այնպիսի չափերով, յերբ աշխատանքի արտադրողականությունը վճռական դործոն և դառնում յերկրորդ հնգամյակում արտադրանքն ավելացնելու համար ուղղված ծրագրի կատարման մեջ·

բ) ամբողջ արդյունաբերության մեջ ինքնարժեքն իջեցնել 26 տոկոսով և այդ միջոցով ապահովել առնվազն 13 միլիարդ ռուբլու կուտակումը 1937 թվականին ի հաշիվ ինքնարժեքի իջեցման ուղղագծված չափի՝ համեմատած ինքնարժեքի 1932 թ· մակարդակի հետ·

գ) ինքնարժեքի իջեցման հետ միաժամանակ կտրականապես բարելավել արտադրանքի վորակն ու ասորտիմենտը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Միջոցներ ձեռք առնել ղգալիորեն նվազեցնելու մոխրի և ծծմբի պարունակությունն ածխի մեջ, բարձրացնել մետաղագործության մեջ տեսակավորությունը, բարելավել մեքենաների վորակը և նրանց ոգտակար դործողության դործակիցը, բարձրացնել մանուածքի համարավորությունը, կտրականապես բարելավել բամբակեղեն և վլյա դործվածքների վորակը, բարձրացնել բրդեղենի արդյունաբերության նուրբ մահուդյա և կամվոլային խմբերի տեսակարար կշիռը, բարձրացնել նուրբ բրդի տեսակարար կշիռը դործվածքներում, կտրուկ կերպով բարձրացնել ոճսոի վորակը՝ ի հաշիվ ավելի մեծ քանակությամբ ճարպային հիմք դործածության, բարելավել կոշկեղենի վորակը՝ ինչպես ի հաշիվ կարի յեղանակների, նույնպես և ի հաշիվ դործածվող հումքի· բարելավել մսարդյունաբերության արտադրանքի վորակը՝ ի հաշիվ խոզի մսի, յերշիկների, ուտելու ճարպի տեսակարար կշռի բարձրացմանը· բարելավել ձկնարդյունաբերության արտադրանքի վորակը՝ ձկան լավ տեսակների տեսակարար կշռի ավելացման միջոցով· զգալի չափով բարելավել ալրաղացային արդյունաբերության ասորտիմենտն ու արտադրանքը՝ ալյուրի բարձր տեսակների տեսակարար կշռի ավելացման հաշվին:

5· XVII համադումարն ամբողջ գյուղատնտեսության արտադրանքի ծավը հնգամյակի տարիներին սահմանում է 13,1 միլիարդ ռուբլուց (1926—27 թվականի գներով) մինչև 26,2 միլիարդ ռուբլի, այսինքն՝ կրկնակի:

Համադումարը պարտավորեցնում է գյուղատնտեսության կոլեկտիվացման ճյուղերում արտադրանքը հասցնել հետևյալ չափերի.— հացահատիկային կուլտուրաներ՝ 1·048 միլիոն ցենտներ, բարձրացնելով մի հեկտարի բերքատվությունը 10 ցենտների· շաքարի ճակնդեղ՝ 276 միլիոն ցենտներ, բարձրացնելով մի հեկտարի բերքատվությունը մինչև 200 ցենտների· բամբակ-բուսաթել՝ 7 միլիոն ցենտներ, բարձրացնելով ջրովի բամբակի բերքատվությունը մի հեկտարից 12 ցենտների· վուշ-բուսաթել՝ 8 միլիոն ցենտներ, բերքատվություն բարձրացնելով մինչև 3,7 ցենտների, իսկ անասնաբուծության արտադրանքը բարձրացնել յերկու սա մի քառորդ անգամ:

6. Համագումարն ընդգծում է, որ գյուղատնտեսության արտադրանքի ուրվագծված աճը կարող է ձեռք բերվել միայն կոլեկտիվացման լիակատար ավարտման և ողջ գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման իրագործման հիման վրա, որի համար անհրաժեշտ է.—

ա) հացահատիկային, անասնաբուծական, ճակնդեղի մշակության, բամբակագործական և այլ խորհրդատնտեսություններում զարձնել գյուղատնտեսական որինակելի ձեռնարկություններ՝ մեքենայական խոշոր անտեսության տեխնիկայի յուրացման ուղղությամբ կատարվող համառ աշխատանքի, ճիշտ ցանքաշրջանառության լիովին կիրառելու և սերմացուի դործը կազմակերպելու, անասունների ցեղը բարելավելու, արտադրանքի վորակը բարձրացնելու և պետությանը հանձնվող հացահատիկի, ճակնդեղի, բամբակի, մսի, կաթի, յուղի, կաշու ու բրդի քանակն ավելացնելու և արտադրության ողջ կազմակերպումը վճռականորեն բարելավելու, մեծածավալ խորհրդատնտեսությունները մանրացնելու, չաւիից դուրս մանրադիտացումը վերացնելու և այլնի հիման վրա.

բ) ՄՏԿայանների թիվը 1932 թ. 2·446-ից հասցնել մինչև 6000-ի 1937 թվականին, Մեքենատրակտորային կայաններով ընդգրկելով բոլոր կոլտնտեսությունները.

գ) տրակտորային պարկը 1932 թ. 2·225 հազար ձիու ուժից ավելացնել մինչև 8·200 հազար ձիու ուժի 1937 թվականին, այսինքն՝ 3,7 անգամ. Կոմբայնների պարկը մինչև 100 հազար հատ և ավտոմոբիլային պարկը գյուղատնտեսության մեջ՝ մինչև 170 հազար մեքենա, այսինքն՝ ավելի քան 12 անգամ.

դ) հիմնականում ավարտել գյուղատնտեսության մեքենայացումը.— 1937 թվականին տրակտորով կատարված վարը և նայացումը — 1937 թվականին տրակտորով կատարված վարը և նայացումը՝ 80 տոկոս, կուլտիվացիան՝ 70 տոկոս, տրակտորային բերքահավաք մեքենաներով հացահատիկինոս, տրակտորային բերքահավաք մեքենաներով հացահատիկինոս, բերքի հավաքումը՝ 60 տոկոս և կալսելու մեքենայացումը՝ 85 տոկոս.

ե) լայնորեն արմատացնել ագրոտեխնիկի ձեռնարկումների սիստեմը, ամենուրեք մտցնել ճիշտ ցանքաշրջանառություն, հա-

ցաբույսերի ցանքի տարածության 75 տոկոսի վրա ցանքը կատարել ընտիր սերմացուով, ցանքի տարածության 50 տոկոսն ընդգրկել աշնանավարով.

զ) բամբակի ցանքերի ապահովվածությունն ապատային պարարտանյութերով յերկրորդ հնգամյակի ընթացքում ցանքերի տարածության 6 տոկոսից հասցնել մինչև 80 տոկոսի, ճակնդեղինը՝ ապատային պարարտանյութերով 6 տոկոսից մինչև 40 տոկոս, իսկ ֆոսֆորով՝ 9 տոկոսի վոխարեն՝ ամբողջ տարածությունը և լայն ծավալել էրիգացիոն աշխատանքները, վորոնցից հողերն ընդարձակելով մեկ միլիոն հեկտարով:

7. Համագումարը ահմանում է տրանսպորտի հիմնական տեսակների համար բեռնաշրջանառության հետևյալ աճը.—յերկաթուղային՝ 1932 թ. 169 միլիարդ տոնն–կիլոմետրից մինչև 300 միլիարդ տոնն–կիլոմետր 1937 թվականին, գետային տրանսպորտի՝ 26 միլիարդ տոնն–կիլոմետրից մինչև 63 միլիարդ տոնն–կիլոմետր, ծովայինը՝ 18 միլիարդ տոնն–կիլոմետրից մինչև 51 միլիարդ տոնն–կիլոմետր և ավտո–տրանսպորտինը՝ մեկ միլիարդ տոնն–կիլոմետրից մինչև 16 միլիարդ տոնն–կիլոմետր:

Բեռների փոխադրման աշխատանքը տրանսպորտի զանազան տեսակների միջև ավելի ռացիոնալ կերպով բաշխելու նպատակով, համագումարը մատնանշում է, որ անհրաժեշտ է յերկրում բեռների փոխադրման ու շինարարության բարձրացնել տրանսպորտի նոր տեսակների՝ ավտո և ավիո–տրանսպորտի տեսակարար կշիռը, ինչպես նաև ջրային տրանսպորտի, հիմնական դերը խաղալով յերկաթուղային տրանսպորտին:

8. Համագումարն ընդգծում է տրանսպորտի և կապի տեխնիկական վերակառուցման անհրաժեշտությունը, վորը պետք է կատարվի հետևյալ հիմնական ուղղություններով.—

ա) կարևորագույն յերկաքուղային գծերի վերակառուցման իրագործումը.—5 հազար կիլոմետր յերկաթուղային գծի էլեկտրիֆիկացիա, ամենից ավելի ծանրաբեռնված հիմնական մագիստրալներին զուգընթաց մոտ 9·500 կիլոմետր կրկնակի գծերի կառուցումը (Ուրալո–Կուզբասյան, Անդրբայկալյան, Ուսուրիյան յերկաթուղիները, Դոնբասի յերկաթուղիները և այլն). յեր-

կաթոդային հանդույցներում և կայարաններում կայարանային գծերի յերկարության ավելացումը 8·500 կիլոմետրով, թեթև տեսակի ռելսերը ծանրերով փոխարինելը մինչև 20·000 կիլոմետր յերկարության վրա· կամուրջների լայն չինարարություն, 8·300 կիլոմետր ցանցը սարքավորել ինքնակապով, ուժեղացնել գործող ուղիները (անցնել խճային բալաստի, ավելացնել յուրաքանչյուր կիլոմետրի ռելսականների թիվը և այլն)·

բ) լոկոմոտիվների պարկը 1932 թվի 19,5 հազար հատից հասցնել 24,6 հազար հատի 1937 թվականին, միաժամանակ անցնելով լոկոմոտիվների ավելի գործող և կատարելագործված տեսակներին, «ՓՁ» հզոր չոգեքարշը պետք է դառնա յերկրորդ հնգամյակում ապրանքատար չոգեքարշային պարկի հիմնական միավորը, իսկ «ԻՍ» հզոր չոգեքարշը—մարդատար չոգեքարշային պարկի հիմնական միավորը· ավելի լայն կիրառումն պետք է գտնեն ջերմատենացները և էլեկտրատենացները·

գ) վագոնային պարկի սմբը 1932 թ· 552 հազար հատից հասցնել մինչև 800 հազար հատի 1937 թվականին (յերկոտանիների հաշվով), զգալիորեն ավելացնելով մեծատեղ վագոնների տեսակարար կշիռը, լրիվ սարքավորելով վագոնների ամբողջ պարկին ինքնազլակներով և վագոնների պարկի առնվազն կես մասն ինքնակշռամով·

դ) իրականացնել նոր խոշորագույն յերկաթուղագծերի՝ Բայկալ—Ամուրի մագիստրալը, Ակմոլինսկ—Կարտալի, Մոսկվա—Դոնբասի, Կարագանդա—Բալխաշի, Ուֆա—Մագնիտնայայի և այլոց չինարարությունը, վորով յերկաթուղիների ցանցի ընդհանուր յերկարությունը 1933 թ· հունվարի 1-ի 83 հազար կիլոմետրից 1938 թվի հունվարի մեկին հասնելու է 94 հազար կիլոմետրի:

ե) Ջրային տրանսպորտի ասպարիզում պետք է իրագործվի արհեստական ջրային ուղիների — ջրանցքների հսկայական չինարարությունը.— Սպիտակծովյան—բալթիական ջրանցքը 227 կիլոմետր յերկարությամբ (առաջին հերթն ավարտված և յերկրորդ հնգամյակի առաջին տարում), Մոսկվա—Վոլգա ջրանցքը 127 կիլոմետր յերկարությամբ, Վոլգա—Դոն ջրանցքը՝ 100 կիլոմետր

յերկարությամբ, Մարինյան և Մոսկվա գետի ջրային սիստեմների վերակառուցումը, վորը գործող ջրային ուղիների վրա հիդրոտեխնիկական աշխատանքների մեծ ծավալի հետ միասին (անընդմեջ ուղի Դնեպրի միջով, Սուժ գետի շրջուղավորումը, Միջին Վոլգայի ռեկոնստրուկցիան) հիմնականում կապահովի ջրային ուղիների վերակառուցումը և ԽՍՀՄ յեվրոպական մասի միասնական ջրային սիստեմի ստեղծումը, վորը միացնում է Սպիտակ, Բալթիկ, Սև և Կասպից ծովերը: Նավարկելի ուղիների յերկարությունը յերկրորդ հնգամյակում պետք է 84 հազար կիլոմետրից հասնի 101 հազար կիլոմետրի, զգալի չափով բարելավելով նրանց նավարկելիությունը: Արմատապես պետք է վերանորոգվի և վերակառուցվի ծովային և գետային նավատորմը, նմանապես պետք է զարգացվի ծանծաղադնաց նավերի չինարարությունը՝ փոքր գետերի վրա ոգտագործելու համար:

զ) Ավտո—ճանապարհային տրանսպորտի գծով ավտոմոբիլների պարկը 1933 թվի հունվարի մեկի 75 հազար մեքենայից 1938 թվի հունվարի մեկին պետք է հասնի 580 հազար մեքենայի, կամ ավելնա համարյա 8 անգամ· պետք է զգալի չափով ծավալվի հողածածկ ճանապարհների և խճուղիների ցանցի չինարարությունը, հիմնականում վերացվի ճանապարհատրկությունը և յերկրի ընդհանուր ճանապարհային ցանցն ավելացնելով 210 հազար կիլոմետրով, չհաշված տեղական մլխոցներով կատարվելիք պարի չինարարությունը:

է) Քաղաքացիական ռազմավատորմի ասպարիզում մեծ քենական նշանակություն ունեցող ոդային հաղորդակցության գծերը յերկրորդ հնգամյակում 32 հազար կիլոմետրից հասնելու է 85 հազար կիլոմետրի, այսինքն՝ ընդարձակվելու է համարյա յերեք անգամ: Դրա հետ միասին պետք է լայն ծավալվի տեղական ոդային գծերի լայն չինարարությունը և 1937 թվ· շահագործվող գծերի յերկարությունը հասցվի 35 հազար կիլոմետրի:

ը) Վճռական տեղաշարժեր են կատարվելու բեռնաբարձման և բեռնաթափման աշխատանքի մեքենայացման բնագավառում.— մեքենայացումը յերկաթուղային տրանսպորտում ավելանալու է յերեք անգամ (18 տոկոսից հասնելու է 57 տոկոսի), ծովային—

նում՝ 14 տոկոսից հասնելու է 72 տոկոսի, դեռատյին տրանսպորտում՝ 12 տոկոսից 58 տոկոսի, այսինքն՝ ավելանալու է մոտ 5 անգամ:

բ) Համապատասխան ընդլայնում է կապի բոլոր տեսակների, մասնավանդ ռադիոյի մեծ զարգացման և կապի աշխատանքի վորակի արմատական բարելավման անհրաժեշտությունը:

9. Համաձայն տրանսպորտի նյութական-տեխնիկական բազայի ղգալի բարձրացման և աշխատանքի արտադրողականության աճման հսկայական հնարավորությունների ստեղծման, համապատասխան ծախսերի նվազման, վոր յերկրորդ հնգամյակում աշխատանքի արտադրողականությունը յերկաթուղային տրանսպորտում աճելու է 43 տոկոսով, ջրային տրանսպորտում՝ 86 տոկոսով, միևնույն ժամանակ ամբողջ տրանսպորտում ինքնարժեքն իջնելու է 40 տոկոսով, նույն թվում յերկաթուղային տրանսպորտում՝ 10,5 տոկոսով, ջրային տրանսպորտում՝ 36 տոկոսով և ավտոտրանսպորտում՝ 54 տոկոսով:

10. Տեխնիկական վերակառուցումն իրականացնելու, տեխնիկան յուրացնելու, աշխատանքի արտադրողականության առաջադրանքները կատարելու վճռողական պայմանը վորակյալ բանվորներ, տեխնիկներ ու ինժեներներ պատրաստելն է, սեփական պրոլետարական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու պրոբլեմի լուծումը: Դրա համաձայն համապատասխանում է յերկրորդ հնգամյակում կադրերը պատրաստելու հետևյալ ծրագիրը.

ա) Պատրաստել հինգ միլիոն մասնագիտական վորակավորում ունեցող աշխատող, վորից 2,5 միլիոն հոգի ֆարրզրծուսաններում, ավելի քան 1,5 միլիոն հոգի պետտրանսպորտության ստացիոնար դպրոցներում և դասընթացներում (տրակտորիստներ, բրիգադիրներ և այլն), և 700 հազար հոգի շոֆերների դպրոցներում և դասընթացներում:

բ) Յերկրորդ հնգամյակում տալ ԲՈՒՀ-երն ավարտած 340 հազար մասնագետ՝ առաջին հնգամյակի 170,7 հազարի փոխարեն, կամ յերկու հնգամյակի ավելի, և տեխնիկումներն ավարտած 850 հազար մասնագետ՝ առաջին հնգամյակի 308 հազարի փոխարեն, կամ յերեք անգամ ավելի:

գ) Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վորակյալ մասնագետների թիվը 2,7 միլիոնից հասցնել 4 միլիոն հոգու, կամ ավելացնել 46,5 տոկոսով, վորից արդյունաբերության մասնագետների թիվը 57 տոկոսով, տրանսպորտին և կապին— 60 տոկոսով և դյուղատնտեսության մեջ՝ կրկնապատիկը:

11. Համապատասխանում է գիտական-տեխնիկական ինստիտուտների և առանձնապես գործարանային լաբորատորիաների աշխատանքի ամենալայն ծավալման անհրաժեշտությունը: Գիտական-տեխնիկական և դյուտարար միտքը պետք է հզոր դենք դառնա նոր տեխնիկան արմատացնելու, արտադրության նոր տեսակները, հումքի և նենդրվելի ոգտագործման նոր մեթոդները կազմակերպելու համար:

2

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԳԻՐԸ

Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը և արդյունաբերության, դյուղատնտեսության ու տրանսպորտի արտադրական առաջադրանքների նախատեսված ծավալը պահանջում են յերկրորդ հնգամյակում իրագործել շինարարական վիթխարի ծրագիր:

Համ(բ)կ XVII համագումարը հավանություն և տալիս պետական պլանային հանձնաժողովի մշակած յերկրորդ հնգամյակի շինարարության ծրագրին և հաստատում է յերկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության գծով կատարվելիք կապիտալ աշխատանքների ընդհանուր ծավալը 133,4 միլիարդ ռուբլու չափով (1933 թվի դներով), առաջին հնգամյակի 50,5 միլիարդ ռուբլու փոխարեն:

Դրանից.—

ա) Արդյունաբերության ապարատում 69,5 միլիարդ ռուբլի, առաջին հնգամյակի 25 միլիարդ ռուբլու փոխարեն, վորից արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության բնագավառում 53,4 միլիարդ ռուբլի, 21,3 միլիարդ ռուբլու փոխարեն, կամ աճում 2,5 անգամ. սպառման միջոցներ արտադրող արդյունաբերության ապարատում՝ 16,1 միլիարդ ռուբլի, 3,5 միլիարդ ռուբլու փոխարեն, կամ աճում 4,6 անգամ.

բ) գյուղատնտեսության ապարելիում՝ 15,2 միլիարդ ռուբլի, առաջին հնգամյակի 9,7 միլիարդ ռուբլու փոխարեն, կամ ավելի քան մեկ ու կես անգամ.

գ) տրանսպորտում՝ 26,3 միլիարդ ռուբլի՝ առաջին հնգամյակի 8,9 միլիարդ ռուբլու փոխարեն, կամ աճում 3 անգամ:

Համադրումները մատնանշում են, որ ԽՍՀՄ ազգային տնտեսության և տրանսպորտի գծով կատարվելիք կապիտալ շինարարության նշված մեծ աճումը համեմատած ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետ, ապահովում է նրանց զարգացման ավելի արագ տեմպը:

13. Համադրումները ապահովում են, որ յերկրորդ հնգամյակում պետք է շահագործման հանձնվեն նոր և վերակառուցված ձեռնարկություններ 132 միլիարդ ռուբլի ընդհանուր արժեքությամբ, առաջին հնգամյակի 38,6 միլիարդ ռուբլու փոխարեն, այդ թվում արդյունաբերության մեջ 69,1 մլրդ. ռ., առաջին հնգամյակի 15,7 միլիարդ ռուբլու փոխարեն, գյուղատնտեսության մեջ 15,4 միլիարդ ռուբլու, 9,2 միլիարդ ռուբլու փոխարեն, և տրանսպորտում՝ 25,6 միլիարդ ռուբլի, 7,7 միլիարդ ռուբլու փոխարեն:

14. Կապիտալ աշխատանքների ապահովված ծավալը և նոր ու վերակառուցված ձեռնարկությունները շահագործման հանձնելու ծրագիրն ապահովում է Խորհրդային Միության արտադրական տեխնիկական հզորության յերիվարի աճումը և կարողության անհրաժեշտ ռեզերվների ստեղծումը ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերում, այն է.—

ա) Հնգամյակի ընթացքում հիմնական ֆոնդերի ընդհանուր գումարը 85 միլիարդ ռուբլուց հասնելու է 195 միլիարդ ռուբլու (1933 թ. գնելով), որը նշանակում է հիմնական ֆոնդերի ավելացումը 2,3 անգամ, այդ թվում արդյունաբերության բիրտում 25,5 միլիարդ ռուբլուց մինչև 77,0 միլիարդ ռուբլի, գյուղատնտեսության ապարելիում 11,4 միլիարդ ռուբլուց մինչև 22,6 միլիարդ ռուբլի և տրանսպորտի ապարելիում՝ 19,8 միլիարդ ռուբլուց մինչև 38,5 միլիարդ ռուբլի:

բ) Արդյունաբերության կարևորագույն ճյուղերի արտադրական կարողությունները պետք է ավելանան հետևյալ չափով.—սև մետաղագործությանը (թուլ)՝ 2,3 անգամ, ածխարդյունաբերությանը՝ ավելի քան յերկու անգամ, գեներատորների արտադրությանը՝ 2,4 անգամ, ավտոմոբիլային արդյունաբերությանը՝ մարթա չորս անգամ, չոգեքարշաշինական գործարաններինը՝ 3,2 անգամ, վագոնաշինական գործարաններինը՝ 3,9 անգամ, էլեկտրոկայաններինը՝ 2,5 անգամ, կոշիկի արդյունաբերությանը՝ 2 անգամ, թամբակեղենի արդյունաբերությանը՝ մեկ ու կես անգամ, վուշի արդյունաբերությանը՝ ավելի քան յերկու անգամ, շաքարի արդյունաբերությանը՝ 1,5 անգամ, մսի խոշոր կոմբինատներինը՝ 2,5 անգամ:

15. Համադրումները անհրաժեշտ են պահում առանձնահատուկ ուշադրություն կենտրոնացնել հետևյալ կարևորագույն կառուցումների վրա.—

Մեքենաշինության ապարելիում — ավարտել առաջին հնգամյակում սկսված շինարարությունները,—Ուրալի ծանր մեքենաշինության գործարանը 100 հազար տոննն կարողությամբ և կրամատորի գործարանը՝ 150 հազար տոննն արտադրականությամբ, Ուրալի քիմիական ապարատների գործարանը, Լուգանսկի չոգեքարշերի գործարանը, տարեկան 1080 «ՓԴ» չոգեքարշ կարողությամբ, Որսկի չոգեքարշերի և ջերմաքարշերի գործարանը, վորը տարեկան արտադրելու է 500 չոգեքարշ և 500 ջերմաքարշ, Կաշիրի էլեկտրաքարշերի գործարանը, վորը տարեկան տալու է 300 մագիստրալային էլեկտրաքարշեր, Ուրալի վագոնաշինական գործարանը՝ տարեկան 54 հազար չորսառանցի վագոնի արտադրությամբ, Կուզնեցկի և Իրկուտսկի վագոնաշինական գործարանները՝ յուրաքանչյուրը 10 հազար չորսառանցի վագոնի արտադրականությամբ, Ուֆայի մոտորային գործարանը՝ 50 հազար մոտորի արտադրությամբ, Խարկովի տուրբո-գեներատորային գործարանը՝ 1,5 միլիոն կիլովատ կարողությամբ, ընդարձակել Գորկու ավտոգործարանը մինչև 300 հազար մեքենա, Մոսկվայի Ստալինի անվան ավտոգործարանը՝ մինչև 80 հազար մեքենա, Յարոսլավլինը՝ մինչև 25 հազար 5 տոննանոց բեռնատար մեքենա և մյուսները: Ընկերորդ հնգամյակում կառուցել Ուֆա-

յի և Ստալինգրադի ավտոգործարանները, վրաոնցից յուրաքանչյուրը պետք է արտադրի 100 հազար հատ յերկաք տոննանոց բեռնատար, Սամարայինը՝ 25 հազար հատ հինգ տոննանոց բեռնատար, հզկող, չատաղաշ-գայլիկոնող, ատամանիվներ արտադրող, ավտոմատիկ և ծանր դասդյահների գործարաններ, գնդակավոր առանցքների նոր մեծ գործարան՝ 24 միլիոն հատ տարեկան արտադրանքով, կառուցել Ուրալի ելեկտրական սպրատների ու տրանսֆորմատորների գործարանը, տեքստիլ մեքենաշինության և մանրադրյունաբերության տարբեր ճյուղերի մի խումբ գործարաններ և այլն:

Ելեկտրիֆիկացիայի տարածքում կառուցել 79 յերջանային ելեկտրակայան, վորոնց թվում ավարտել Զուլֆայի ելեկտրակայանը 250 հազար կիլովատ հզորությամբ, Դորիոմովկի կայանը՝ 204 հազար կիլովատ, Շատուրի՝ 180 հազար կիլովատ, Դուբրովկի՝ 100 հազար կիլովատ, Սվիրի № 3 հիդրոկայանը՝ 96 հազար կիլովատ, Դնեպրոդզեսի ավարտումը մինչև 558 հազար կիլովատ հզորության, կառուցել մի շարք նոր խոշոր կենտրոնական ելեկտրակայաններ — Ստալինգորսկի՝ 400 հազար կիլովատ, Կեմերովսկի՝ 148 հազար կիլովատ, նոր հզոր հիդրոկայաններ Դնեպրաուսում. Զիրյանկի № 1 հիդրոկայանը՝ 170 հազար կիլովատ, Քանաբեևի՝ 88 հազար, Մրամ գետի վրայինը՝ 60 հազար, Սվիրյի № 2՝ 144 հազար, Տուլումի և այլն: Միջին Վոլգայինի (Средневолгстрой) հիդրոկայանների շինարարության ծավալումը — Ջուռավլև ուկի՝ 100 հազար կիլովատ, Գերմակի՝ 310 հազար կիլովատ և Գորիոմակի՝ 280 հազար կիլովատ, քաղաքների ջեռուցման համար կառուցել մի շարք խոշոր ջերմակենտրոններ — Մոսկվա—Նաբիմայինը և Ոխտոնսկայան՝ Լենինգրադում, Ստալինյան և Ֆրունզենսկը՝ Մոսկվայում, Սորմովա—Կանավինյանը, Կրասնոպրեսնոյանը՝ Մարկովում և այլն, մի շարք խոշորագույն ռայոնային նշանակության ունեցող ֆաբրիկա-գործարանային կայաններ — Մագնիտոգորսկինը՝ 198 հազար կիլովատ, Կուզնեցկինը՝ 108 հազար կիլովատ և այլն:

Ղարաճիայիի արդյունաբերության մեջ ծավալել խոշոր շինարարություն, շահագործման հանձնելով 178 շախտա, 143 միլիոն տոնն ածխի հանույթի կարողությամբ:

Նավթի արդյունաբերության ռայոններում կառուցել նավթաքաշման գործարանների մի նոր խումբ (նավթի նախնական մշակման 46 խողովակաձև սարք և 93 կրեգինգ), նավթի և նավթամթերքի խողովակների շինարարություն՝ ավելի քան 4 հազար կիլոմետր ընդհանուր յերկարությամբ:

Ծավալել տորֆի և թերթաքարերի արդյունաբերության շինարարությունը:

Սև մետաղագործության ռայոններում — ավարտել Մագնիտոգորսկի գործարանի շինարարությունը — 2,7 միլիոն տոննի թուջի կարողությամբ, Կուզնեցկի, Զապորոժեյի, Նիժնետագիլի, Աղովատալի, Կրիվորոժեյի, Լիպեցկու, Տուլայի գործարանները և այլն, ծավալել Բակալակի, Ֆալիլովկի, 2-րդ Կուզնեցկու, Հեռավոր Արևելքի գործարանների, ինչպես և խողովակաձուլական գործարանների շինարարությունը և գործարկել նրանց առաջին աղրեգատները:

Գունավոր մետաղագործության ռայոններում ավարտել Մերձբալխաշյան պղնձի կոմբինատը՝ 100 հազար տոնն, Միջին Ուրալինը՝ 50 հազար տոնն, ավարտել Ղազախստանի 60 հազար տոնն արճճի արտադրականությամբ բազմամետաղ կոմբինատի շինարարությունը, ցինկի գործարանները՝ Զելյաբինսկի և Որջոնիկիձե քաղաքներում, Ալտայի բազմամետաղ գործարանը, կեմերովսկի գործարանը և այլն: Ավարտել Վոլխովի և Դնեպրի ալյումինի գործարանների շինարարությունը, ալյումինի նոր գործարան կառուցել Ուրալում՝ 25 հազար տոնն և Կարելիայում՝ 8 հազար տոնն արտադրականությամբ. կառուցել մագնեզի, նիկելի և գունավոր մետաղագործության այլ ճյուղերի ձեռնարկություններ:

Քիմիայի ռայոններում կառուցել պարարտանյութերի նոր կոմբինատներ ու գործարաններ, սինթետիկ կաուչուկի գործարան, սոդայի, ծծմբաթթվի, ռեակտիվ, պլաստիկ զանգվածների, անիլինի և լաքի ներկանյութերի ու արհեստական թելի գործարաններ և այլն:

Թեթև արդյունաբերության ռայոններում կառուցել բամբակեղենի 15 նոր խոշոր գործարան, վորոնց թվում Տաշքենդի, Բարնաուլի, Խոջենթի, Զարյուլի, Անդրկովկասի բամբակեղեն գործվածքների կոմբինատները՝ յուրաքանչյուրը 200 հազար կիլո-

կի կարողությամբ. կառուցել բրդեղեն գործվածքների 12 խոշոր գործարան, վորոնցից յուրաքանչյուրը 8-ից մինչև 15 միլիոն մետր կտորեղենի կարողությամբ, 12 վուշեղենի ձեռնարկություն, վորոնցից յուրաքանչյուրը 18—27 հազար լիլեկ կարողությամբ, տրիկոտաժի արդյունաբերության 18 խոշոր ձեռնարկություն, մետաքսեղենի 11 գործարան, կոշկեղենի 21 գործարան՝ 100 միլիոն զույգ վոտնամանի կարողությամբ:

Սվերդլովի արդյունաբերության ասպարիզում ավարտել առաջին հնգամյակում սկսված 17 մսի կոմբինատի կառուցումը, ծավալել 23 նոր կոմբինատի շինարարությունը, կառուցել մեծ քանակությամբ չաքարի գործարաններ, ոճառի 6 գործարան, մեծապես ավելացնել ձկնարդյունաբերության ավարտումը, կառուցել պահածոների և ձկի գործարաններ, հրուշակարաններ և այլն:

Անտառարդյունաբերության մեջ կառուցել մեծ թվով սղոցատրաններ, փայտանքիմիական ձեռնարկություններ և այլն. ավարտել Կամայի և Կոնդոպոժի փայտանյութի ու թղթի կոմբինատի շինարարությունը, Սյասի փայտանյութի կոմբինատը, կառուցել Բաշկիրիայի և Կրասնոյարսկի թղթի կոմբինատները և այլն: Լայնորեն ծավալել լայն սպառման առարկաների տեղական արդյունաբերության հազարավոր ձեռնարկությունների շինարարությունն ու վերակառուցումը՝ հնգամյակի տարիներին ներդնելով մինչև յերկու միլիարդ ռուբլի:

Ղազախական շինարարության ասպարիզում լայն ծավալել հարյուրավոր արդյունաբերական կենտրոնները բարեկարգ քաղաքների վերածելու աշխատանքը, կառուցել հազարավոր տներ ու բնակարաններ՝ սարքավորված բոլոր հարմարություններով, վորոնց բնակելի ընդհանուր տարածությունը պետք է հասնի 64 միլիոն քառ. մետրի. ծավալել պլանավորման, քաղաքային տրանսպորտի, ջրամատակարարման ու կոյուղու, փողոցների ասֆալտապատման ու ծառատնկման և այլ աշխատանքներ. կառուցել խորհուրդների տներ ու տեխնիկայի տներ, կուլտուրայի ու հանգստյան պարկեր, ստադիոններ, թատրոններ, ակումբներ, կինո-թատրոններ, Մոսկվայում կառուցել Խորհուրդների պալատ, առաջին մետրոպոլիտենը ԽՍՀՄ-ում, վորի առաջին դիծը պետք է շահագործման հանձնվի արդեն 1934 թվականին:

16. Նոր շինարարության լայն ծավալման համար ուժեղացված ծրագիրը վճռական տեղաշարժեր է պայմանավորում արտադրողական ուժերի դասավորման գործում:

ա) Արդյունաբերական հին կենտրոնների զարգացման հիման վրա ընդլայնվում են նոր հենակետային բազաներ են ստեղծվում Միության Արևելյան շրջաններում (Ուրալ, Արևմտյան և Արևելյան Սիբիր, Բաշկիրիա, Հեռավոր Արևելյան Ճեփիը, Ղազախստան և Միջին Ասիա). ինտենսիվորեն զարգանում են մետալուրգիայի, մետաղագործության, ածուխը, նավթը, էլեկտրոէներգիան և արդյունաբերության մյուս ճյուղերը: Արևելյան շրջաններում ծավալվելու է ծանր արդյունաբերության նոր շինարարությանը հատկացվող բոլոր կապիտալ ներդրումների մոտ կեսը: 1937 թվականին արևելյան շրջանները տալու են չուգի արտադրության մի յերրորդ մասը՝ 1932 թվականի մի քառորդի փոխարեն, քարածխի հանույթի ավելի քան մի յերրորդը՝ 1932 թվականի մի քառորդի փոխարեն, էլեկտրոէներգիայի մոտ մի հինգերորդ մասը (շրջանային էլեկտրակայանների), 1932 թվականի 6,5 տոկոսի փոխարեն, մետալուրգիայի արտադրանքի մի տասներորդ մասը՝ 1932 թվականի 5 տոկոսի փոխարեն:

բ) Միության յերկրորդ ածխա-մետալուրգիական բազայի—Ուրալո-Կուզնեցկի կոմբինատի շինարարության ավարտումը, վորի շինարարության վրա յերկրորդ հնգամյակում ուղղվելու է ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների մոտ մի քառորդ մասը և ծանր արդյունաբերության բոլոր կապիտալ ներդրումների ավելի քան մի յերրորդ մասը: Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը պետք է 1937 թվականին տա սև մետալուրգիայի արտադրանքի մի յերրորդը, յերկրի ածխի ընդհանուր հանույթի մի քառորդից ավելին, շրջանային էլեկտրակայանների էլեկտրոէներգիայի արտադրության մեկ վեցերորդը և մետալուրգիայի արտադրանքի մոտ 10 տոկոսը:

գ) Արդյունաբերության մոտեցումը հումքի աղբյուրներին՝ նոր շրջանների զարգացման հիման վրա: Խոշորագույն տեղաշարժերի իրագործումը թեթև և սննդի արդյունաբերության զարգացման գործում.—յերկրորդ հնգամյակում կառուցվող բամբա-

կեղեն գործվածքների 15 կոմբինատներից տասի չինարարությունն ուրվագծվում է Մինչին Ասիայում, Սիբիրում և Անդրկովկասում, որը պայմանավորում է բամբակ ունեցող գործվածքների արտադրության աճը Մինչին Ասիայում համարյա 16 անգամ, իսկ ԽՍՀՄ-ում մինչին աճը լինելու է երկու անգամ. այդպիսով տեքստիլ արտադրության հատուկշռան բարձ է ստեղծվում այդ շրջաններում: Վուշի արդյունաբերության զծով վերամշակման հզոր բազաներ են ստեղծվում Ուրմոյան մարզում, Գորկու երկրամասում ու Բելոռուսիայում: Հումքի նոր բազաներ են ստեղծվում և նրանց հիման վրա իրականացվում է շաքարի նոր գործարանների չինարարությունը (Արևմտյան Սիբիր, Կիրկիզիա, Հեռավոր Արևելյան Ճերկիր, Անդրկովկաս և այլն): Գյուղատնտեսական հումքի արտադրության հիմնական կենտրոններում ծավալվում և կաշեղենի, բրդեղենի, ձիթհան և թելեև ու ոսկեղի արդյունաբերության այլ ճյուղերի չինարարությունը: Լայն չափով կաճի վառելանյութի տեղական տեսակների հանույթը, որը թեղմացնում է մի շարք շրջանների կախումը հեռավոր վայրերից փոխադրվող վառելանյութից:

դ) Գյուղատնտեսության բնագավառում — հացահատիկային արտադրության ղեկավար աճը հացահատիկային հիմնական շրջաններում, Անդրվոլգյան շրջանի լայն վարուցման աշխատանքի սկիզբը և ցրենի կայուն բազայի ստեղծումը կենտրոնական և հյուսիսային շրջաններում, տեխնիկական մշակույթների արտադրանքի հսկայական աճը դրանց արտադրության հիմնական շրջաններում՝ Սիբիրում ճակնդեղ՝ նոր բազայի ստեղծման հետ զուգընթաց, նոր բարձրարժեք մշակույթների լայն զարգացումը հատկապես ենթա-արևադարձային շրջաններում — ապահովում են գյուղատնտեսության հիմնական ճյուղերի ճիշտ զուգակցման խնդրի լուծումը և շրջանների մասնագիտացումն ըստ մշակույթների ու ճյուղերի:

ե) Տրանսպորտի բնագավառում.— Արևելյան և հարավային ուղղություններ ընթացող արտահանման հիմնական մատակարարների վերակառուցման ու ուժեղացման հետ միասին կատարել երկաթուղային և ջրային բազմաթիվ նոր ուղիներ, որոնք նոր

ինդուստրիալ կենտրոնները կապելու են Միության ընդհանուր տրանսպորտային ցանցին և հանդիսանալու են նոր շրջանների տնտեսական զարգացման հիմքը (Կարագանդա—Բալխաշ, Ուֆա—Ստերլիտամակ, Ռուբցովկա—Ռիդդեր, Տոմակ—Ջուլիմ, Սվերդլովսկ—բալթիական ջրանցքը և այլն):

զ) Արդյունաբերական նոր շինարարություն նախկինում արդյունաբերական տնտեսվարից աշխարհից հետամնաց շրջաններում, ինչպիսիք են Մինչին Վոլգան, Թաթարստանը, Հյուսիսային Կովկասը, կենտրոնական Սևահող մարզը, Անդրկովկասը, Կարելիան, Մուրմանի երկիրը, Հեռավոր Արևելքը, Արևելյան Սիբիրը և այլն,—այդ վայրերում խոշոր արդյունաբերությունը զարգացնելու հիման վրա:

է) Շինարարության ինտենսիվ զարգացումն ազգային հանրապետություններում ու մարզերում լուսավորության, առողջապահության, արվեստի ու մամուլի բնագավառներում:

ը) ԽՍՀՄ-ի հին արդյունաբերական շրջանների հետագա աճը՝ առաջին հնգամյակում սկսված մասնագիտացման խորացման և արդյունաբերության ներշրջանային ավելի հավասարաչափ դասավորման հիման վրա:

Համադրումարը նշում է, որ երկրորդ հնգամյակում արտադրողական ուժերի դասավորման համար սահմանվող ծրագրերն ապահովում է ազգային հանրապետությունների ու մարզերի տնտեսական ու կուլտուրական հետամնացության վերացումը, աստիճանական ուժերի ավելի հավասարաչափ դասավորումը և արդյունաբերության մասեցումը հումքի աղբյուրներին, հիմնական շրջանների մասնագիտացումն ըստ գյուղատնտեսական մշակույթների ու ճյուղերի, ամբողջ երկրի տնտեսական շրջանացման ավարտումը:

3

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ՖՈՒՆԿՑԻՈՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՐԱԳԻՐԸ

Գործազրկության վերջնացումը, բոլոր բանվորների ու ծառայողների աշխատանքով ապահովված լինելը, որը միևնույն ժամանակ հոգևրզային պահանջությունում սիստեմատիկաբար բա-

թելավիճում են նրանց աշխատանքի պայմանները, մինչև 7 ժամի իջեցված բանվորական օրը, նրանց արտադրական վորակավորումը և ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպատակով պայմանների ապահովությունը — այս բոլորը հնարավորություն են տալիս բանվորների ու ծառայողների ամբողջ մասսային անշեղորեն բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, ավելի արագ թափով առաջ ընթանալ՝ իրենց նյութական բարեկեցության բարելավման ուղիով։

Ցերկրորդ հնգամյակի ընթացքում գյուղացիական տնտեսությունների ամբողջ մասսայի կոլեկտիվացման ավարտումը, կուլակության վերացումը, կուլակային դիմադրության բոլոր և ամեն տեսակ վորձերի ճնշումը, գյուղացիների ունևոր և չունևոր խավերի չեզոքացվելու պրոցեսի դադարեցումը և այդ կապակցությամբ աղքատացման ու պրոլետարիզմի վերնչացումը գյուղում, յերբ մինչև այն ժամանակ կոլտնտեսությունները կազմակերպչորեն-տնտեսապես անչեղ կերպով ամրանում են և արտադրողն աճում է նրանց մեքենա-տեխնիկական բազան — այս բոլորն անհապաղորեն նոր խոշոր պայմաններ են ստեղծում կոլտնտեսական-գյուղացիական մասսաների նյութական մակարդակը արագորեն բարձրացնելու և կոլտնտեսականներին կուլտուրական ու ունևոր կյանքի հասցնելու համար և այդ վերելքի տեմպն ուղղակի կախման մեջ է դնում իրենց՝ կոլտնտեսականների կազմակերպչական-տնտեսական աշխատանքի արտադրողականությունից։

Համապատասխան դրան հավանություն տալով Գեոպլանի այդ մասին ներկայացրած նախագծին, համաձայնվելով հետևյալ խնդիրների և սահմանում բանվորների և գյուղի աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու մասին՝—

1. ա) Բանվորների և ծառայողների թվի աճը յերկրորդ հնգամյակի վերջին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում 26 տոկոսով, այդ թվում խոշոր արդյունաբերության մեջ՝ 29 տոկոսով։

բ) Ոչ պակաս աշխատավարձի աճումը 2 անգամ՝ պարզեվատային սպասումը վերջնականապես վերացնելու, ժողովրդական յեկամտի

արագ աճման, մսի, յուղի, ձկան, ձվի, չաքարի և նման մթերքների ու արդյունաբերական ապրանքների սպառման նորմանների 2,5 անգամով ավելացման, մանրածախ գների 35 տոկոսով իջեցման և աշխատավորության կենցաղային պայմանների հնարավոր բարելավման հիման վրա։

գ) Բանվորների և ծառայողների աշխատավարձի փոնդի աճը ժողովրդական ամբողջ անտնտեսության սպասվելիքում 55 տոկոսով, այդ թվում խոշոր արդյունաբերության սպասվելիքում՝ 64 տոկոսով։

դ) Բանվորների կուլտուր-կենցաղային սպասարկման վրա պետական ծախսումների դգալի բարձրացումը, այսինքն՝ սոցիալական ապահովագրության ծախսումների և բանվորների ու ծառայողների լուսավորության, առողջապահության և կուլտուր-կենցաղային սպասարկման վրա պետության ծախսումների բարձրացումը 4,3 միլիարդ ռուբլուց մինչև 9,3 միլիարդ ռուբլու — հնգամյակի ընթացքում ամ ավելի քան յերկու անգամ։

ե) Բանվորների և քաղաքի ու գյուղի աշխատավորության ընդգրկումը հասարակական սննդով ավելացնել յերկու և կես անգամ։

զ) Ցերկրորդ հնգամյակում ավարտել վոչ միայն Մոսկվայի բնակչության մոլլից անգրագիտության վերացումը, աշխատանակ հասակավոր բնակչության կիսագրագիտության վերացումը և ընդհանուր պարտադիր նախնական ուսուցման կիրառումը, այլ և իրականացնել ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկ ուսուցումը՝ յոթամյակի ծավալով՝ առաջին հերթին գյուղում, քանի վոր քաղաքում այդ խնդիրը հիմնականում արդեն լուծված և առաջին հնգամյակի ընթացքում. սովորողների թիվն ավելացնել (նախնական և մթնակարգ դպրոցներում, բանֆակներում, ֆաբզավուծուներում, տեխնիկումներում, ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-երում) մինչև 36 միլիոն հոգի, 1932 թվականի 24,2 միլիոն հոգու փոխարեն, կամ թե բնակչության 1000 հոգուն մինչև 197 հոգի՝ 147-ի փոխարեն, չհաշված նախադպրոցական կրթությունը, վորն արդեն 1932 թվականին ընդգրկում եր 5,2 միլիոն հոգու։

ե) Լայն զարգացնել մասսայական արտադրողական աշխատանքը, սերտորեն կապելով աշխատավոր մասսաների կուլտուրական հանդստի կազմակերպման հետ, ավելացնել ակումբային ցանցը ԹԽ քաղաքում և ԹԽ դյուղում մինչև 10,9 հազարի՝ 6,8 հազարի փոխարեն (քաղաքներում ավելացումը 10,5 տոկոսով, իսկ դյուղական վայրերում՝ 130 տոկոսով) և մասսայական դրազդարանների ցանցը մինչև 25 հազարի, 1932 թվականի 15 հազարի փոխարեն:

զ) Հետագայում զգալիորեն ուժեղացնել աշխատանքն աշխատավորության առողջապահության դծով և առաջին հերթին լայնորեն կիրառել սանիտարական–պրոֆիլակտիկ միջոցառումները· առողջապահության, բանվորական հանդստի և ֆիզկուլտուրայի վրա ծախսումները ավելացնել առաջին հնգամյակի 5,4 միլիարդ ռուբլուց մինչև 19,6 միլիարդ ռուբլի:

Հիվանդանոցային մահճակալների ածը քաղաքներում 44 տոկոսով, դյուղական վայրերում՝ 98 տոկոսով, մանկամսուրային տեղերի ածը քաղաքներում՝ 164 տոկոսով, դյուղական վայրերում՝ 129 տոկոսով:

թ) Հնգամյակի ընթացքում ջրմուղ ունեցող քաղաքների թիվը ավելացնել 336–ից մինչև 440–ի, կոյուղի ունեցող քաղաքներինը՝ 55–ից մինչև 125–ի, տրամվայ ունեցող քաղաքներինը՝ 50–ից մինչև 70–ի:

ժ) Դրան համապատասխան կոմունալ, բնակարանային և կուլտուրական շինարարության հատկապես ներդրումները յերկրորդ հնգամյակում ապահովել մոտ 32 միլիարդ ռուբլու չափով, կամ ԹԽ ՆՍՀՄ–ի ժողովրդական տնտեսության բոլոր կապիտալ ներդրումների մոտ մի քառորդը, այդ թվում բնակարանային շինարարության մեջ՝ 13,4 միլիարդ ռուբլի, քաղաքային կոմունալ շինարարության մեջ՝ 6,2 միլիարդ ռուբլի, լուսավորության մեջ՝ 3,1 միլիարդ ռուբլի, առողջապահության մեջ՝ 2,9 միլիարդ ռուբլի:

2· Բանվորների և դյուղացիների կյանքի նյութական մակարդակի բարձրացման խնդիրը պահանջում է տալ նրանց վարձատրության ապրանքաշրջանառության արդյունարե-

տական տրանսպորտի սերտացումն ավելացնելու և դյուղատնտեսական մթերքների քաղաքի մատակարարումը բարելավելու հիման վրա:

Դրան համապատասխան համագումարը սահմանում է.—

ա) Ապրանքաշրջանառության ածը յերկու և կես անգամ.— 1932 թվականի 31,9 միլիարդ ռուբլուց մինչև 80 միլիարդ ռուբլի 1937 թվին (1932 թվականի դներով), ԹԽ և անդի արդյունաբերության գծով արտադրվող լայն սպառման առարկաների արտադրությունը յերկու և կես անգամ ավելացնելով:

բ) Պետական–կոոպերատիվային մանրածախ առևտրի ցանցի ածը 37 տոկոսով, միաժամանակ ռեկոնստրուկցիայի վերակառուցելով այն:

գ) 1933 թվականի համեմատությամբ մանրածախ գների մինչև մակարդակին իջեցնել 35 տոկոսով:

3· Համագումարը ժողովրդական յեկամտի ածը սահմանում է 45,5 միլիարդ ռուբլուց մինչև 100 միլիարդ ռուբլի, կամ ԹԽ 2,2 անգամ, և ժողովրդական յեկամտում սպառման ֆոնդի ածը 2,4 անգամ, միաժամանակ հակադրական չափով ավելացնելով կուտակումները հանրայնացված տնտեսության մեջ, ինչպես նաև ավելացնելով պետական ռեզերվները:

Համագումարն ընդգծում է, որ տնտեսական դործունեության հիմքը պետք է կազմի ժողովրդական տնտեսության բոլոր ոլորտներում տնտեսվարման արմատացնելու համար մղվող պայքարը, պլանային–ֆինանսական կարգապահության ուժեղացումը, խորհրդային ռուբլու — քաղաքի ու դյուղի միջև տնտեսական կապերի ամրացման այդ կարևորագույն լծակի հետագա կատարելագործումը:

Համ(բ)կ XVII համագումարը սահմանում է, որ Միության Պետպլանի ներկայացրած և Համ կ(բ)կ կենտկոմի ու ՆՍՀ Միության ժողկոմխորհի կողմից ընդունված ժողովրդական տնտեսության զարգացման յերկրորդ հնգամյա պլանն ապահովված է.—

ա) Կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակար-

դերի լիակատար ավարտման և բոլոր անհրաժեշտությունների կոլեկտիվացման լիակատար ավարտման և բոլոր անհրաժեշտությունների կոոպերացման հիման վրա արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերջնական լիկվիդացիան, Խորհրդային Միության ևկոնոմիկայի բարգավաճության լիկվիդացիան և արտադրության սոցիալիստական հատուկ տեսակը վերջնական հաստատումը վերջնական հիմքի վրա, երկրի ողջ աշխատավոր բնակչության վերաճելով սոցիալիստական հասարակության ակտիվ ու գիտակից կառուցողների:

բ) ԽՍՀՄ-ի ժողովրդական ողջ տնտեսության առաջնակարգ վերակառուցման ավարտումը՝ առաջին հնգամյակի ընթացքում տեղծված և հետագա արագ վերելքի ուղիով ընթացող արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության (մասնավ արդյունաբերության) բարձրի վրա:

գ) Բանվորական և գյուղացիական մասսաների բարեկեցության աճելի արագ վերելք, ըստ որում բնակարանային և կոմունալ տնտեսության ողջ գործի վճռական բարելավումը ԽՍՀՄ-ում:

դ) Գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի հիման վրա պրոլետարական դիկտատուրայի տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդումը՝ կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիայի համար:

ե) Ցերկրի պաշտպանունակության հետագա ամրապնդումը:

Այդ խնդիրների իրագործումը, որը տանում է դեպի կապիտալիստական տարրերի վերջին մնացորդների արտամղումն իրենց բոլոր հին դիրքերից և վերջնական կործանման և դասակարգերի պատճառ նրանց, չի կարող առանց չդիմել դասակարգային պայքարի սրում, կուլակության կողմից կոլտնտեսությունները քայքայելու նոր փորձեր, հակախորհրդային ուժերի կողմից մեր արդյունաբերական ձեռնարկությունները վնասազործելու փորձեր: Մյուս կողմից՝ երկրորդ հնգամյակի խնդիրների իրագործումը, հնգամյակ, որը ժողովրդական ողջ տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու հիման վրա արդյունաբերությունը բարձրացնելու է բանվորական և գյուղացիական մասսաների կենսական մակարդակը, չի կարող չվերջնել աշխատավորության, չի կարող աշխատավորության լայն մասսաների — սոցիալիզմի կառուցողների մեջ — արտադրական ակտիվության վերելք և նոր տեխնիկային տիրապետելու առնող ձգտում չառաջացնել:

Անպղտքաբար ձախ ձախերով դասակարգային թշնամու հակահեղափոխական էլեմենտները և երկրորդ հնգամյա պլանի հաջողության կատարման համար համախմբելով սոցիալիզմի հարվածային ուժերի չարքերը, բանվոր դասակարգը, կոլտնտեսական մասսաները հետ մխոսին, կուսակցության գլխավորությամբ, վորն անդրդվար և մղում ամեն տեսակի ոպորտունիզմի դեմ, կհաղթահարի սոցիալիզմի չինարարության ճանապարհին ծառացող բոլոր և ամեն տեսակի դժվարությունները:

Համկ(բ)կ XVII համագումարը մատնանշում է, վոր երկրորդ հնգամյա պլանի, ժողովրդական տնտեսության ընդհանուր տեխնիկական վերակառուցման պլանի կատարումը պահանջում է ղրկի այնպիսի կազմակերպություն, վորի ժամանակ ապահովված լինեն —

Առաջին —Ամենօրյա տնտեսական գլխավարության ապիսակիվություն և կոնկրետություն, վորը չի հանդուրժում բյուրոկրատական խեղաթյուրումների հետ՝ տնտեսապարատում:

Երկրորդ — Լավագույն ինժեներա-տեխնիկական ուժերի կենտրոնացումն արտադրական վճռական վայրերում և վոչ թե Հիմնարկությունների պատահական կուտակում:

Երրորդ —Բանվորների աշխատավարձի հիման կազմակերպումը, վորն ապահովի աշխատանքի արտադրողականության ամեն նյութական խրախուսում:

Չորրորդ —Սոցիալիստական մրցության դործի բարձրացումը, առանձնապես նոր տեխնիկայի և նոր արտադրությունների լավագույն յուրացման նպատակով:

Հինգերորդ —Արտադրական ամուր կարգապահություն ինչպես արդյունաբերության ձեռնարկություններում և խորհանտեսություններում, նույնպես և կոլտնտեսություններում:

Վեցերորդ —Հեղափոխական զգոնություն պրոլետարական դիկտատուրայի թշնամիների դեմ և հանձնարարված գործի հա-

մարդ իսկական պատասխանատվություն բանվոր դասակարգի և նրա կուսակցության առաջ։

Ութերորդ.—Բանվորների և աշխատավոր գյուղացիների դասնքի հետագա ամրապնդումը։

Ութերորդ հնգամյակում ԽՍՀՄ-ն խոշոր քայլ է կատարում դեպի առաջ մարդկային հասարակության դարավոր հակադրության — քաղաքի և գյուղի հակադրության — վերացման գործում և ստեղծում է այդ հակադրության վերացման բոլոր անհրաժեշտ նախադրյալները։ Գյուղատնտեսությունն իր հատկական ճնով դառնում է արդյունաբերության հետ նույնատիպ։ գյուղատնտեսական աշխատանքը դառնում է ինդուստրիալ աշխատանքի մի այլաձևություն։ Հզոր կենտրոն առնում են քաղաքի և գյուղի տրանսպորտային կապերը, զգալի չափով մերձենում են արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրության ածի տեմպերը, մերձենում են քաղաքի և գյուղի աշխատավորության նյութական բարեկեցության և կուլտուրայի մակարդակները։

Ութերորդ հնգամյակում ԽՍՀՄ-ն դառնում է տեխնիկականտնտեսական տեսակետից անկախ յերկիր և տեխնիկապես ամենաառաջավոր պետություն Եվրոպայում։

Ութերորդ հնգամյակի կատարումն ե՛լ ավելի կուժեղացնի ԽՍՀՄ-ի նշանակությունը վորպես միջազգային պրոլետարիատի պայքարի նեցուկի, համաշն աշխարհի չահագործվող աշխատավորական մասսաների աչքին ե՛լ ավելի կբարձրացնի խորհուրդների յերկրի հեղինակությունը վորպես համաշխարհային պրոլետարական հեղափոխության հենակետային թաղայի։ Սոցիալիզմի շինարարության պատմական նոր մեծ հաղթանակներն ե՛լ ավելի կամրապնդեն Խորհրդային Միության մասսաների հզորության անտեսական հիմքը, նրա ընդունակությունը հետ մղելու և խորտակելու պրոլետարական պետության թշնամիների բոլոր վոտնձգությունները։ ԽՍՀՄ-ի հզոր անտեսական վերելքը և ԽՍՀՄ-ի աշխատավորների բարեկեցության անշեղ աճը, կապիտալիստական յերկրներում տիրող ճգնաժամի պայմաններում ե՛լ ավելի ցայտուն կերպով կապացուցեն անտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունները կապիտալիստականի հանդեպ և կապիտալիստական տրկության սիստեմի պատմականորեն մահվան դատապարտված լինելը, ե՛լ ավելի լիակատար կերպով կերևան կհանեն հեղափոխական պրոլետարիատի հսկայական ստեղծագործական ուժերը, պրոլետարիատ, վորն իր ձեռքն է վերցրել իշխանությունը և անդադար աճող սոցիալիստական հասարակության կառուցման համար մղվող հերոսական պայքարում ամրացնում է իր դիկտատուրան։

Համկ(բ)կ XVII համագումարը կուսակցության բոլոր անդամներից պահանջում է բոլշևիկորեն պայքարել յերկրորդ հնգամյա պլանի հաղթանակի համար և կոչ է անում բանվորներին ու կոլտնտեսականներին՝ համախմբվել կուսակցության շուրջը՝ այդ պատմական խնդիրը կատարելու համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Առաջաբան	3
I ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՅԵՎ ՎԵՐԵԼՔԸ . . .	13
1. Արդյունաբերության վերելքը և վերակառուցումը .	19
2. Գյուղատնտեսության վերելքը և վերակառուցումը .	29
3. Տրանսպորտի վերելքը և վերակառուցումը . .	39
4. Տեխնիկական վերակառուցման ավարտումը և յուրացման պրոբլեմը	44
II ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ	51
1. Նոր շինաարարությունն ըստ արդյունաբերության ճյուղերի	54
2. Շինաարարության նոր տեղադրումն ըստ շրջանների .	61
III ԱՇԽԱՏԱՎԱՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ	70
IV ՊԱՏՐԱՍՏ ՀՆԴԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	82
ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔԸ	96
ԸՆԿԵՐ ՄՈԼՈՏՈՎԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱԿԻ ԹԵԶԻՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ	103
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ (1933—37 թ.թ.) Համկ(բ)կ XVII համագումարի բանաձևն ընկ. ընկ. Վ. Մոլոտովի և Վ. Կույբիշևի զեկուցման առթիվ . . .	110

ՀԱՅ ՍՍՌ ...

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

317



В. МОЛОТОВ

ЗАДАЧИ ВТОРОЙ ПЯТИЛЕТКИ
ДОКЛАД XVII СЪЕЗДУ ВКП (б)

Партиздат, Эривань, 1934.

.85ξ

ՀՀ Ազգային գրադարան
NL0207483

32.244